



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

331.99
W-SI 19 NOV 2010
ԲՈԴՐԱՑ ԵՎ ՎԱԶԵՍՆՈՅ 20 JAN 2006

ԱՐՏՈՒՐ ՎԱՀԱԳՆԻ ԱՐՄԵՆԻԱ

ՀԻՒՍԻՄ ԱՐՄԵՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐ

1801—1829 թ.

ԱՎԱՐԱ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՐԱԿԵՄԵԿԻ ԹԻՇԱՑԿԻՆ



ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Վարդանեանց
Տիոգրաֆիա Մ. Վարդանյան, Վելձմ. սլ. ձ. № 7.
1901

11. 0. 203

19398


Рука

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

ՀՎՈԼԵՆՈ Պենզորօ. Տիֆլիս 26 գ. Փևր. 1901

230

936-52



Ճիշտ հարիւր տարի սրանից առաջ, այնէ 1801
թուականին, Վրաստանը Ռուսիայի ձեռքն անց-
նելուց յետոյ, Պարսկաստանը հանգիստ քոյն չու-
նէր: Նա զգում էր, որ վաղ թէ ուշ Ռուսիայի ահեղ
զօրութիւնը իւր վայ է զալու եւ ամեն ինչ խոր-
տակելու ու ոչնչացնելու է. զգում եւ համոզուած
էր, որ Կովկասի հարաւային երկրներն էլ կատ
թէ ուշ իւր ձեռքից զնալու են, ուստի եւ տեսնա-
յին արագութեամբ պատրաստութիւն էր տես-
նում, որպէս զի նաև քան Ռուսիայի քայլը, ինքը
սկսի եւ ինքը հարուած տալով հնացնի նրան
իւր երկրի սահմաններից: Նա զօրքեր էր ժայր-
վում ու կենդրոնացնում իւր սահմանագլխում:
Որանով էլ բաւական չլինելով, նայ սպասենա-
կութեամբ, որից մեծ երգիր էր կրում, քշում
տանում էր ղճակի Պարսկաստանը՝ սոքքը,
այս ինչ մօլլաները յայտնի յորդունչեր են
կարդում թուրք ազգանահնութեան ոք ու ոք

բազան պատեհազմ քարոզելով ոտի կանգ-
նեցնում տեղական թուրքերին հակառակ քրիս-
տոնեայ տարրի: Բայց Ռուսիան խաղաղաւում
հոգով տողորուած, դեռ չէր հաւատում թէ Պարս-
կաստանը, առանց մի որեւէ պատճառի, պատե-
րազմ կըսկսի իր դէմ, ուստի դեսպանութիւն էր
ուղարկում Պարսկաստան ամենախաղաղ նպա-
տակներով: Պարսկաստանը արեւելեան ազգերին
յասուկ քաղաքականութեամբ, բանակցութիւնը
երկար տարիներ շարունակ ծգգում էր ու ենքը
շարունակ զինում: Նիւթերը արդէն պատրաստ
էին: Մի փոքրիկ կայծ էր պէտք այդ նիւթերը
ունիվելու եւ այդ կայծը հեռու չէր: Հեռու չէր, այդ
ամենը գիտէին, թէ պարսիկները, թէ Կովկասի
ազգաքնակութիւնը եւ թէ Վրաստանի ոռոս կա-
ռավարիչները: սակայն Պատերքուրգի աօքունիքը
չէր հաստում դրան: Նա չէր ուզում զոր
արին թափել: Նա ինայում էր մարդոց կեանքը:
Հայ տարրն էլ զգում էր, որ վաղ թէ ուշ պիտի
զայ ազատութեան ժամը, վաղ թէ ուշ պիտի վերջ
որուն երանց տանջանքներին եւ նա աչքերը
ուածրած դէպի Էջմիածինը, դէպի իր Գահակալը,
սպասում էր այնտեղ մի ծայնի, մի նշանի, որ
ոտքի կանգնի ու կեանքը լնի քրիստոնեայ և
բայրների համար, սակայն այդ ծայնը դեռ չկար,
այդ նշանը դեռ չէր երևում, Էջմիածինը դեռ
որից բաներու էր զրադուած: Նա, կաթողիկո-
սական ընտրութեականը, զանում էր երկ-

պառակութեանց մէջ եւ չ'կար մէկը, որ հոգս
քաշէր տառապեալ հայ ազգաքնակութեան վէր-
քերը դարձանելու Տէր Հուկաս ծերունի կաթու-
թիկոսի 1799 թ. դեկտեմբերին վախճանութելոց
յետոյ, մինչդեռ Ռուսաստանի Առաջնորդ Յովաէֆ
Երկայնաբազուկ Արդութեան արքեպիսկոպոսը,
որ նշանաւոր եւ յայտնի դիքք ունէր գետեր-
քուրգի աքբունիքում, 1800 թ. յաջողեցրեց իրեն
կաթուղիկոս ծանաշել տալ եւ հետեւեալ 1801
թ. վետրուար ամսին մուտք գործեց Թիֆլիս
մեծ հանդիսով եւ մինչդեռ պատրաստում էր
գնալ Էջմիածին, Թիֆլիսի քաղանիքում լրդա-
նալուց յետոյ մըսեց, հիւանդացաւ եւ Մարտի 9-ին
կնքեց իր մահկանացուն: Այդպիսով Էջմիածնի
միաբանութեան համար նոր ասպարէզ քացուեց
Երկպառակութեան, որը պատմութեան մէջ «Դա-
ւիթ—Դանիէլեան» անուան տակ հոչակուեցաւ եւ
պատճառ դարձաւ երեք պետութեանց միջամտու-
թեանց այն է Ռուսաց, Պարսից եւ Օսմանցոց:
Մինչդեռ Էջմիածնի միաբանութիւնը ընտրել էր
Դանիէլին կաթուղիկոս եւ հրատիրագիր ուղարկել
եւորկեա քաղաքը նրան հրատիրելու, Դատիթը
յաղթութիւնը տանելով, 1801 թ. ապրիլի 28-ին
քոնութեամբ օծում է կաթուղիկոս եւ ոռուում
հայրապետական գաճը: Մեր վիսկագրութիւնից
դուրս լինելով նկարագրել Դաւիթ—Դանիէլեան
Երկպառակութեան մանրամասնութիւնը մենք կա-
րող ենք ասել միայն, որ վերջը յաղթութիւնը

տարաւ Դանիէլ Կաթողիկոսը, քայց ինչն էլ 1808 թ. Երեւանի բերդի մէջ կնքեց իւր քաջաշարչար կեանքը, իսկ հետեւեալ 1809 թ. ընտրուեց Եփրեմ Կաթողիկոսը, թէեւ Դաւիթը կըրկին ամեն կերպ աշխատում էր պարսից մեծամեծներին իւր կողմը ծգել եւ բռնի գահ քազմել։ Մինչ այս, Պարսկաստանը, Ռուսաց կաթողիկոսութեան միջամտութիւնը եւ նրանց հետզհետէ յառաջանալը ի նկատի ունեցած, պատրաստում էր դուրս քշել ռուսներին Կովկասից, այն ինչ Ռուսաց պետութեանը միծ վտանգ էր սպառնում։ 1811—12 թուականն էր։ Նապօլէոնը սկսել էր իւր արշաւանքը դէպի Ռուսիա եւ Ռուսիան էր Կովկասով զբաղուելու ժամանակ չունէր։ Այդ միջոցին ռուսական զօրքերը Կովկասում շատ քիչ էին եւ այն էլ ցորուած գանազան կողմը, այնպէս որ դրանց դրութիւնը խիստ խախուտ էր Կովկասում, երբ օգնութեան հասաւ հայ ազգաբնակութիւնը զլուի ունենալիք Ներսէս Աշտարակեցուն։ Ներսէս Աշտարակեցին դեռ աբեղայ եղած ժամանակ սկսել էր ցոյց տալ իւր եռանդուն գործունուելութիւնը եւ անյոդդող կամքը, ենթարկելով իրեն թէ Եփրեմ Կաթողիկոսին եւ թէ Էջմիածնի միաբանութեանը։ Մօտ 44 տարեկան հանակում Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցին 1814 թուին Վրաստանի առաջնորդութեան պաշտօնն ստանձնելով, ռուսաց պետական նշանաւոր անձանց հետ սերտ կապ կապե-

լով, հոգով եւ մարմնով նուիրուեց նախ Էջմիածնը Պարսից ռոնութիւնից ազատելու եւ երկրորդ իւր սիրեցեալ ազգի տառապանքները թեթեացնելու։ Այդ քանը զլուի բերելու համար նա չինայեց ոչ մի միջոց թէ խօսքով եւ թէ գործով, այն է այլ եւ այլ ժամանակ սպաշար հասցնելով ռուսաց զօրքին եւ յորդորներ կարդալով հայ ազգաբնակութեան։ Նա ծիզ էր թափում օգնելու ռուսներին այդ քաւական չէր, նա ամեն կերպ աշխատում էր կարգի ծգել հոգեւրական դասը, դուրս քերելով նրան տպիտու։ Թեան խափա եւ այդ քանի միակ դարման գտաւ Ներսէսին Դպրոցի կառուցումը, որը գոյութիւն ունի ահա 75 տարից էլ աւելի։

1825 թ, Աղէքսանդր Ա. կայսը վախճանուելով նրա տեղ գահ նատեց նորա երկրորդ եղբայր Նիկողայոս Պալովիչը։ Այդ միջոցներին Պարսկաստանի Արաւ—Միրզան կարծելով թէ ինչ ինչ յեղափոխութիւններ պիտի ժագեն Ռուսիայում եւ պատճառ դառնան ներքին խոռվութեանց, ամեն պատրաստութիւններ տեսած, զօրքերը գունդագունդ սահմանագլուխ ուղարկեց։ Կովկասի կառավարչապետ Երմոլովը նկարագրում էր այդ քոլորը եւ արքունիքից օգնութիւն խնդրում։ Սակայն Պետերբուրգի արքունիքը չէր հաւատում թէ Պարսկաստանը այդպիսի նենզաւոր քայլ կանի, քանի որ երկու պետութիւնների մէջ էլ քանազնացութիւն էր սկսուած սահման։

ների համար: Սակայն մինչ այս մինչ այն 1826
թ. Յուլիսի 16-ին Պարսից զօրքերը ահագին քա-
նակութեամբ թափուեցին Փամբակի եւ Շո-
րագեալի սահմանները, ջարդեցին ոռւսաց սա-
կաւաթիւ վաշտերը. կոտորելով հայերին եւ թա-
լանելով նրանց գիւղերը: Գըեթէ նոյն օրը Աքաս—
Միրզան էլ 60 հազար զօրքով մտաւ Ղարաբաղ:
Եւ Ռուս—Պարսկական պատերազմը դարձաւ ան-
խուսափելի:



ՀԻՒՍԻՍԻ ԱՐԺԻՒԼ

Ա.

ՀԱՌԱՉԱՆՔԻ ԵՒ ՏԱՆՉԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԸ

Տասն և իններորդ դարի սկիզբն էր: Հայոց
աշխարհի ցուրտ ձմեռը վերջանում էր: Լոել
էր սառը քամին. նա էլ չէր երգում, հառա-
չանքներ չէր հանում ու կատաղի գաղանի
նման ոռնում, այլ շունչը կտրած պահուել էր, թագ-
նուել ու տեղի տուել գալնան կենսատու եղանակին:
Թմրած կեանքը արթնանում էր, ընութիւնը զարթ-
նում և տեղի տալիս եռուն և աշխոյժ կենդանու-
թեան: Բայց ընութեան հրաշափառութիւնը չէր հա-
մապատասխանում մարդոց սրտերի տրամադրութեանը:
Մի տեսակ շարագուշակ շշուկ պտտում էր մարդկանց
սրտերում, որը ցաւեցնելու չափ կսկիծ էր ազդում
նրանց սրտին: Հառաշանքներ էին դուրս թռչում
հայերի սրտերից ու նրանք ահ ու դողով սպասում

էին գարնան գեղածիծաղ օրերին, որտեր փոխանակ կինդանութիւն աւետելու, պիտի բերէին իրանց հետ հառաջանքի և տանջանքի օրեր... Ե՞նչն էր ժողովրդին յուսահատեցնողը, ինչ շարադուշակ դէպք նըրանց ձգել էր յուսահատութեան և երկիւղի մէջ—յայտնի չէր, սակայն մի տեսակ խուզ, անորոշ շնչիւն պատում էր բերնէ բերան և նրանց աւելի յուսահատեցնում... Գիւղացին էլ չէր շտապում դաշտ իւր հողը վարելու, իսկ քաղաքացին լուռ իւր ոսկին և արծաթին էր ժողովում ու խոր գետնի մէջ թաղում.

Եւ զուր չէր հայերի ան ու երկիւղը՝ պարսիկներն ու թուրքիրը իրանց սրերն էին սրում, հրացանները սրում ու ատամները կրծտացնելսվ սպասում այն բովէին երբ հրաման պիտի ստանան սրախողխող անելու բոլոր գետուրներին, որոնք ապրում են Շահի երկրներում: Նրանք սպասում էին ցանկալի այդ նշաննին՝ սկսելու կոտորածը և իրենց վրէցը թափելու անպաշտպան հայի գլխին, որը դարերից ի վեր բնակիուելով. իւր բնիկ հայրենիքում, կրում էր նրանցից սոսկալի տանիջանքներ և լուր հեկալով իւր սև բաղտը ողբում... Քայց այժմ հատել էր ժամը, մահուան և կեանքի ճգնաժամը: Դարերից ի վեր նա լուսիթեամբ տուել էր պարսկին ու թուրքին իւր գոյրը ու կարողութիւնը, նա լուռ, սրակ կոկիծով տարել էր իւր ընտանիքի պատուի վիրաւրանքը, երբ իւր կինն ու զուստը, պարսկի տըռփանքին զո՞ն էին գնացել, երբ իւր սիրասուն զաւալին իւր աշքել առաջ էին մորթել, բայց այժմ հա-

մել էր ժամը... Ահաւոր ժամը վրէժինսկիր լինելու իւր գարաւոր բարբարոս թշնամուց և թօթափելու ծանը լուծը: Եւ Պարսիկները այդ զգում էին, նրանք այդ հասկանում էին և աւելի բարբուրում, աւելի կատաղում: Նրանք հասկանում էին որ այն ազգը, որին գարերից ի վեր թակել էին, տանջել էին և նրանց գոյրն ու կեանքը իրենցը համարել. այսօր թէ վաղը պիտի խուսի իրենց ձեռքերից և իրենք յափտեան պիտի զրկուին գրանից: Եւ զուր չէր գրանց երկիւղը: Հեռու հիստիառ երկզիլսեայ մի Արծիւ էր երեացել, որը բազմաշարար աղջի տանիջանքը տեսնելով, զալիս էր զուրն պոկելու բարբարուների ձեռքերից և նրանց կեանիքի և գոյրի ապահովութիւն տալու: Պարսիկները տեսնում էին երկզիլսեայ Արծիւը և սոսկում, որոնք կատաղած արժան չէին ուղում ծախել այդ անուշ պատտուը: Մինչդեռ պարսկական զօրքերը կաղմ և պատրաստ հեղինգում էին դէպի Վրաստանի սահմանները, Կովկասի տեղական թուրք բնակիչներն էլ խմբեր էին կազմում և սրերը սրում աւարառութիւնները սկսելու: Նրանք իրենց ընտանիքները ուղարկում էին դէպի անմատչելի լեռներն ու ծերպերը և իրենք անհամբեր սպասում նշաննին: Եւ այդ նշանը տրուեցաւ... Մոլլանները մզկիթներում յայտնի կերպով սկսեցին գոյրուի թուրքերին՝ կոտորել անխնայ հայերին, առանց ինայելու սեռին, մանկան ու ծերին... Եւ նրանք սկսեցին աւարն ու կոտորածը: Դարնան գեղածիծաղ եղանակը ունացաւ հայերի զրխին և նրանց այրուող գիւղերի ծուխը սկսեցրեց պատ-

ծառ երկինքը։ Հայերը խումբ — խումբ, սարսափած սկսեցին ցրուել դէպի հիւսիս, այնտեղ ուր սաւառնում էր երկգլխեան Արծիւը և իրանց ազաշաւոր ձեռքերը տարածելով դէպի նա՝ օգնութիւն հայցել.,, Յոյս ու հոգի էր ներշնչում երկգլխեան Արծիւը հայերին և նրանք աղօթում էին Բարձրեալն Աստծուն արիութիւն Արծւի թերին, որ իրանց օգնութեան համնի. Աստուած լսեց հայերի ջերմեռանդ աղօթքը և երկգլխեայ Արծիւը սլացաւ դէպի Ս. Եջմիածինը, դէպի հայութեան կենդրոնը...
—————

Բ.

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ

Փաշպէս մի վիթխարի, Վարդարլուր լիառը դուրս էր ցցել իւր կուրծքը Լոռուայ սարահարթի միջից և լուռ նայում էր իւր շուրջը գտնուած բարձրաբերձ սիրուն լիւներին. Նրա գագաթին Կորիկեր հայոց թագաւորը դեռ 499 թուականին Աշոտ Մարզպանի ձեռքով կառուցել էր երկու եկեղեցի իւր հոգւոց թուղութեան համար, բայց, հոգուց զատ, նա շտապել էր այդ դուրս ցցուած բլրակի գլխին կառուցանել մի բերդ թշնամիների դէմ պաշտպանուելու համար։ Այն օրերից անցել էին դարեր,.., Կորիկեր հայոց թագաւորի և Աշոտ Մարզպանի աճիւները վազուց մոխիր կտրած հանգստանում էին հողի մէջ և նրանց կառուցած բերդի և եկեղեցիների փշրանքները միայն մնում էին այդ սիրուն բլրի զաղաթին, երբ մի խումբ փախստականներ, իրենց մայրենի երկրից հարածուելով, եկել կանգ էին առել Վարդարլուրի վրայ և ապաւինել Կորիկեր թագաւորի բերդի փշրանքներին, ուր գիշերները սաւառնում էր Կորիկերի ուրուակմնը և նայելով փախստականների թշուառութեանը դառնագին լալիս էր և արևի անդրանիկ կճնատու ցուշերը դեռ չգցած իջնում մութ գերազման և խորը հառաջում.,,

Գիշեր էր, մութ, ահաւոր գիշեր նոր որ հեռուն, բարձրաբերձ կանաչազարդ լեռների գլխին, փայլվում էր փայլակը և ապա լուսում խուլ որոտածութը, որը մի տեսակ անորոշ, բայց ահաւոր սառսուռ էր ագդում մարդու սրտին: Փայլմունքի վայրկենական լոյսի տակ, մի ակնթարթ միայն, երկում էին հեռու լեռներն և ապա կրկին ընկղմուամ խորին խաւարի մէջ: Ոչ մի ձայն, ոչ մի շուկ չէր լուսում Վարդարլի գլխին, փորբիկ տափարակի վրայ, աւերակ բերդի և մատուռների միջից, ուր ժողովուած էին մի քանի հարիւր փախստական հայեր, կին, մարդ, երե. խայ և անասուններ, որոնցից մի քանիսը արդէն խոր ընի մէջ էին ընկղմուած, իսկ մի քանիսը թեր ընկած այս և այն պատի ու ժայռի վրայ, լուռ մտածում էին... Հինգ թէ վեց հոգի բլրի զանազան անկիւններում պահպանութիւն էին անում և լուրջ հոգում, որ թշնամիները յանկարծ յարձակում չ'գործեն: Պահպաններից մէկը բարձրաթիւնը, թխաղէմ երիտասարդ էր, մօտ քանինինգ տարեկան հասակի, որը բրի հէնց գաղաթին, լերկ ժայռի վրայ թիկն տուած նարում էր իւր սորերի տակ: Գիշերային խաւարի մէջ նրա աշքերից կարծես կրակներ լինէին ցայտելիս և նա տեսանելիքն ու լսելիքը լարած լուրջ հոկում էր շուրջը և իւր սուրբ պարտականութիւնը կատարում, նա ըմբռնում, հասկանում էր իւր հոյրենակիցների թշուառ գրութիւնը, նա հասկանում էր պահպանի բուն նշանակութիւնը, նա գիտէր որ մի հարէւր հայրենակիցների կեանքն ու փրկու-

թիւնը պահպանների աշալրջութեանն է յանձնուած, ուստի և ուզում էր արդարացնել, որ ինքը յիբաւի արժան է այդ փստահութեան, որ ինքը պատրաստէ իւր կեանքը դնելու իւր հայրենակիցների փրկութեան համար: Առանը (որի ազգանունը փոխել էին անուան), իւր հրացանի կոթը պինդ բռնած, եափուննուած, իւր հրացանի կոթը պինդ բռնած, եափուննուած, ժայռի գլխից դիտում էր հեռուն,, ները խրած, ժայռի գլխից դիտում էր հեռուն,, բայց հեռուն ոչինչ չէր երևում. մի վայրկիան միայն, բայց հեռուն ոչինչ չէր երևում. մի վայրկիան միայն, երբ լուսաւորում էր փայլակը, նա լայն բացած աշքերով, առաջն էր նայում, ամեն կասկածելի բան աշբի տակով անցկացնում և ապա կրկին տիրում էր խաւարը, իսկ երբ լուռ էր որոտը և տիրում ահարկու եւորին լուսաւորը, այն ժամանակ նրա ականչին կու եւորին լուսաւորը, այն ժամանակ նրա ականչին պարզ հասնում էր հեռու, խոր ձորի մէջ զլորւող Գերեստ զետակի խուլ, բայց պարզ խոխոչելու ձայնը:

— Զէ անիծուած թուրքերի նշոյլ չկայ, նրանք չեն համարձակուի այս կողմը գալու, մոմռաց ինքն Սուլանը և ակամայից յետ նայեց, ուր ցցուած իրեն Սուլանը և ակամայից յետ նայեց, ուր ժանիքները: Էին անիսօս պարիսսպների սուր սուր ժանիքները: Սուլանի սիրտը մի տեսակ կսկծաց, շփոխուեց երբ նայեց հին հին պարիսսպների ժանիքներին: Նա քիշ հայեց հին հին պարիսսպների ժանիքներին: Նա գիտ կարգացած էր, հասկանում էր թէ ում ձեռաշատ կարգացած էր, հասկանում էր թէ ում ձեռաշատ կերտն են գորա, ուստի և մի հառաջանք դուրս թռաւ նրա բերանից, ու ինքն իրեն կուկին մրմրաց — թռաւ նրա բերանից, ու ինքն իրեն կուկին մրմրաց — Մինչև երբ Երարիշ Սոսուած, մինչև երբ մինչ պիտի Մինչև երբ Երարիշ Սոսուած, մինչև երբ մինչ պիտի անօրէնների ձեռքին, այս չուրը, այս տանջութիւր անօրէնների ձեռքին, այս չուրը, այս հայրենակիցները պազուած են մեր նախնիք հոգը, այս պարիսսպները պազուած

ների արիւնով և մենք կրկին ողողում ենք... Բայց հասաւ ժամը, Հիւսիսի Արծիւը սլանում է դէպի մեզ և մենք շուտով աղատութիւն կտանանք և կըլիրջանան մեր տանջանքները... Ներսէս... Աստուածափյլ Ներսէս... Խուզ գրդիմը ընդհատեց նրա մտքի թիւը և նա ակամայից երեսը խաչ հանեց:

Անցաւ մի քանի բովէ, Ասլանը մտազբաղ ցած էր նայում, երբ փայլակի լոյսի տակ նկատեց մի ինչ որ սկ առարկայ, որը կարծես դէպի լեանն էր սողում: Երկրորդ փայլի լոյսի ժամանակ նա ուշազբութեամբ նոյն տեղին նայեց, բայց սկ առարկան այնունոյն տեղը չնկատեց: Կասկածը պատեց Ասլանին և նա աչքերը բացած մթութեան մէջ այն կողմն էր նայում և աշխատում լսել դէթ կասկածելի մէջունչ կամ ձայն, բայց հակառակի նման որտեղից որ էր քամին սուրալով անցաւ Վարդաբլրի վրայով և շոյելով Ասլանի դէմքը, ոլցաւ առաջ...

— Ե՞... փորձանքը մօտենում է, ինչպէս երեսում է մենք շրջապատումք ենք լրտեսներով, ասաց ինքն իրան և հրացանի նիկն ուղղեց, ապա առանց շշուկ հանելու անցաւ մօտակայ պահապանի մօտ, նրան զգուշացրեց և կրկին իւր տեղը դարձաւ: Որոտը հետզհետէ սաստկանում էր և փայլակները մինը միւսի յիտից փայլում:

Քիչ ժամանակ անցաւ և Ասլանը նկատեց, որ իրենից մի փոքր հեռու, մերկ սուրը ձեռքին, բարձրանում էր մի ինչ որ մարդ, կասկած չկար որ եկողը իրենցից չէր կարող լինել, այլ թշնամի էր,

ո՞յլ գալիս էր կամ լրտեսելու կամ պահապաններին սպանելու և Ասլանը առանց երկար սպասելու հրացանը դէպի նա ուղղեց և երբ փայլակը կրկին լուցաւորեց նա նիկը քաշեց և արձակեց: Բայց նա նշանից վրիպեց: Եկող մարդը մի քանի թոփչը արաւ և անյայտացաւ խորին խաւարի մէջ, այն ինչ փախստական խմբի միջից 40 - 50 մարդիկ գուրս թըռան և բանեցին լեռան այս ու այն կողմը:

— Ի՞նչ էր, ով էր հարցնում էին Ասլանին ամեն կողմից:

— Աստուած վկայ, Թուրք Նազին էր առաջ կանգնած, ասում էր Ասլանը, նա մերկ սուրը ձեռքին բարձրանում էր լեռան գլուխը, երեխ մենակ չէ, առաջ ինքը եկել էր լրտեսելու, պէտք է հետեւ նրան:

— Ոչ, աւելորդ է, ասաց հասակաւորներից մէկը, լեռան գլուխը պէտք է լաւ պահպանել մինչև առաւտ, իսկ առաւտ այսաեղից պէտք է բոշել դէպի Հաղբատայ ձորերը:

— Մենք բոլորս կը հսկենք, կանչեցին այս ու այն կողմից կտրիչ երիտասարդները և Ասլանի կարգագրութեամբ լեռան գազաթը ամուր շղթայեցին, Թշնամին և թէ լիներ տասն անդամ աւելի, էլ դրանց վնաս չէր կարող տալ: Եւ յիրաւի թշնամին այն գիշեր էլ չերեաց: Որոտը իր որոտմանքը շարունակեց, բայց երբ բացուեց կինսատու առաւտը նա լուց և կորաւ բարձրաբերձ լեռներից էլ հեռու...

Գ.

Ա.ԱԼԱՆ

Որը բացուեց... Լոռուայ հրաշալի լեռները թաւ-
շեայ կանաչով պատած, զուրս ցցեցին իրենց պիեճ
կուրծքերը. Վարդարլուրն էլ ցնցուց և իր կատարին
տպաւինած փախատականներին արթնացըց. Մի քա-
նի հարիւր հոգի այս ու այն անվիւններից դուրս
թափուեցին և սկսեցին ճանապարհի պատրաստու-
թիւններ տեսնել: Երկար չէր նրանց պատրաստու-
թիւնը: Հարսները շտապով կաթը կթեցին, երեխա-
ներին ծիծ տուին և ապա շալակներին պինդ կասկե-
ցին: Երիտասարդների մի խումբ իրանց ձիերի թամ-
քերը պատրաստեցին և սրերն ու հրացանները կարգի-
րին: Խմբի գլխաւորը՝ Օհանէս ապին, որը մօտ
60 տարեկան մարդ էր, խանշալը գօտիում կապած,
չին չախմախ թուանքը ուսին, շարունակ այս այ-
խմբին էր մօտենում ու շտապեցնեւմ: Ապա նա մօ-
տեցաւ այն խմբին ուր կանգնած էր Ասլանը և լուռ
հռուն էր զիտում:

— Ասլան, քեզ մատաղ, դու մեր հիւրն ես, և իրա-
ւանեք չունիմ, բայց մեր ճանապարհները մի է, դու
ձիւոր ես, մենք ոտաւոր, առ հետդ չորս հինգ ձիա-
ւոր և առաջ անցէք, թշնամու զիրքերը զիտեցէք
և ժամանակին մեզ խմաց տուէք, մինչև տեսնենք

Աստուած էլ ինչ պատուհաս է բերում մեր զլիսին:
— Հիւրս որն է, Օհանէս ապի, դուք ամենքդ մեր
եղբայրներն ու քոյրերն էք և ես պատրաստ եմ կեանքս
դնելու ձեզ համար. Նևդ օրերին լայն օրեր էլ կան
Աստուած ողորմած է կանցնին տառապանքի և վշտի
օրերը և կրգան ուրախութեան օրեր:

— Այս, ուր էր թէ այդպէս լինէր, ասաց Օհանէս
ապին և խոր հոգոց քաշեց. զուխտ արցունքներ ըն-
կան նրա աչքերից, որը անտես չմնաց Ասլանից:

— Մի լար, մի յուզուիր, Օհանէս ապի, զիտեմ,
տունկ տեղդ քանզուեցաւ, զիտեմ, սիրուն զաշտերդ
մնացին Շորագեալ, բայց կրգայ ժամանակ երբ նո-
րից կվերադառնաս այնտեղ և հանգիստ, հեռու պարս-
կական բռնութիւնից քո վերջին օրերը կանցկացնես:
Հեռու չէ այն օրը, Ռուսաց յաղթական զօրքերը շտ-
տով կ'ջարդեն պարսիկներին և հայերին ազատու-
թիւն կրտան:

— Ոյժ և կարողութիւն նրանց թիւերին, ասաց
Օհանէս ապերը և ապա գլխարկը վերցնելով, աշքերը
գէպի երկինք դարձրեց ու կանչեց.— Ողորմած Աս-
տուած, խզայ հայ ազգին, Ռուս քրիստոնեայ թա-
գաւորին տուր երկար կեանք որ ազատի մեզ դարեւոր
տանցանքից:

— Ամէն, կրկնեցին մի քանիսը:

Սյդ ժամանակ Կորիկեր հայոց թագուորի շ-
նած մատրան զանգը զողանջեց. Ամենքը գլխարկները
հանցին ու շտապեցին գէպի այն կողմը. Մատրան
մէջ քահանան սկսեց առաւօտեան ժամերգութիւնը և

զիւ ձայնով սկսեց Առաւոտ Լուսոյ» շարականը:
Փախստականների մի մասը արդին խռնուած էր եկեղեցում, իսկ միւս մասը գուրսը ծունկ չոքած՝ լուռ ձայնակցում էր տէրտէրի եղանակին: Կին, երեխայ, աղջիկ ու մարդ խառնուել էին իրար հետ ու զերմեռանդ աղօթում էին: Երբ վերջացաւ ժամերգութիւնը, ամենքը ոտքի ելան և սպասում էին Օհանէս ապօր հրամանին: Ասլանը մօտեցաւ նրան:

— Մենք պատրաստ ենք Օհանէս ապէր, ասաց նա:

— Գնացէք, տէրը ձեղ հետ. մրայն շատ հեռու չըդնար, Օձնայ գիւղի մօտ սպասեցէք մեղ, այս գիշեր այնտեղ կիշեանենք:

Ասլանը երեք ուրիշ ձիաւորների հետ ցած իջաւ բլրից: Քիչ յետոյ ցած իջաւ խումբը և ճանապարհ ընկաւ գէտի Օձուն գիւղը: Այստեղ հարկաւը է մեղ կանգ առնել և նկարազրել թէ ինչ խումբ էր, որտեղից և ուր էր զնում դա:

1801 թուին Վրաստանը Ռուսաց ձեռքն անցնելուց յետոյ, Կովկասի հարաւային մասը գտնուում էր երկունքի մէջ և ոռւսաց ու պարսից անընդհատ պատերազմների ասպարէկ ծառայում: Երկանայ, Շռագեալի ամրող վիճակը քարուքանդ էր լինում: Պարսիկները նկատելով որ ոռւսական զօրքերը վաղ թէ ուշ պիտի խլեն այդ երկիրը և բացի դրանից նկատելով, որ հայ տարրը աւելի հակումն ունի դէպի Ռուսիան, որպէս Քրիստոնեայ պետութիւն և յայտնի թէ անյայտ կերպով աշակցում է ոռւսաց, խումբ

խումբ յարձակւում էին հայ գիւղերի վրայ, աւերում, սպանում, կողոպտում և հրոյ ճարակ գարձնելով գիւղերը, կենդանի մնացածներին գերում էին ու տանում դէպի Պարսկաստանի խորքերը: Բայց հայ տարրը քնած չէր. նա լաւ էր համարում մեռնել պարսկի սրից, քան գերի գնալ նրան և ոգեսրորած ռուսներով մինչև վերջին շունչը կռւում էր պարսիկների գէմ և կամ փախստատ տալով աղաւինում դէպի Վրաստանի սահմանները, ուր աւելի աղանով էր և պարսիկները չէին համարձակւում ոտք դնելու:

Եյդ փախստական խմբերից մէկն էր, որ Շորագեալ դաշտից, պարսիկների բռնութիւնից փախչելով, շտապում էր զնալ գէպի Թիֆլիս և ապաւնել Ռուսաց: Բայց հեշտ չէր զնալը: Բորչալուի, Շամշադնոյ և Ղարաբաղի բնիկ թուրքերը ոտք էին կանգնել և ամեն րոպէ յարձակւում էին այս ու այն փախստական խմբի վրայ զարգում էին նրան, կողոպտում և սիրուն օրիսրդներին ու հարսներին գերելով, տանում այս ու այն սարդարին կամ խանին նուիրում: Օհանէս ապօր խումբն էլ հէնց դրանցից էր վախենում: Թէ ունէր իւր մէջ պահպանող ոյժ, բայց մի փոքրիկ խումբը ինչ կարող էր անել միծ թուրք խմբին, եթէ նա յանկարծ յարձակում գործէր: Երիտասարդ Ասլանը այդ միջացներին եցմիածնից դառնում էր Թիֆլիս, իր ճանապարհին հանդիպելով նոցա, ընկերացաւ նրանց հետ և խօսք տուեց ընկերակցել մինչև Թիֆլիս:

Դ.

ՄՐՑԻ ՄԷջ ԿԱՅԺԵՐ

Զատին դառ լեռան փիշերի տակ, խոր ձորի մէջ,
Դէրէտ գետը այս ու այն քարին դիմչելով, փրփուր-
ներ հանելով՝ զժուածի պէս վազում էր առաջ... Նա
վազում էր ու հառաչում, հառաչելիս լերկ քարերը
ծւռում էին ու արտասւում... Դէրէտի յորձանքներից
քարերն արտասւում էին և արցունքի կաթիները ծո-
րում նրանց վրայից։ Չորի միւս կողմը Յովհան Օձ-
նեցու վանքի ստորոտների տակ, կանաչ մարգա-
գետնի վրայ, մեզ ծանօթ խումբը նոր հասել էր ու
կանգ առնելով այդտեղ՝ հանդիսատ տուել իւր խոն-
ջած անդամներին։ Յովհած էին մարդիկ, յովհած
էին կին, երեխայ ու նրանք խառն ու խուռն, բայց
խումբ-խումբ, մի քանի ընտանիք միացած, պարկել
էին այս ու այն կողմը և մի տեսակ թմրութեան
մէջ ընկած տարածուել կանաչ խոտի վրայ։ Յովհած
էին նրանց մարմինները, յովհած և յուսահատուած
նրանց սիրտն ու հոգին։ Տիրում էր խորին լոռու-
թիւն, ոչ ոք ոչինչ բանի վրայ չէր մտածում, բայց
իրանց խոնջած մարմիններին հանգստութիւն տալու։
Խորին լուսթեան մէջ լուսում էր միայն Դէրէտ գետի
շնչառու ձայնը, որը ահաւոր լոռութիւնը խանդարե-

լով, գլուխնե առնում ու կորչում էր դէպի խոր-խոր
ձորերը... Լոռութիւնը երբեմն միայն ընդհատում էր
չների հաջոցով կամ ծծկեր երեխաների աղիողարմ
լացով, որոնք իրանց մայրերի քունը խանդարելով
ծիծ էին խնդրում։ Այդ յուսահատ պատկերը լու-
սաւորում էր լիալուսինը իւր ցուրտ ճառագայթնե-
րով, որը հէնց նոր իւր գլուխը հանելով Զատին
գաղի լեռան քամակից, ինքն և զարմացած նայում
էր նրանց։

Ցուրտ էր օրը։ Անսովոր մարդու համար Լո-
ռուայ զիշերները սարսուռ կը բերէին, սակայն փա-
խստական խմբի համար այդ մընայն էր, նա տեսել
էր արդէն շատ զրկանքներ և մի ամսից տեելի էր
ինչ նա զիշերները բաց երկնքի տակ էր անցկացնում։
Հոգը նրա անկոսկին էր և անհուն երկնակամարը
նրա տանիքը։ Նրա մարմինը արդէն վարժուել էր
եղանակի խոտութեան և պարզիայ զիշերի այդ սառ-
նութիւնը նրան էլ չէր նեղացնում.. Բայց լուսինը
հետզետէ բարձրանում էր վեր ու իւր դիւթող ճա-
ռագայթներով տեելի ու տեելի լուսաւորում այդ
պատկերը ու խոր քնի մէջ ընկղմում փախստական-
ներին։ Նրանք ամները արդէն քնած էին, հինգ թէ
վեց պահապան կանգնեցրած երիտասարդներն էլ
թուանքները ձեռներին, արդէն քուն էին մտնում և
թուանքները ձեռներին, արդէն քուն էին մտնում և
հետզհետէ ընկղմում խոր քնի մէջ։ Քաղցր ու ահաւ
երազները փայփայում էին նրանց ու իրանց թհերի
գրադարան վայփայում էին նրանց ու իրանց թհերի
վրայ տանում երազական այն աշխարհը, որ չ'կայ
վիշտ, չ'կայ տառապանը...

Քնած էին ամենը, քնած էին լեռներն ու դաշտերը, քնած չէր միայն մի չքնաղ տասն և վեց տարեկան աղջիկ, որը ձեռքը ծնօտին դրած լուռ երբեմն սիրուն լուսնին էր նայում, իսկ երբեմն իւր առաջ, ուր հին ցնցոտիների մէջ կոլորւած պարկած էր մի փոքրիկ աղջիկ և կամաց տնքում էր։ Հիւանդ էր փոքրիկ աղջիկը, մանկական դէմքը բորբոքում էր ու նրա սիրուն աշքերը ուզում էին դուրս թռչել նրա ակնակապիճներից։ Չնայած գիշերապին ցրտին, նա այրուում էր տաքութեան մէջ և երբեմն երբեմն դառանցում։

— Սիրուն նանի, սիրուն նանի, Մանուշակը ու զնաց, թոթովում էր նա առանց հասկանալու, որ իւր նանը հնչ իւր կողքին չգիմանալով ճանապարհի յոդածութեան խոր քուն էր մտած, իսկ իւր Մանուշակ քոյրը սրտի մղկոցով նայում էր նրան։

— Ի՞նչ է նախշուն ջան, հոգի ջան, առում էր Մանուշակը և նրա սիրուն աշքերից թորում էին արցունքները։

— Ոյն ի՞նչ է, նանի ջան, հլեշտակ է թռչում... թոթովից կրկին հիւանդը։

Մանուշակի մարմնով սառը դող անցաւ Նա զգաց, որ երեխայի հետ ինչ որ կատարում է, ուղեց մօրը զարթեցնել, բայց նկատելով նրա անզորը քունը, չուզեց խանգարել։ Վեր կացաւ, սափորով չուրը մօտեցրեց երեխային, երեխան կուշտ խմեց ջուրը։ Աղա ջուրը իւր բռան մէջ առնելով, լուաց նրանով երեխայի երեսը, հիւանդը կարծես շունչ ա-

ռաւ, զառանցանքները դադարեցրեց և կարծես քուն մտաւ։ Մանուշակը նորից ձեռքը ծնօտին տարաւ և լուռ լուսնին նայեց։

— Ա՛խ, ասաց Մանուշակը ինքն իրեն, սքանչելի գիշեր, անուշ գիշեր, ինչու զու դաժան ես, ինչու զու սոսկալի ես, ուզում եմ քնել, քունս չի տանում, ուզում եմ հանգստանալ մի բողէ միայն, մի վայրկեան, այդ էլ չեմ կարող... Բայց մինչ երը... Յանկարծ Մանուշակը ցնցուեց, նա իւր աշքերը դարձրեց դէպի մի կողմը և սոսկաց։ Սյնտեղ իրենից մի ըսան քայլ հեռու նկատեց երկու փալուն աշքեր, որոնք կարելիցարար իրեն էին նայում։ Այդ աշքերը սուր սլաքի նման ցցուեցին իւր սրտում և այնտեղ յառաջացրին մի շփոթ, մի իրարանցում, որը ոչ դառն էր, ոչ քաղցր էր, ոչ անուշ էր, ոչ անհամ։ Կակծի նման մի բան յառաջացրին նրա սրտում, որոնք խոր և անջնջելի կերպի տպաւրուեցին նրա սրտի մութ խորսներում։

— Սոտուած իմ, Ասլանն է, ինչու է նայում ինձ, ասաց ինքն իրան Մանուշակը և երեսը ձեռների մէջ ծածկեց։ Բայց երկար չկարողացաւ այդպէս մնալ։ Մագնիսական զօրութիւնը քաշում էր նրան ու նա երբ նորից նայեց, տեսաւ, որ Սոլանի սիրուն դէմքը ժպտում է, մի ժպիտ, որ լի էր և վշտով և կարեկցութեամբ և բռոն սիրութ... Սոլանի սրտի մէջ էլ կարծես ցցուել էր սիրոյ նետը, որի վերքը մնում է անրութելի մինչեւ զերեղման իջնելը։ Բայց այդ ժամանակ հիւանդը դարձեց, խոր

ախ քաշեց ու կրկին սկսեց զառանցել, Մանուչակը դէպի հիւանդը նայեց, սառը ջրով սկսեց շփել նրա երեսը և այնքան խորասուզուեց հիւանդով, որ չնկատեց անգամ թէ ինչպէս Սոլանը մօտեցաւ նրան ու կանգ առաւ մօտը:

— Աղջի, ինչ է պատահել երեխայի հետ, ասաց նա: Մանուչակը վեր նայեց ու սարսռաց, ապա ամօթխածութեամբ երեսը ծածկեց ու լուռ կացաւ: Սոլանը ձեռքը գրեց հիւանդի ճակատին ու սոսկաց: Հիւանդի ճակատը այնքան տաք էր, որ կրակ էր կտրել, հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել թէ չէ հիւանդը ձեռքից կերթար:

— Մանուչակ, լսիր ինձ, մի ամաշիր, մինք այս-
տեղ քոյր և եղբայր ենք, քաթանը թթջիր և շուտ-
շուտ քրոջդ ճակատին դիր, մինչի ես կերթամ տէր-
տէրին գտնելու, նա գեղ ու գարման անել գլուէ,
թէ չէ քրոյդ սաստիկ հիւանդ է, ասաց Սոլանն ու
քայլերն ուզգեց դէպի ձորի տէրտէրին գտնելու:
Բայց զեռ մի քանի քայլ չեր գրել, երբ մեխուածի
նման կանգ առաւ և աշքերն ուզգեց դէպի ձորը:
Չորի միջից ինչ որ կտօկածաւոր ձայներ էին զա-
լիս, որ լաւ բան չէին զուշակում: Սոլանը աջ ու
ձախ նայեց և տեսաւ, որ ամենքը ընած են, ամեն-
քը, մինչի անդամ պահապանները և մինչգեռ ուզում
էր զագել պահապաններին զարթեցնել, այդ միջոցին
նա սոսկաւով նկատեց, որ ձորի միջից ցատկտելով,
զուրս թափուեցին բազմաթիւ մարդիկ և առանց
ազմուկ հանելու մի մասը դէպի տաւարն ու կեն-

դանին գնաց և սկսեց քշել նրանց, իսկ մի մասը դէպի քնածները վաղեցին:

— Զարթեցէք... թուրքեր են, զահուրելի ձայ-
նով կանչեց Սոլանը և հրացանը ուսից ցած բերե-
լով արձակեց դէպի թուրքերը: Հրացանի ձայնից
վեր թըռան քնածները և սարսափահար սկսեցին
այս ու այն կողմը վազել, իսկ թշնամին սկսեց կար-
կուտի նման զնդակներ տեղալ նրանց վրայ:

— Տղէրք, մի վախէք, այս կողմը եկէք, կանչեց
Սոլանը և մզուեցաւ հէնց թուրքերի մէջ: Տառը-
քան հայեր էլ հետեւցին Սոլանին և նրանց մէջ
տաք կոխւ սկսուեցաւ: Թուանիների ճռճռոցի վրայ
Մանուչակը մոռացաւ իւր հիւանդին և անդիտակ-
ցարար մօտը դրուած կացինը ձեռքն առաւ: Նա
սպասում էր ամեն բոպէ, որ ահա ուր որ է թուր-
քերը իւր վրայ կը յարձակուին ու կը խլեն իւր
թանկաղին հիւանդին: Ու վեր թոցնելով իր հիւանդ
քրոջը, ուզից նրան տանել աւելի տալահով տեղ, երբ
խեղճը չը նկատեց անդամ թէ ինչպէս անիրաւ զըն-
զակը զիպաւ հիւանդի հէնց ճակատին ու նրան
տեղն ու տեղը հանդցրեց: Ու երբ Մանուչակը ու-
զում էր առաջ զնակ, սոսկաւով նկատեց նրա արիւ-
նաշաղազ երեսը ու կայծակնահարի նման կանգ
առաւ: Այդ ժամանակ նրա ականջին զիպան Սոլա-
նի խօսքերը որ գոռում էր «Ճղէրք, մի վախէք, այս
կողմը եկէք» Մանուչակը մոնչաց, վրէժինը թեան
կրակով բորբաքուեց ու նա կացնի կրթը ամուր
սեղմելով, առանց ուշը դարձնելու մօր աղերսանիրին,

դիակը ցած գրեց ու թռաւ, սլացաւ դէպի այն
կողմը, ուր ձայնը կանչում էր իրան:

Եւ նա հոգի տուսզ հրեշտակի նման մզուեց
թուրքերի շարքերի մէջ ու սկսեց իւր կացնով նրանց
զլուխը թռցնել: Հայերը տեսան նրան և ոգեորու-
եցին, իսկ թուրքերը սկսեցին հետզհետէ նահանջել,
իրանց հետ տանելով փախստականների ապրանքի
մի մասը: Բայց ոգեորուած Մանուշակը չպիտէր ինչ
էր անում: Նա կորցրել էր իրան, աջ ու ձախ
զլուխներ էր թռցնում, բայց չէր նկատում, որ
հետզհետէ հեռանում է իրենց խմբից և շրջապատ-
ւում թուրքերով, որոնք գիւական ժպիտով նրան
էին նայում: Մանուշակը չնկատեց անդամ թէ ինչ-
պէս յետեից մի թուրք սինդ բռնեց իւր ձեռքերը,
իսկ միւսները գաղանների նման վրայ ընկան նրան
պատառ պատառ անելու: Այդ ժամանակ մի թուրք
կանչեց:

— Զեռք չտաք, կենդանի պէտքէ բռնել,
Մանուշակին կատեցին սինդ չուաններով և
դերի նման չքացան առաջ:
Գրաւառութէ
ուսուռա Խեցու
Երես այսուհյօք քաջ.
և Խայերի դաստի
ամի. անհանցափեց
Գեր.

Ե.

ՆԵՐՍԻ ՍՐԲԱԶԱՆԸ

Պուրսը մութն էր և խաւար:

Անձրիի խոշոր կաթիլները բաղխում էին պա-
տուհանի ապակինները և մի տեսակ վհատութիւն սըփ-
ուում չորս կողմը: Այդ ժամանակ Թիֆլիսի Վանքի
աւագ եկեղեցու գաւթում Առաջնորդարանի տան
սենեակներից մէկում, ճրադի աղօտ լուսաւորութեան
տակ, նստած էր մի հոգեորական մարդ 44—45
տարեկան հասակում, կարճիկ հասակով և շտապ-
շտապ ինչ որ գրում էր: Մոայլ էր նրա գէմքը և
նրա թաւ յօնքերի տակ գտնուած աչքերը վառվում
էին անսովոր ոգեորութեամբ: Գրելը վերջացրեց,
փետուրէ զալամը (գրիշը) մի կողմը դրեց և բազ-
կաթոռի վրայ յետ ընկնելով աչքերը դարձրեց դէ-
պի առաստաղ և ընկաւ մտածմունքների մէջ: Դառն
և ահարկու էին նրա մտածմունքները: Բուռն փո-
թորկի նման անցնում էին նրանք նրա մոքի միջով,
յուզում նրան, ցաւեցնելու շափ ցնցում և ապա տե-
ղի տալով քաղցր և անուշ մտքերին խաղաղեցնում
էին նրա սիրտն ու հոգին և նրան ձգում երանա-
ւէտ երջանկութեան մէջ... Այդ ժամանակ միայն
նրա գէմքի վրայ փայլում էր Աստուածային խաղա-

զութիւնը և աննկարելի, բայց սիրուն ժպիտը, փայլում նրա աշքերի մէջ. . Ե՞նչ էր մտածում այդ մարդը, ինչու նա երեխն ժպտում էր, ուրախանում և Սստուծային անդորրութեամբ և երջանկութեամբ փայլում իսկ երեխն խոժովում, կնճրում և սարսափի չափ երկիրդ տարածում չարջը—յայտնի չէր. միայն որ նա աւելի տանջում, աւելի հոգեպէս մաշում էր այդ արդէն ակներե էր. Քիչ ժամանակ անցաւ. Մտքերի ծովի մէջ ընկզմուած, նա վերկացաւ բազկաթոսից, մի քանի անգամ յետ ու առաջ անցաւ սննիակի մէջ և առաջ կանդ առաւ իւր սննեկի պատուհանի առաջ ու դուրս նայեց. Իւր աւազ, դուրսը՝ կապարի նման անցնում էր Կուր գետը և լիզելով Առաջնորդարանի պատերը լոիկ ու մնջիկ սողում էր առաջ և թանձր խաւարով ըողարկուած, տանում էր. իւր հետ և արցունք, և ժպիտ, և վիշտ, և տրտմոթիւն. Բայց ուր և մինչեւ երբ յայտնի չէր:

— Խաւար է չորս կողմը, խաւար սրտիս մէջ, մրմրաց ինքն իրան այդ մարդը և ձեռքը դէպի սիրտը տարաւ, կարծես հինգ այդ ըսպէին նրա սիրտը դուրս թռչելիս լինէր իւր կապանըներից—ոհ, կանչեց նա նորից, շուրջս խաւար է և ամայի, չկայ լոյս, կենսատու լոյս, այն լոյսը որը ես ուզում եմ դրկել, փայփայել և այնպէս գերեզման իջնել... Ս.մայր է ամեն կողմը, այնքան ամայի, ինչքան Սահարայի անապատը, այդ անապատի մէջ չկան գէթ սիրուն, ջրառատ օպլիսներ, ուր կարելի լինի մի փայրկեան միայն

կանգ առնել, հանգստանալ, զովացնել պապակած բերանը... Բայց մինչեւ երբ... ոհ, սոսկալի է... Բայց կ'զայ այն ժամը, իմ փայփայած այն ցանկալի ժամը, երբ ես կ'զրկեմ նրան և երջանիշկ, հանգիստ սրտով կիշնեմ գերեզման... Դարեր կանցնին, բայց հոգիս չը կշտացած այդ երջանիկ օրերից, կը սաւառնի երկրիս վրայ և շունչ ու հոգի կը ներնչի իմ զաւակներին...

Նա լոեց. Անհուն երջանիկ ժպիտը փայլեց նրա դէմրին և նա դեռ մեխուածի նման կանգ էր առած, երբ դէմքի զծազրութիւնը փոխուեց, խոժու կնճրուները պատեցին նրա դէմրը և նրա աշքերը լցուեցան վշի ու ցաւակցութեան արտայայտութեամբ:

— Դժուար է, խիստ դժուար, ամայի անդաստանը մշակել ու մեռած ու թմրած հոգիները արթենացնել... Զորս կողմս տիրում է խորին տղիտաթիւն, աշխարհական թէ հոգեսրական խարխափում են տղիտութեան այդ խաւարի մէջ, բայց ես կը վառեմ շահը, Աստուծային այն ջահը, որ լոյս և ջերմութիւն կը սփորի իմ սիրեցեալ ժողովրդի մէջ: Ես իմ ճանկերով դուրս կը կորզիմ նրան խաւարի ճիրաններից և շեմ թոյլ տայ կործանուելու խաւարի ու տղիտութեան մէջ:

Նա կրկին լոեց. Անձրեի կաթիլները թմրկահարում էին ասպակիները և կաթիլ կաթիլ զլորւսում ցած, նայում էր այդ մարդը կաթիլներին և աւելի ու աւելի յուղում, նրա սրտի մէջ էլ անցնում էին

կաթիլներ, բայց ոչ անձրեսի զովացուցիչ կաթիլներ, այլ արցունքի կաթիլներ, որոնք այրում կրակում էին նրա սիրտը:

—Չորս կողմու խաւար է, շարունակեց նա, ամեն ինչ մռայլ, յուսոյ և լոյսի ոչ մի նշան, ժողովուրդը տքէտ, փարզապետ, քահանայ տխմար, անուսում: Միիթարութիւն և ոչ մի կողմից: Խեղճ ներսէս, ինչ ես ձգտում դու, կ'փառես կենսատու ջահը, բայց հարիւրաւոր ճիւալներ կը հանգցնեն նրան և այդ կենսատու ջահի հետքն անգամ չեն թողնի... Բայց չէ, հիւսիսից սրանում է պարթև Արծիւր, մօտ է փրկութեան ժամը, քաջացիր, ներսէս, քաջացիր, հայրենիքիդ պարտրդ վճարիր, իսկ մնացածը ունայնութիւն է, ասաց նա ու շտապ քայլերով մօտեցաւ բազկաթոռին, պրած նամակը կնքեց և ապա զանգը քաշեց: Ծառան ներս մտաւ և կանգնեց գըռների մօտ:

—Գէորգ Սոտուածարեանը այդտեղ է հարցից նա:

—Եյտեղ է, սրբազն, ասաց ծառան:

—Կանչեցէր:

Ծառան գուրս վնաց և քիչ յետոյ ներս մտաւ մի յաղթանդամ մարդ մօտ 30 տարեկան, կարմրելես, թուխ գէմքով ու վառվոռն աչքերով:

—Նստիր, ասաց Սրբազնը, որ ներսէս Աշտարակեցին էր, Թիֆլուի թէմի Սուաշնորդը:

Գէորգը նստեց:

—Սոտ, մինչև այժմ լուր չստացուեց մեր Սո-

լանից, նա մինչև հիմայ պէտքէ այստեղ լինէր. արդ դեօք ի՞նչ է պատահել նրան:

—Ոչինչ լուր չ'կայ, Սրբազն, երկիւղ եմ կրում, որ նրա հետ մի դժբախտութիւն է պատահել, թէ չէ նա այսքան չէր ուշանայ:

—Ի՞նչ դժբախտութիւն, հարցրեց Ներսէս Սրբազնը և սուր, թափանցող հայեացը զցեց Գէորգի վրայ, որը նրա հայեացըին չդիմանալով, մի տեսակ յնցուեց:

—Սրբազն, լսած կը լինէր, Բորչալուի, Շամշդինի, Լոռուայ, Փամբակի և ուրիշ տեղերի թուրքերը ոտի վրայ են և հայի արիւնն են խմում, ամեն կողմը աւերածութիւն, թալան և կոտորած է տեղի ունենում, ովք զիտէ, մեր Սոլանի ճանապարհն էլ այդ կողմն էր՝ նա եջմիածնից պիտի անցնէր Շորագիւալ և այնտեղից վերադառնար այստեղ, գուցէ ճանապարհին մի բան պատահեց...

—Այդ հաւանական է, բայց իմ սիրտը այդ չէ ասում, լսնմ ես, սիրտս այդ չէ զուշակում, նա ողջ և առողջ է...

Ծառայի յանկարծ ներս գալը ընդհատեց ներսէս Սրբազնի խօսքերը ու նա դառնոլով գլուխ ծառան հարցրեց: —

—Ի՞նչ կայ:

—Սոլանն է ուզում տեսնել Զիրդ սրբազնութեան, ասաց նա:

—Հրաւիրիր, ասաց նա ծառային և գտանալով գէտի իւր խօսակիցը աւելացրեց—տեսամբ, խօսր

ճշուակց: Այդ միջոցին ն'րս մտաւ Ասլանը և խոր գլուխ առւեց: Նա դժգոհն էր և մռայլ: Երկում էր, որ նրա հոգին խիստ յուղուած էր:

— Բարի հս եկել, Ասլան, մենք քեզ վազուց սպասում էինք, նստիր և պատմիր անցրերը:

Ասլանը նստեց: Սրբազնիը ուղղեց նրան սուր, թափանցիկ հայեացք և կարծես ուզում էր կարդալ ինչ է, գրած նրա հոգում. Նա իմացաւ որ իւր Սալանի հետ մի անախորժ բան է պատահել:

— Դու մռայլ հս և տխուր, Ասլան, քեզ հետ ինչ է պատահել:

— Անրախանալու ոչինչ չ'կայ, Սրբազն, չորս կողմը տիրում է սոսկալի իրարանցում, ամեն տեղ կոտորում են հայերին, կոտորում են թէ մեծերին և թէ երեխաներին:

— Մեծ է Սստուծոյ զօրութիւնը, այդ բոլորը կանցնի:

— Հա, հետ է տոել կանցնի, բայց մինչ Պօղոսը Պիտրոսին կը հասնի, Պիտրոսի կաշին կը քերթին, Պարսիկները երկիւով կրելով ուստիների արաւանիք և տեսնելով հայերի համականըը դէպի իրանց Քրիստոնեայ պիտութիւնը, հայերի զիւղերը ծխի և մոխրի կոյտ են դարձնում, շատերին կոտորում են և մնացածներին զերի վարում, որ ուստի ների ձեռքը չանցնեն:

— Ամբոն հայերը, նրանք, թէ կին թէ մարդ՝ լաւ զիմապրում են և բոլէ առ բոլէ սպասում իւնց աղատիչ ուստիներին, եթէ տեսնէիք որբազն

թէ ինչպէս մի աղջիկ կացինը ձեռքին ջարդում էր թուրքերին, դուք կմնայիք զարմացած:

— Աղջիկը նրտեղացի էր:

— Շորագեալի գիւղերը ծխի մատնուելուց յետոյ, մի խումբ գաղթականներ գալիս էին դէպի Թիֆլիս: Նրանց մէջ կար մի սիրոն 16 տարեկան աղջիկ Մանուշակ անունով: Այդ խումբը նոր հսկել էր Օձնայ գաշտը և հանգստանում էր. երբ երկու հարիւրից աւելի թուրքեր վրայ տուին: Ես էլ այդ խմբի մէջ էի: Սկսուեց կռիւը: Մերոնք քնած էին և սաստիկ յովնած և թուրքերը այդ բանից օգտուելով կոտորում էին մերոնց և հետզհետէ առաջ զալիս, երբ որտեղից որ էր կռուի մէջ ընկաւ Մանուշակը և սկսեց աջ ու ձախ ջարդել: Թուրքերը այդ տեսնելով սարսափեցին և յիտ յիտ նահանջեցին տանելով իրենց հետ աւարի մի մատումիայն և...

— Եւ ի՞նչ...

— Եւ Մանուշակին, ասաց Ասլանը խոր հոգ քաշելով:

— Եւ դուք քնած էիք, թողիք որ նորան տանեմն, ասաց Ներսէսը և կատաղի հայեացք նետելով վեր թռաւ բաղկաթուից:

— Սրբազն, Ասլանին գուք ճանաչում էք, նա մահից չի վախենայ, բայց ինչ արած որ ոյժը նրանց կողմն էք՝ մենք ոչինչ չենք կարող անել: Երբ որ նկատեցինք Մանուշակի տնյայտանալը բան մարդով ընկանք թուրքերի յիտեից և մեր մէջ նորից

սկսուեց կոխը: Քոան հոգուց 15 հոգի ընկան, սրբազն տէր, նրանց գնդակներից իմ ձին յանկարծ վայր ընկաւ կռուի ժամանակ և ինձ իւր տակովը անելով ուշաթափեցրեց: Երբ ուշրի եկայ, չորս կողմու վիրաւոր և սպանուած ընկերներս էին, իսկ թուրքերի հետքն էլ չ'կար:

— Ոյ անիրաւներ... իսկ ինչ եղան մնացած փախստականները, հարցրեց սրբազնը:

— Նրանք հասան Թիֆլիս ինձ հետ և սպասում են ջեր կարգադրութեանը:

— Լաւ, գու գնա, հանդստացիր, Եջմիածնի մասին վայր կը պատմես, ասաց Սրբազնը և երբ Ասլանը գուրս գնաց, նա մտալրադ զրիշը նորից ձեռն առաւ և ինչ որ գրելով յանձնեց Գէորգին:

— Գնա, այս թուղթը հասցրու ում պէտքն է և ինք հսկիր որ մեր տառապեալ եղբայրները ինչպէս հարկն է պատսպարուին:

Գէորգն էլ գուրս գնաց և Ներսէս սրբազնը կրկին մնաց միանակ բայց աւելի մտալրադ, աւելի յուշուած:

14570⁹
220
2.

Վ Ի Շ Տ Տ.

Վյժմնան Բորչալուի լեռներից մէկում, սիզաւէտ կանաչների վրայ, երեսում էին բազմաթիւ, թաղիքով ծակծկուած վրաններ: Վրանների շուրջը արածում էին ձիեր, կովեր և ոչխարներ, որոնք անհոգ պոկելով հիւթալից խոտը մօտենում էին կարկաչանոս վճիտ աղբիւրներին և իրանց ծարաւը յագեցնում էին նրա անուշահամ սառն կաթիներովք:

Վրաննների շուրջը եռում էր կեանքը: Վրաններից ներս ու դուրս էին անում բազմաթիւ երեխաներ, կանաչը և մարդիք: Կանանց մեծ մասը զրադուած էր տնային դործերով, միքանիսը նրանցից կրակ էին վառում, միքանիսը կով կթում և ոմանք կերակուր պատրաստում ամուսինների համար: Տղամարդիկ էլ զրադուած էին, նրանք էլ անզործ չէին նստած: Միքանիսը նրանցից ձիւթուտ շորի կտորով մաքրում էին հրացաններն ու սրերը, իսկ ոմանք խմբուած մի քանի հոգի, ինչ որ տաք տաք պատմում էին իրար: Երեխաներն էին միայն, որ ցնցոտիները հաղած, կիսամերկ, մի կտոր սկ հացը ձեռքերին, այս ու այն կտզմն էին վազվզում և իրանց ուրախաձայն աղաղակներով քնութիւնը կինդանաց-

նում: Նրանց աղաղակների հետ միանում էր թըռչունների ճաւողինը, գառների մայունը և կովերի բառանչինը ու մի տեսակ ախորժ տպաւորութիւն թողնում մարդու սրտին:

Մի քանի վրանների միջից միայն լուսում էին ծանր հառաշանքներ, այդ վրանների մէջ, թաղիքեայ կապերանների կամ հափունջների վրայ, պարկած էին վիրաւորներ, որոնք ցաւի կոկծին չդիմանալով, երեմն երեմն հառաշանքներ էին հանում ու ապա կրկին ձայները փառները ձգում, երբ վրանի մէջ մտնում էին սւրիշ մարդիկ: Դրանք ամաշում էին ուրիշների ներկայութեամբ հառաշելոց, այդ վիրաւորներին պատիւ չէր բերում: Վրաններից մէկի առաջ խմբուել էին երեխաններ, հետարբրութեամբ նայում էին մի աղջկայ, որի ձեռքերը կապած, համարեա կիսաթմրած դրութեան մէջ, ընկած էր կանաչ խոտի վրայ: Ցեցատինների մէջ կորուսած լամուկները, իրար բրթելով առաջ էին անցնում և նայում այդ աղջկան:

Զեռքերը կապած աղջիկը նրանց համար անովոր երեսին: Էր, ուստի և նրանք միծ հետարբրութեամբ նայում էին նրան:

— Դուք է, մոր է, զեւուրի աղջիկը, ասում էին նրանք և մօտենալով նրան ծամածութիւններ անում: Այսօր նրան պլատի մորթենք, ասում էին միքանիսը:

— Զի, ծառիցը պլատ է կախ տանք, պատասխանում էին միւսները:

— Ե՞նչ ես ասում, սրան պէտք է ծառից կապին և զիւլով նշան դնեն, ով որ ճակատի մէջ տեղը լսփի, նա խզրաշի կը լինի, ասաց մէկը:

— Իսկ եթէ ինձ թողնեն, ես զրա հէնց ճակատին թուանքով կը խփիմ և ես խզրաշի կը լինիմ, ասաց միւսը, բայց հէնց այդ ժամանակ, վրանից մի մարդ զուրս գալով, բարկացաւ երեխանների վրայ և քշեց նրանց հեռու: Դեռու հին մնաց աղատ, ձեռքերը կապած, բայց միարը աղատ:

Մարդիկ նրա ձեռքերը կապել էին, աղատութութիւնը խլել բայց նրա միտքն ու խելքը մնացի էր աղատ, այդ նրանից ոչ ոք չէր կարող խլել մինչև իւր կեանքի վերջին բովին:

Ու այդ կերի աղջիկը աղատութիւն տալով իւր մտրին մտածում էր, մտածում էր հեռուն, ոչ թշուան ներկան, նրա մտրի միջով անցնում էր մի սիրուն պատիկը, որ լուսնկայ դիւթող ճառագայթների տակ, իւր սիրուկ աշքերով նայում էր իրեն, այս ինչքան անուշ, ինչքան հրաշալի էին այդ աշքերը: Նրանք իւր սրտի մէջ մի վայրկեանում թողին այնպիսի անհուն բերկրանք, որոնք անջնջելի տպաւորուեցին իւր հոգույ մթին խորշերում: Այդ վայրկեանից նորա մոռացնել տուին ամեն ինչ և ծնով, և ճիւանդ բոյրիկ և իրեն ձգեցին մի տիսակ ինքնամուացութեան մէջ... Սոլան, Սոլան, յանկարծ մըմբաց ինքնիրան գերի աղջիկը և նրա աշքերից թորացին արցունքի կաթիւներ ու ընկան կանաչ խոտի վրայ: Այր ևս գու արգեօք, կենդանի մնացիը թէ սպա-

Նուեցիր այս անօրէններից, մտածում էր նա, եթէ
կենդանի մնացիր ինչու շ'խղճացիր ինձ, ինչու շա-
զատեցիր այս անօրէնների ձեռքից, ինչու սրտիս
մէջ ցանեցիր վշտի ու կարօտի սերմեր ու ինքդ ե-
րազի նման գնացիր շբացար... շբացար, բայց ա-
ռանց մտածելու, որ սրտիս մէջ ցանեցիր վշտի
սերմեր, որսնք կրակ դառած լափում են ինձ, խո-
րովում, այրում և չկայ մէկը որ պապակած սրտիս
մի կաթիլ ջուր միայն ցողէ... Ասլան, Ասլան...
Հասիր ինձ, Մանուշակը տանջում է քո սիրուց, նա
մոռացաւ ամեն ինչ և քո կարօտն է միայն քաշում...
Մանուշակի մոքի թելը կտրուեց: Այդ ժա-
մանակ մօտեցան նրան մի քանի թուրք, որոնցից
մէկը դառնալով միւսին առաց.—

— Նազի թէկ, այս գեաւուրի աղջկան ես կը
բերեմ:

— Աերցրու, միայն լաւ նայիր, ջուխտ աշքիդ
լսի պէս պահիր, խանը մեզ լաւ պարզեների կար-
ժանացնի այդպիսի սիրուն ընծայից:

— Միամիտ մնայ, Նազի թէկ, սրան այնպէս
տեղ հասցնեմ, որ խանումներն էլ երազում չլինին
տեսած:

— Գէհ, վեր կաց, ժամանակ է ճանապարհ ընկ-
նելու, չես տեսնում, արել արդէն բարձրացել է,
ասաց թուրքը և լարիչ ձնոքերով բարձրացրեց Մա-
նուշակին: Մանուշակը լուս հետեւց նրան: Քիչ յե-
տոյ մի խումբ ձիաւորներ իջան բլրից և երեսները
դարձնելով դէպի Երևան քաղաքը սրարշաւ առաջ

քայլեցին: Զիաւոր թուրքերից մէկի գաւակին ձեռ-
քերը կապած նստած էր Մանուշակը, որին տա-
նում էին Երևանի խանին որպէս մի թանկագին
նուէր:

է.

Վ Ե Տ Տ Ի Ա Ր Զ Ա Գ Ա Ն Ք Ը.

Սասում են թէ սրտերը երբեմն խօսում են իրար հետ, չնայիած որ հարիւրաւոր լեռներ ու ձորեր, ջրեր ու ծովեր անջատում են իրարից: Նրանք չդիտեն ոչ մի արդեկը և մարդկային մի սրտի վիշտն ու ուրախութիւնը արձագանք է տալիս միւսի սրտում, չէնց այն բոպէին, այն վայրկեանին, երբ նա, հեռու նրանից, յիշում է նրան ու նրա անունը տալիս: Ի՞նչ զգացմունք է դա, դիւթական ի՞նչ թերեր են, որ շաղկապում են սրտերը, յայտնի չէ, սակայն որ այդ այլովէ է դա մի անհերքելի ճշմարտութիւն է:

Հենց այն բոպէին երբ Մանուշակը, ձեռքերը կադած, Յուլանի անունն էր տալիս, նրան օգիսւթեան կանչում, նոյն իսկ վայրկենին, երբ Մանուշակի սրտի մէջ զարթնել էր վիշտը, զարթնել էր կարօտը դէպի Յուլանը, այդ միջոցին Յուլանը նրատ իր սենեալում, զգում էր մի անբացարեկի յոյզ մի անհասկանալի շփոթութիւն, որը տակն ու վրայ էր անում նրա սիրտն ու հոգին. կարծես աներեսթ զօրութիւնը քրրում էր նրա հոգին, խառնում նրա միտքը և նրան զցում այն տեսակ զրութեան մէջ, որ ինըն էլ չէր հասկանում թէ ինչ էր անում:

Նա յանկարծ վեր էր թռչում տեղից, մի բանի անգամ անց ու դարձ էր անում սենեալի մէջ, նորից նստում, նորից վեր կենում, այս ինչ այն ինչ առարկաներին անհպատակ ձեռք տալիս, առա կրկին նստում: —

— Տէր Աստուած, ինչ է պատահել ինձ հետ, ինչու ես այսպէս եմ, ինչու ես տխուր եմ, այս սիրտը մաշում է, բայց ի՞նչու... ասում էր Յուլանը և ձեռքը տանելով դէպի գանգուր մազերը՝ շփում նրան:

Յանկարծ նա զարս թռաւ սենեալից, զեաց դէպի զոմը տր կապուած էր իր սիրուն ձին և սկսեց շոյել իր ձիու խելօք զլուխուր:

— Իմ սիրուն նժոյդ, իմ պատուական ձի, զու ինձ շատ վտանգներից ես աղատել, շատ տեղ ինձ հետ կոռել, թռուրիերի զլուխ չարգել... Բայց, բայց իմ Մանուշակիս չես աղատել. — Ո՞յս, ասաց նա յանկարծ և իր սիրտը բռնեց, կարծէս հենց այդ բոպէին նրա սիրտը հարիւր տեղից խոցուեցին: Ի՞նչովէ ես թոյլ տուի, որ այն քաջ ազջիկը դերի ընկաւ և այն էլ թուրիերի, անօրէնների ձեռքին. ամօթ քիզ, Յուլան, ամօթ քո տպամարդութեան, ասաց ինքն իրան Յուլանը և այնպիսի մի յուռահատ զրութեան մէջ ընկաւ, որ քիչ մնաց սիրտը պատուեր:

— Հիմա նրան զուցէ տահջում են, սախաւմ են հաւատն ուրանալ, ծիծագում են հայի հաւատի վրայ, ծաղրում ծանեակ զարձեւմ, իսկ ես սրտեղ անհոգ ժամափաճու եմ լինում... Բայց չե, ես քիզ չեմ թողնի զերուած, Յանուշակ, ես զախ ևս քիզ

ազատելու, ասաց յանկարծ Առանը և նրա աչքերից փայլակներ թուան։ Նա շտապով ձին թամբեց, թուր ու թուանը պատրաստեց, խուրջնը պաշարով լրցրեց, ապա քայլերն ուղղեց դէպի հայոց Առաջնորդարանը։ Երբ նա ներս մտաւ, ներսէս Աշտարակեցին զարմացած նրա յուղուած դէմբը դիտեց։

— Ի՞նչ է, որդեակ Առան, ի՞նչ է պատահել քեզ հիտ, ասաց նա քաղցր ձայնով։

— Սրբազն, ես գնում եմ մեռնելու, մեռնելու որ իմ մահով ազատութիւն տամ ուրիշներին։

— Լաւ է, որ բոլորը քեզ պէս լինենին, որդեակ, բայց բանն ի՞նչումն է, պատմիր, ես ուղում եմ ամեն բան իմանալ և տալ իմ օրհնութիւնը։

— Անցեալ գիշեր ես մանրամասն պատմեցի Մանուշակի քաջազործութիւնները, ասացի թէ ինչ պէս գերուեցաւ։ Այժմ իմ խիղճը ինձ տանջում է, որ նա գերութեան մէջ է մնացել և ես գնում եմ ազատելու նրան։ Նա իւր քաջութեամբ փրկեց մի բուռն փախստականների կեանը, իսկ ես տղամարդ տեղովս թողի նրան գերութեան մէջ, այդ ամօթ է ինձ, մեծ ամօթ... Ներսէս սրբազնը լուռ նրան էր նայում և իւր մագնիսական հայեացրով աշխատում էր թափանցել նրա հոգու խորքերը։

— Առաջ, սրբազն տէր, ես այդ շկարողացայ անել, որովհետեւ յանձնարարութիւններ ունէի Զերդ սրբազնութիւնից։ Այդ յանձնարարութիւնները կատարեցի և այժմ ես ազատ եմ ու խնդրում եմ Զեր օրհնութիւնը այդ աղջկան ազատելու, նա աղջիկ չէ

այլ հրեշտակ, նա չ'պիտի մնայ թուրքերի ձեռքին դերի և ծառայի նբանց կրքերին...»

Տիրեց մի փոքր լութիւն, ներսէս սրբազնը մտածում էր, խորը մտածում, իսկ Առանի կուրծքը արագ բարձր ու ցածր էր անում։ Վերջապէս լութիւնը խղեց սրբազնը և դառնալով Առանին ասաց։

— Որդեակ, պէտք չէ բորբոքուել երբ մարդ կարսոր գործի է զնում։ Գնա, ազատիր Մանուշակին, այդ պատմիւ է քեզ, բայց քո կեանքը թանգ պահիր, նա հարկաւոր է ինձ և թշուառներին։ Նսիր ինձ, քո Մանուշակին որոնելիս ուրիշ գործ էլ առաջ տար, հայրենիքի փրկութեան համար էլ մտածիր։ Գիտես, այդ փրկութիւնը մօտ է, ուռւական զօրքերը հետզհետ է մօտենում են դէպի հայրենիք, դէպի Մայր Սթոռ և, եզմիածինը, նրան անհաւաների ձեռքից աղատելու, բայց զիտցիր, որ այդ զօրքերին ձեռքիցդ եկած օգնութիւնը պիտի անես, նրանց ճանապարհը պիտի թեթեացնես, ուր որ զնաս գիւղ թէ քաղաք, տեղական հայերին ոտի պիտի կանգնեցնես պարսիկների դէմ և դրանով գիւրսութիւն, տաս քրիստոնեայ զօրքերին։ Ես քեզ կ'տամ նամակներ, ես քեզ կ'տամ թղթեր, որոնց պիտի ցրես հայերի մէջ, զաղանի պարսից տեսողութիւնից։ Օյդ բաւական չէ, զու միայնակ չես զնայ, այլ քեզ ընկեր կը վերցնես Գէորգին, որը քեղանից աւելի հմուտ է և փորձուած։ Դու քաջութեամբ կը զործես, նա խելքով և թող Լուսաւորչի պահապան Ազք քեզ օգնուած լինի մինչի վերջը։ Սրբազնը լոեց։ Նրա աշկան լինի մինչի վերջը։

քերից արցունքներ էին թափվում ու նա վեր կե-
նալով տեղից համբուրեց Սոլանի ճակատը։ Մի քա-
նի ժամ չանցած Սոլանն ու Գէորգը ձիերը հեծած
արդէն ճանապարհ էին ընկել..

Ը.

Կ Ե Ն Գ Ա Ն Ի Ը Ն Ծ Ա Ն .

Սրեելեան ճաշակով զարդարուած շքեղ պա-
լատի մէջ նստած էր Երեանի տէրը՝ սարդար Յու-
սէլին-Դոլի խանը և նարգիլէն առաջը դրած, քուլա-
քուլա բաց էր թողնում իւր քերնից ու քթածակե-
րից ծխախոտի անուշահոտ ծուխը և խարը մտա-
ծում։ Նա յիշում էր իւր մանկութիւնը, յիշում էր
իւր անցեալը և համեմատելով իւր ներկայի հետ մի
ուսակ քաղցր, դուրալի անդորրութիւն անցնում էր
ուրա ամբողջ մարմնով ու նրա հողու մէջ տարածում
խաղաղութիւն։ Նա յիշում էր Աազիլին քաղաքը,
յիշում էր այն բովէն, երբ քրտինքը ճակատից կաթ-
րաթելով, արեի կիզիչ ճառագայթների տակ, մաճը
ձեռքն առած վարում էր հողը և յովնածութիւնից
հոյ, սոված վրայ ընկնում մի կտոր սկ. հացին և
որանով յաղեցնում իւր քաղցր։ Եսկ այժմ ինչքան
խփոխութիւն...

Սմբող Երեանի խանութիւնը իւր ութերի
տակ է գրուած, իւր մի նշանից, իւր մի ձայնից
բողում են հաղարաւոր մարդիկ։ Կնքը շրջապատուած
տմին տեսակ բարիքներով—թանկագին զորդերն
անօթները զարդարում են իւր պալատը և անու-

շահամ խորտիկներն ու խմիչքները լցնում նրա սեղանը, որի փշրանքներով կերակրում են հարիւրաւոր ծառաները: Խոկ կանանոցը լի է աշխարհիս զանազան կողմերից բերած հուրի-փերիներով, որոնք նրա ուսնիքի տակ նստած, պատմում են անցած վնացած քաջերի պատմութիւնը ու հազար ու մի գիշերներից վերցրած առասպելները: Սարդարը լսում է նրանց պատմածները երբեմն ողերուում, երբեմն տիրում և ապա շոյելով իւր հուրի-փերիների փափուկ մազերը, սիրուն այտերն ու սերբակ աչերը անուշ բուն է մտնում մինչև առաւօտ... Չէ, երջանիկ է Երեանի սարդարը, խիստ երջանիկ... Բայց այդուէս կը լինի արդեօք մինչև իւր կեանքի վախճանը, թէ մի չարաբաստիկ դէպը նորից պիտի խառնէ խր-հանգստութիւնը, ահա մի միտք որ այդ բոպէին տանջում էր Յուսէյին-Ղուլի խանին և նրան զցում մտածութեան ծովը: Յուսէյին-Ղուլի խանը թէն ոչ կարդալ և ոչ զրել գիտէր, բայց նա խելօք և ընդունակ մարդկանցից մէկն էր: Շնորհիւ իւր քաջութիւնների ձեռք էր ձգել Երեանի խանութիւնը և կառավարում էր իւր երկիրը համարեա անկախ, Շահին տարէնը միայն մի ընծայ տալով: Նա հասել էր իւր ցանկալի կետին, էլ նրանից ուրիշ կողմ չէր ուզում անցնել. այլ միայն հանգստութիւն էր ուզում: Բայց ցանկալի այլ հանգստութիւնը երկար չէր տեի, երկար չէր շարունակուի. Յուսէյին-Ղուլի խանը այդ դգում էր, հասկանում էր և այդ բանից սուկում: Նա տեսնում էր, որ Երեանի խանութեան հորիզոնը

հետզհետէ ծածկում է սե սե ամպերով, որոնք տրաքուելով պիտի խորտակէին նրա խանութիւնը... Նարդիլն հանեց բերնից, ամոլի նման ծուխը բաց թողից ու թիկն տալով փափուկ բարձին, աչքերը մի կետի յարեց, ու մի տեսակ դառը ժվլիտ արձակելով մրմրաց: — Հըմ... գիտուրներ:... զեաւուրները պիտի զան երկիրս ձեռքիցս խլին, հազար տանջանքներով ձեռք բերած հանգստութիւնս խլեն... չէ, այդ չի յաջողի նրանց: Յուսէյին խանը հեշտ հալով իւր խանութիւնը նրանց չի տայ եթէ ամբողջ Ուուսիան էլ նրա վրայ գայ, ուր մնաց նրա մի բուռն զինուորները, որոնց գլուխները սախի զլինների նման կտրել կը տամ ու իմ ոտքերի տակ կը տրորեմ... թող գան...

Խանի մտածութեան թելը կտրուեց, այդ միջոցին ներս մտնող ծառան, ծունկ չոփած, ձեռները կրծքին դրած երկրպագութիւն տուեց Յուսէյին խանին և լուռ, ինչպէս արձան, մնաց տեղում մեխուած:

— Ի՞նչ կայ, Սլի, հարցրեց խանը իւր ծառայից:

Նա նորից գլուխը կպցրեց գիտնին, բարձրացրեց և առանց համարձակուելու խանի երեսին նայելու ասաց.

— Խանը ապրած կենայ, Յակոբ էֆենդին և ուզում Զեր տեսութեանը արժանանալ:

— Հա, ես կանչել էի նրան, թող գայ, ասաց խանը և երբ ծառան գուրս գնաց աւելացրեց—այդ զեաւուրները մեղ շատ տեղ պէտք են դալիս, հար-

կաւոր է դրանց շոյել, փայփայէ և զլիների տակ
փափուկ բարձեր գնել:

Ներս մտաւ Յակոբը, նա ընկկ Երեանցի հայ
էր, սպասից հպատակ և հմուտ ուժքածիզ, Խանը
յանձնել էր նրան անգլիական մի թնդանօթ և շատ
գոհ էր նրանից: Յակոբը ներս մտնելով խորը զլուխ
առեց և կանգնեց գոների մօտ:

— Եֆենդի, համեցէք, նստեցէք, ասաց խանի
ցոյց առավի նրան իւր մօտի բարձերից մէկը: Յա-
կոբը նստեց, և լուռ սպասում էր սարդարի հրա-
մանին:

— Յակոբ էֆենդի, դու անպատճառ լուսմ ես,
թէ ինչեր են կատարուում մեր շուրջը, դու զիտնո
որ ուստները որ աւուր առաջ են գալիս, Վրաստա-
նը ձեռները ձգելուց յետոյ, նրանք հանգիստ չեն
մնում ու մեր երկրներն էլ ուզում են խլել. բայց
մնաք պիտի դիմադրենք նրանց բանի որ մեր բ-
րանում չունչ իտյ:

— Թող խանը ապրած կենայ, քո և Շահի զ-
րութեան առաջ նրանք կը խորտակուին, կոչնչանան:
Նրանք չեն կարող մի քայլ առաջ դալ:

— Սյա, չեն կարող, ես այդ համոզուած եմ,
ես այդ զիտեմ, բայց ասա ինձ, քո հայերը դժուն
են թէ բաւական ինձանից:

— Ամենքը օրնում են քո կեանքը, խան և բեղ
արեշատութիւն խնդրում:

— Պէտք է որ պալպէս լինի: Ես նրանց պա-
հում պահպանում եմ իմ երկրում, նրանց նեղութիւն

չեմ տալիս և չեմ զրկում ոչնչից: Զեր էջմիա-
ծինը դարերից ՚ի վեր օգտուել է շահի իշխանու-
թիան տակ և նրանից բարիքներ վայելել: Նա էլի
շարունակում է բարիքներ վայելել. բայց ձեր հավի-
կոպուներից և վարդապետներից մի քանիսը չեն
հասկանում իրենց լաւութիւնը և մեր դէմ են զոր-
ծում:

— Ո՞վ, խան, ով է համարձակուում ձեր դէմ կենալ:

— Հըմ, մվ, միթէ չգիտես: Միթէ յայտնի
չէ քեզ, Եֆենդի, որ Ներսէս Աշտարակեցին յայտնի
կերպով ուստների կողմն անցնելով աշխատում է
այստեղի հայերի միտքը պղտորել, նրան ոտքի կանգ-
նեցնել մեր դէմ և էջմիածինը խլել մեր ձեռքից.—
բայց վայ նրան ով հակառակ է զնում մեզ. Յուսէյն
խանը զիտէ իւր վրէժը լուծել նրանից:

— Թող միամիտ մնա խանը, ասաց Յակոբը,
ամեն աղջի մէջ լինում են և լաւերը և վատերը,
մի Ներսէս ոչինչ չի կարող անել, նա չի կարող
պղտորել մտքերը, բանի որ հայերը հլու հպատակ
են ձեզ և պատրաստ են իրանց կեանքը դնելու
Զեղ համար:

— Հա, ես սիրում եմ հայերին և պատում
նրանց, քեզ օրինակ վերցրու, դու հայ ես, բայց իմ
ամենասիրելի անձնաւորութիւններից մէկը, քո հա-
ւատարմութիւնը տեսնելով, ես հաւատացել եմ քեզ
իմ ամենալաւ թնդանօթներից մէկը, որից սսուրու
է թշնամին: Թող լաւ զիտենան հայերը, որ նա, ով
հաւատարիմ է ինձ, արժանապէս կը վարձատրուի,

իսկ անհաւատարիմները ու դաւաճանները սոսկալի պատիժ կատանան ինձանից, Բայց լսիր ինձ, Եփէնդի, այս բանի օրը մենք Երեանից գուրս ենք գնալու ռուսներին ջարդելու, ուստի դու էլ պատրաստ ելիք, Շահը իւր 60 հազար զօրքերով մտնելու է Նարարադ, իսկ մի մասն էլ համելու է մեղ օվնութեան։ Պիտի մենք Շահին ցոյց տանք մեր քաջութիւնը, մենք նրան պիտի ցոյց տանք, որ մենք էլ կուտել վիտենք քաջութեամբ և դուրս քշել թշնամիներին։ Թամբ հասել է արդին։

— Ես պատրաստ եմ խան, կեանքս դնել բեղ համար, այդ կեանքը իմս չէ այլ քոնը։

— Հաւատում եմ, հաւատում, բո թնկանօթով շատ թշնամիներ ես ջարդել...

Սյդ միջացին դուրսը մի ինչ որ ազմուկ լսուեց և ընդհատուեց խանի խօսակցութիւնը, ասլա նա դառնալով գէպի դուռը կանչեց.—Ե՞յ, ով կայ այդտեղ։

Ծառան ներս մտաւ և խոր պաւստ տալով կանդնեց դուների մօտ։

— Ի՞նչ ազմուկ է, ով կայ այնտեղ Ալի, կրկին հարցրեց խանը։

— Խանը ապրած կենայ, Նազի բէկն է, ուզում է Զեր պայծառ երեսը տեսնել, իւր ընծաները անձամբ ներկայացնել։

— Նազի բէկ... մտածութեան մէջ ընկաւ խանը, ինչ նազի բէկ, սրտեղից է եկել, հարցրեց խանը Ալից։

— Բորչալուից, խան, նա հետը բերել է և մի սիրուն զեաւուրի աղջիկ Զեր կանանցի համար։ Խանը կնճիռները իջեցրեց բայց թէ հրամայեց ներս կանչել։ Խորամանկ խանի մտքով մի բան անցաւ։

Ներս եկաւ Նազի բէկը, երեք անդամ երկրպագութիւն արաւ և չոքեչոք մօտենալով խանին համբուրեց նրա փեշի ծայրը։

— Ո՞վ ես դու, ինչի համար ես եկել, հարցրեց խանը։

— Խանը թող ապրած կենայ, ես Բորչալուիցի եմ և իմ խմբով անցել եմ ռուսաց երկրներից և եկել կեանքս զոհելու մեր խանի արկշատութեան համար։ Խանը ուրախացաւ, նրա աշքերի մէջ անցան սպիօրութեան փայլեր, բայց նա զապեց իրան։

— Ի՞նչ կայ ռուսաց երկրում, նրանք պատրաստում են թէ ոչ։

— Խան, նրանք պատրաստում են, բայց ի՞նչ կարող են անել Զեր զօրութեան դէմ, զեաւուրները ամենքը կրկոտորուին, ամենքը։ Նազի բէկը երբ իմացաւ նրանց միտքը, ամբովզ Բորչալուն ոտքի կանգնեցրեց և այժմ պատրաստ է Զեր հրամանին։

— Ապրես, դովելի է քո վարմունքը, Նազի բէկ, բայց քանի մարդուց է բազկացած քո խումբը։

— Երկու հարիւր կտրիճներից, խան, բայց այդ երկու հարիւր կտրիճները հրաշքներ են գործում, խան, նրանք փամբակում ջարդեցին մի խումբ ռուսների և այդ բաւական չէ Օձնայ դաշտում կոտորեցին մի խումբ զեաւուրների, որոնք շտապում են ռուսաց կողմն անցնելու։

— Արժանի էին, ասաց խանը:

— Այդ կոտորածի ժամանակ մենք տեսանք մի սիրուն աքջիլ, որ կացինը ձեռքն առած կռւում էր մեր դէմ, խան, նրա սիրունութիւնը և զահնութիւնը տեսնելով բւնեցինք կենդանի և ահա բերել ենք պատեղ Զեր աղախինը դարձնելու:

— Կռւում էր այդ աղջիկը:

— Այն խան, որպէս առիւծ:

— Բերէք այդ աղջկան:

Խաղի-բէկը գուրս գնաց և բիշ յետոյ ներս մտաւ Մանուշակի հետ: Նազի բէկը գոհունակութիւնից երկինք էր թաշում, այն ինչ Մանուշակը դժուն էր ու մասյլ: Այդ մաայլութիւնը նրա դէմքին տալիս էր մի անօոլոր գեղիցկութիւն: Լուռ նայում էին նրան խանն ու Յակոբը և մտածում: Ինչ էր մտածում խանը, ինչ էր մտածում Յակոբը յայտնի չէր, միայն Յակոբի սրտի մէջ շարժում էր մի ինչ որ որդ և այնուհեղ յաւաշացնում կսկծի նման մի բան: Բայց խանը ուրիշ բան էր մտածում, նա զոհում էր իւր տրփոտ ցանկութիւնը իւր նստակինքի համար ուստի և դիմելով Յակոբին ասաց.

— Եֆենդի, այս աղջիկը կռուել է մեր դէմ և նա արժան է մահուան, բայց զրա հասակն ու գեղեցկութիւնն աշքի առաջ ունենալով խնայում եմ զրա կեանքը: Զահել է, ինքն էլ չէ իմացել թէ ինչ է արիլ բայց ևս սիլում եմ հայերին, այդ պատճառաւ չիմ ուղում որա ջիւան կեանքը խաւարեցնել: Առ զրան քեզ մօտ, Եֆենդի, ևս զրան քեզ ընծայ եմ

տալիս, կ'ուզիս թող գնա, կ'ուզես մօտդ պահիր, միայն հասկացրու զրան թէ ինչքան բարի է խանը, ինչքան սիրում է նա հայերին:

Նազի բէկի դէմքով ալիքներ թռան, բարկութեան ներկը անցաւ նրա դէմքի վերայով, բայց նա զսպից իրան, ինչպէս, նա հազար նեղութիւններով Մանուշակին բերի, խանի դռանը հասցնի, որ խանը նրան մի գեաւուրի ընծայի, .. այդ արդէն սոսկալի էր, ու Նազի բէկը այնպիսի մի մոլի հայեացը զցեց Յակոբի վրայ, որ Յակոբը նայելով նրան մի տեսակ սարսուռ զզաց իւր մարմնում: Յակոբը մահը տեսնելիս այդպիսի սարսուռ չէր զգացել:

— Թող Սլահը օրհնէ, խան, քո թանկապին կեանքը, որ այդքան բարի ևս դէպի հայերը, ասաց Յակոբը խորը դլուխ տալով:

Յակոբը գուրս գնաց խանի մօտից: Մանուշակին իւր տունը տարաւ: Յակոբի գուրս գնալիս Նազի բէկը տատմները կրծատեցրեց և վայրենի հայեացը ուղղեկցեց: Այդ հայեացը լաւ բան չէր գուշակում:

— Նազի բէկ, գնա, հանգուտացիր, դու կ'վարձատրուիս ինձանից, ասաց խանը զառնալով Նազի բէկին:

— Թող, Սլահը օրհնէ Զեր կեանքը, ասաց Նազի բէկը և գուրս գնաց:

Թ.

ՀԱՅԻ ԸՆՏԱՆԻՔ ՈՒՄ.

Երեանի հայ թաղերի աներից մէկում, մի մանկանասակ կին անհանդիստ գուրս ու տուն էր անում և շարունակ նայում էր գէպի սարդարի պալատը տանող ճանապարհը։ Նա շատ անհանդիստ էր, ոչինչ բան կարծես նրա աշքին չէր դալիս և մի ինչ որ միտք նրան անհանդստութիւն պատճառում։ Նրա առաջ վաղվզում էին երկու փորբիկ մանուկներ մինը նրանցից տղայ էր, միւսը աղջիկ։ Երկուսն էլ սիրուն, կայտառ հրեշտակների նման Երեխանները վաղվզելով կարծես յոդնեցին ու մօտենալով մօրը այս ինչ ու այն ինչ բանն էին խընդրում, սակայն նրանց մայրը՝ նազլուն ամենին ուշադրութիւն չէր դարձնում իւր Երեխանների վրայ և համարեած բարկացած գոռում էր նրանց վրայ։

— Երեխաններ, խելօք կացէք թէ չէ ափին կը դայ, ձեզանից կ'գանդատուեմ, նա կը թակի, առում էր նա և շարունակ դուրս նայում։ Դուրսը անց ու դարձ էին անում մարդիկ, դօրքեր, թէ ձիւոր և թէ ոտաւոր։ Երեւում էր որ քաղաքում մի ինչ որ կատարւում էր, ամենը շտապ պատրաստութեան մէջ էին և քաղաքը ստացել էր մի

ինչ որ կենդանութիւն, մի ինչ որ զարկ, բայց թէ ինչ իսկապէս անյայտ էր տիկին նազլութիւն։ Իւր մարդը այդ մասին իրան ոչինչ չէր ասել—Ա՛յս, նա ինչն ուշացաւ, ինչն համար է խանը նրան կանչել, ասում էր ինքն իրեն և կրկին գուրս նայում։ Յանկարծ նա կանգ առաւ և ուշադրութեամբ դէպի փողոցի ծայրը նայեց, այնտեղ երեսցաւ մի մարդ պարսկական համազգեստ հազին։ Նազլուն նրան տեսնելով հանգստացաւ, նրա վրդովմունքը անցաւ,

— Փառք Սստուծոյ, Յակոբը գալիս է, նա ողջ առողջ է ասաց, ինքն իրան նազլուն, բայց այն ովէ է հետը, ինչ որ մի աղջիկ է բերում։ Տէր Սստուծ, ով է նա, միթէ խանը Յակոբին այդ բանի համար էր կանչել։ Նազլուն սկսեց ուշադրութեամբ նրա մռայլ, բայց սիրուն երեսը դիտել։ Նա նրա երեսը դիտելիս յուղում, մռայլում էր ու մի տեսակ նախանձ պատում նրա սրտին։

— Ով է, ինչի է գալիս Յակոբի հետ, ասաց նորից ինքն իրեն նազլուն—բայց ինչ սիրուն աղջիկ է... քոռացածը, աւելացրեց նա և իւր սիրար բռնեց։ այնտեղ յառաջացաւ մի կոկիծ, որ նախանձի և ատելութեան յառաջարան էր գուշակում։ սակայն երբ իւր մարդը՝ Յակոբը Մանուշակի հետ ներս մռաւ սենեակ ու նրա ձեռքը բռնած մռեցաւ նրան, և նազլուն նայեց Մանուշակի ոն սե, բայց ամօթխածութեամբ լի աշքերին, այն ժամանակ նրա սրտի մէջ վայրկենապէս անյայտացաւ ովին ու ատելութիւնը և այնտեղ՝ նրա հոգու մէջ տարա-

ծուեց կարեկցութեան մարդասիրութեան զզացմունքը:
— Նազլու, սիրելին, քեզ համար մի քոյր և մ
քերել խանից նուէր, խնամիր սրան, սփոփիր սրա
վիշտը, սա սրբ է և հայածական, ասաց Յակոբը
իւր կնոջը: Մանուչակը ծունկ չորեց, բռնեց նազ-
լուի ձեռքը համբուրեց և արտասուրներով թրջելով,
հեկեկալով կանչեց.

— Քոյրիկ, խնամիր ինձ, ես հայ քրիստոնեայ
եմ, թուրքերից գերուած, իմ ծնողներից, հայրենի-
քից տարեկորուած:

— Վեր կաց, քոյրիկս, վեր, թող Աստուած
օրհնէ քեզ, ասաց նազլուն և նրա աշքերում էլ երե-
ւացին արտասուրներ:

— Սյս մի է, մալրիկ, հարցըն երեխաները
զարմացած Մանուչակին դիտելով:

— Զեր քոյրիկը, ասաց նազլուն և Մանուչա-
կին ներս տարաւ սենեակ:

— Ուրախ եմ նազլու, որ Աստուած Մանուչա-
կին ուղարկեց, դու էլ մենակ չես մնայ իմ բացա-
կայութեան ժամանակ, դուք կ'ապրէք միասին մինչև
որ տեսներ Աստուած ինչ է ուղարկում:

— Ինչպէս թէ բացակայութեանս ժամանակ,
դու նոր ես գնում որ, հարցըն նազլուն:

— Կոխ, ուուների դէմ կոխ, իմ պարտքը ինձ
կանչում է, խանը պատերազմի է պատրաստում:

Նազլուն մռայլուց, գունատուեց բայց ոչինչ
չառաց նա դուրս գնաց պատրաստութիւն տեսնելու
իւր նոր քոյրիկին հիւրասիրելու համար:

Ժ.

Գ Տ Ա Խ.

Անցաւ մի քանի շաբաթ: Նազլուն և Մա-
նուչակը այնքան մտերմացան, այնքան սիրեցին
իրար, որքան հարազատ քոյրերն էլ չեն սիրել:
Նրանք ապրում էին իրար հոգու մէջ. նրանց վիշտն
ու ուրախութիւնը մի էր և կարծես ոչ մի արգելք
չէր կարող բաժանել նրանց իրարից. Յակոբը տես-
նում էր այդ և հոգեպէս ուրախանում, նա գոհ էր
խանի նուերից, խիստ գոհ, մանաւանդ այդ դառն
օրիրին, երբ ինքը պատրաստում էր պատերազմ
գնալ, կարծես Աստուած ինքը հասցըն իւր սիրա-
սուն կնոջ և մանուկների համար մի քոյր, որ նա
շմնայ մենակ իւր բացակայութեան ժամանակ ու
միայնակ մնացած չ'վշտանայ:

Բայց նազլուն զգում էր, որ Մանուչակի սըր-
տում մի վէրք կայ. խոր վէրք, որ թաքցնում էր
իրենից և ինքը միայնակ տանջուում: Նա ուզում էր
իմանալ, հարցնել, որ ինքն էլ նրա հետ տանջուի,
նրա հետ վշտանայ, բայց չէր համարձակում նրան
այդ հարցը տալ. Մի անգամ, երբ Մանուչակը լուռ-
գէպի երկինքն էր նայում ու զինչ, կաթնանման ով-
կիանում լսպացող լուսնի փայլը դիտում, նազլուն

մօտեցաւ նրան, ձեռքը ուսին դրեց և համբուրելով
նրա զանգուր ճակատը ասաց:

—Մանուշակ ջան, դու մռայլ ես ու տխուր,
ինչն է արդեօք վշտացնում քեզ, ասա հոգիս, ես
էլ քեզ հետ վշտանամ, ես էլ քեզ հետ լամ: Մանու-
շակը խոր ախ քաշեց ու նրա աչքերից արցունքները
կաթիլ - կաթիլ զորուեցին, որոնք վայրինապէս
պապալով լուսնի ճառագայթների տակ, ընկան
գետին:

—Մի լար, հոգիս, ամեն բան կանցնի և դու
կ'զտնես ձերոնց:

—ԶԵ ամեն բան անցաւ ինձ համար, նազլու
ջան, ամեն ինչ խաւարեցաւ: Ա՛խ, նազլու, այս գի-
շերը, լուսնկայ այս հրաշալի գիշերը ինձ յիշեց-
նում է սոսկալի պատկեր:

Ճիշտ այսպիսի գիշեր էր ու լուսինը լեռների
զլից նոր էր բարձրացել, Մերօնք ամենքը ընած
էին օձնայ գաշտում, յոգնած, դաղրած, հազար վըշ-
տով ու ցաւով լի, երբ անիբաւ թուրքերը վրայ տուին
և սկսեցին կոտորել մեղ: Զեռքերիս բռնած հիւանդ
քրոջո գնդակհար արին, արիւնաթաթախ գիտելը
դրի կանաչ խոտի վրայ, վերցրի կացինը և ընկայ
թուրքերի մէջ: Լաւ յիշում եմ, մեղ բոլորիս կ'կոտո-
րին եթէ չը լինէր Սոլանը: այն քաջ տղան, որ
մեղ հետ միացաւ մեր գիւղի մօտ:

—Ո՞ր գիւղի, Մանուշակ, ջան հարցրեց նա-
զլուն:

—Ես Համամլու գիւղիցն եմ, նազլու ջան,

թուրքերը այդտեղից մեղ քշեցին, հօրս իմ աշքիս
առաջ սպանեցին, իսկ ես, մայրս և փոքրիկ քոյրս
հազիւ աղատուելով միացանք Շորագեալից եկող
փախտականներին և զնում էինք գէսլի Թիֆլիս
երբ չարաբաստիկ այդ նոր կատորածը տեղի ունե-
ցաւ:

—Ա՛խ, արդեօք ինչ եղաւ մայրս, կենդանի է
թէ մեռած, ասաց Մանուշակը և երեսը ծածկեց
ձեռների մէջ:

—Մի յուսահատուիր Մանուշակ, սիրտ էր տա-
լիս նազլուն:

—ԶԵ, հայի համար էլ չ'կայ ուրախութիւն, մինչեւ
որ չեն գայ ուռւաց քրիստոնեայ զօրքերը: Քրիստո-
նեան քրիստոնէին միայն կը պահպանէ իսկ անի-
ծած թուրքերը հային չեն կարող հանգստութիւն
տալ:

—Թող Սստուած ոյժ տայ ուռւների բազուկ-
ներին, ասաց նազլուն: Մանուշակը յանկարծ պլու-
խը բարձրացրեց և կարմրատակ աչքերով շեշտակի
նայեց նազլունին:

—Իսկ բո մարդը, նազլու ջան, չէ որ նրանց
դէմ է կռւում, թուրքերին է օգնում:

—Նա օգնում է, բայց երբ ուռւները կը մօտե-
նան, այն ժամանակնակ թողնէ թուրքերին և ուռւ-
ներին կ'օգնէ.

—Բայց միթէ այդ կարող է պատահել, միթէ
Յակոբը կանէ այդ բանը:

—Ես նրան կ'խնդրեմ, կաղաշեմ, կ'յիշեցնեմ

որ ոռուները նոյն խաչապաշտն են ինչ որ մենք, որ մենք պարտական ենք նրանց օգնելու, քանի որ նրանք արիւն են թափում մեր ազգը, մեր էջմիածինը թուրքերի ձեռքից աղատելու:

— Ելդակս համողիլ, չաղլու ջան, և այն ժամանակ սրառումս էլ դարդ չի մնայ:

Երանց խօսակցութիւնը ընդհատուեց, գրսից դռան բախին լսուեց: Նապլուն վերիացաւ դռառը բացեց, եկողը իւր մարդն էր Յակոբը ինչ որ թուրք երիտասարդի հետ: Մանուշակը երբ նայեց թուրք զգեստի մէջ կոլորուած երիտասարդին, նախ սարսեց և ապա վախեցաւ: Բայց երբ ուշագրութեամբ զննեց նրա դէմքը, սիրտը բռնեց, գունատուեց և թոյլ ձայնով կանչեց.

— ԱՇԽ Սոլանն է:

Յակոբի հետ եկողը յիրաւի Սոլանն էր, որ թուրքի զգեստով ծալտեալ մտել էր Երևան և մանուշակի հետքը գտել:

— Ես եմ քոյրիկ, մի վախիլ, ես այժմ հանդիսան, որ քեզ պաշտով դտայ և այն էլ հայի տանը:

— Մայրա, Սոլան, ուր է նա շնչաց Մանուշակը:

— Նա ողջ առողջ է և ապահով տեղ, ուստաց հողում, դռ նրա մասին հոգս մի քաշի՝ Ներսէս սըրբազնի բարերար աջը պահպանում է նրան:

— Բայց լինչպէս եկար այս տեղ: Միթէ չ'վախեցար թուրքերից:

— Հըմ, թուրքերից... թուրքերը թող ինձանից վախենան: Բայց ես երկար այստեղ չիմ կարող

եալ, Մանուշակ, չորհակալ եմ Յակոբ էֆէնդիից, որ ինձ թոյլ տուեց քեզ տեսնելու, ևս հէնց հիմա սիտի հեռանամ Երևանից, կարեւոր գործեր շատ են, զու կ'մնաս Յակոբի հովանու տակ մինչեւ անենք Սստուած ինչ է ուղարկում, ասաց Սոլանը ըստ վլուս տուեց, ջերմաջերմ սեղմեց Յակոբի Մանուշակի ձեռքերը և դուրս գնաց:

— Սստուած յաջողութիւն տայ քեզ, ասաց նրա ոկից Յակոբը և ապա դառնալով Նապլուին ու սնուշակին աւելացրեց—Լաւ տղայ է բաջ և իսկ Եղանացու մեր Մանուշակի համար:

Մանուշակը շառագունուեց և ոչինչ չ'պատասհեց:

— Ի՞նչու համար է Երևան մտել, հարցրեց Ներսէս:

— Ինչու համար, թղթեր է բաժանում, հայերին սորի է կանգնեցնաւմ թուրքերի գէմ, ասաց Յակոբը:

Նրանք դեռ Սոլանի վրայ էին խօսում և դեռ ոլանը մի քանի բայլ չէր արել, երբ պատահեց վկու թուրքի, որոնք գէպի Յակոբի ընակարանն ան գալիս, նրանք նկատեցին Սոլանին և Սոլանն նոցա, բայց առանց կանգ տանելու շարունակեն ճանապարհները: Թուրքերից մէկը կամաց հարց միւսին:

— Տիսար, այդ մարդուն, ով էր, չ'ճանաչեցիր:

— Ոչ չճանաչեցի, պատասխանեց միւսը:

— Բայց գէմքը ինձ ծանօթ թուաց, կարծես

տեսած լինեմ նրան։ Նա հայի նմանութիւն ունէր։
— Չէ, նազի բէկ, անծանօթ թուրք էր, դո
խառնում էս։

Նրանք լուցին և երբ մօտեցան Յակոբի քնա-
կարանին, նազի բէկը կանգ առաւ և ասաց,

— Ահա այն հայի տունը, որը սիրուն ալջկան
տարաւ, մինք այստեղ շատ բան ունինք կատարելու,
զիշեր ցերեկ պէտքէ աշքաթող չանենք և տեսնենք
նվ է գալիս, նվ է զնում սրա մօտ։ Սյս հայն, ես
վախենում եմ երկու երեսանի լինի և մեր սարդա-
գարին մի խաթայի մէջ ձգի, ասաց նա և մօտենա-
րով պարսպի պատին, արանքներից դիտեց ներսը,
և երբ համոզուեցաւ որ Յակոբի մօտ ոչ ոք չ'կաց,
կասկածաւոր ոչինչ չի երկում, հեռացաւ և իւր ըն-
կերոջ հետ կորան Երեսանի ոլոր-մոլոր փողոցների
մէջ։

ՃԱ.

Խ Ա. Զ Ե Յ Ք Ն Բ Ա Ն . . .

Տանջանքի ու վշտի բոսկները հասել էին...
Հասել էր այն ժամը, այն բոսկն, երբ նա իւր անձը
կամ զոհ պիտի բներէր և ընկնէր վշտի ովկեանի
մէջ ու վերջ տալով իւր բազմաշարշար կեանքին
փրկէր մի ազգ, որ գարերից ի վեր տանջուում.. կե-
ղերուոմ և սարսափ բռնութեան տակ և կամ հեռու
փախչելով տանջանքի այդ ահեղ ովկեանից՝ դադար
ու ապր իւր սրտի հոգեկան տանջանքներին ու հան-
գիստ, անխռով անց կացնէր իւր կեանքի մնացորդ-
ները, մինչև որ սև հողը կ'ըրքքէր նրա բազմաշարշար
մալմինը։ Բաժակը արգէն լի էր, լի էր գառնու-
թեամբ։ Թոյն ու լեզի կար այդ բաժակում և նրան
վիճակուած էր խմել այդ բաժակը, խմել մինչև
վերջին կաթիլը... Եւ նա գեռ չէր խմել այդ բա-
ժակը. նա գրուած էր իւր առաջ լի ամենայն դառ-
նութեամբ ու նա գեռ մտածում էր... ահեղ փո-
թորկից էլ աւելի սոսկալի մտքերը կրծում էին նրա
սիրտը, ըրքրում, կտրտում նրա թոքերը և այստեղ
յառաջացնում մի սոսկալի ցաւ, մի զարհուրկի կըս-
կիծ, որին ենթակայ են լինում շտա քիչ մարդիկ,
աղջի մէջ միայն ահճատներ, նրանք միայն, ում

վիճակուած է դատարկել դառն բաժակը մինչև
վերջին կաթիլները... Սյդ դառն բաժակը վիճակուած
էր խմել Ներսէս Աշտարակեցուն՝ Թիֆլսի թեմի
Սուաշեորդին... Եւ նա, նախըան ձեռք թունակից
բաժակին մեկնելը, ընկած էր զարհուրելի մտքերի
մէջ, որոնք տանում էին նրան ովկեանի լիո ալիքի
գլուխը կամ իջեցնում ահեղ անդունդներ, խոր քան
զեհենի անդունդը, զարհուրելի քան դժոխքի կրա-
կը—ու Ներսէսը՝ հայոց հոգեոր այդ մեծ անձը,
այդ ժամանակ տանջում էր, խիստ տանջում:
Յոյն ու յուսախաբութիւնը, հաւատն ու թերահա-
ւատութիւնը, տանջում էին նրան ու կեղեքում
նրա հոգին ու սիրաը... Բայց հասկէ էր ժամը, ա-
հարկու ժամը, երբ նա պիտի ժողովէր իւր հոգուց
բոլոր զօրութիւնները և խմէր թիւնալից բաժանու-
նա արդէն հասկանում էր, որ թիւնալից այդ բա-
ժակով պիտի փրկուէր իւր փայփայած աղզը, ի՞ր
սիրած Եջմիածինը, հրաշալի Մասիսը նոյնան տա-
պանով, ուստի և մօտեցաւ այդ բաժակին՝ քամելու
և իւր կեանքին վերջ դնելու, բայց յանկարծ մի-
խուածի նման կանգ առաւ և շուրջը նայեց...

Մութ և խաւար էր շուրջը. սոսկալի և դոր-
հուրելի էր մարդու մարմինը փշարազելու շափ:
Յինտեղ նա տեսնում էր հոգեսրականներ ապէտ
քան վայրենիները, շարախինդ քան աւազավները,
վատ և զարելի քան դժոխքի գեերը, որոնք անհն
անկիւնից գտում էին «խաչեցէք նրան..» բնշա-
նուշ պատճառաւ, միթէ շար քան է գործում նա

երբ նրանց դուրս է կորզում խաւարի ճանկերից,
երբ նա ուզում է լուսաւորել նրանց միտքն ու հո-
գին և դժոխքի ճանկերից աղատելով՝ լոյտ աշխարհ
ճանել:

Բայց կոյրերը այդ շին տեսնում ու նրանք
դարձեալ գոռում են՝ «խաչեցէք նրան, խաչեցէք
Ներսէսին, նա դաւաճան է, նա մահապարտ է...»

Լուսմ էր Ներսէսը, լուսմ ու նրա սիրտը մոր-
մոքւում, կտոր-կտոր էր վիսում: Իւր գէմ լարած ո-
րոգայթներին նա արհամարանքով էր վերաբերուում
ու մօտենում խմելու դառն բաժակը, որի մէջ գրտ-
ուում էր իւր աղգի փրկութիւնը. . Խորին խաւարի
մէջ, հեռու հիւսիսից նա տեսնում էր լուսոյ մի
րոգրոջ, որ իւր վհատ սրտին հոգի և սէր էր ներ-
շնում, ու նա ձեռքերը կարկառած գէսփի նա օգ-
ոնթիւն էր հայցում... Եւ ահա մի մութ գիշեր,
երբ երկինք ու երկիր խոր ընի մէջ էին ընկզմուած
երակնը արթուն էր և լուս, զլուխը ձեռների մէջ
տուած մտածում էր... Նրա մտածմունքը խոր և ահ-
ուիլ էին, ցաւած որտից արիւն էր հոսում և գրդո-
վում նրա սիրաը, արտասուրները ոլոռն ոլոռն պլոր-
ուում էին նրա աշքերից ալեխառն մօրուսի վրայ և
թափուում յատակին: Սյդ ոչ ոք չէր տեսնում, նրա
հոգին այդ բուլէին ոչ ոք չէր կարդում: Ոմենքը
քետ էին. ընած էին խոր, անգորը ընով ու ոչ ոք
չէր տեսնում Ներսէսի հոգու ահարկու տանջանքը:
Ներսէսը յաւզում էր, տանջում տեսնելով թէ ինչ-
պէս պարսիկները ստի կանգնած, զարդում կոտո-

բում են հայերին — թէ ինչպէս թուրքերը պղծում
էին տաճարները, ոտնատակ տալիս սրբութիւններ և
պարերով սրբագործուած ծէսերն ու արարողութիւն-
ները ծաղր ու ծանակի առարկայ դարձնում... Եւ
այդ գառնացած բովէին, երբ ինքը պատրաստում
էր իր կեանքը վնելու հայոց փրկութիւնը ձեռք բե-
րելու իրեն շրջապատած զանազան անկիւններից,
հոգեորական ու աշխարհական քսու ամբաստանու-
թիւններ էին անում ու խաւարի միջից կանչում
«խաչեցէք նրան...»

— Եւ ես կը խաչուիմ, մըմրաց նա ու գառն
մտքերով շրջապատուած, յանկարծ վերկացաւ տեղից,
մի քանի քայլ արեց ու նկատելով Յիսուսի խաչե-
լութիւնը՝ կանդ առաւ: Նրա մտքի մոայլը յանկարծ
լու քաշուեց և այնտեղ տիրապետեց մի այնպիսի
անդորր պայծառութիւն, որից Ներսէսը ցնցուեց,
արիացաւ ու յանկարծ յետ քաշուելով, ձեռքն առաւ
խուելութիւնը ու զգաց ալօթելու ցանկութիւն:
Ու նա ծունկ չսրբելով, խաչելութիւնը բարձր բռնած,
որտառուշ ձայնով կանչեց: «Հայր իմ, եթէ հնար է
անցցէ բաժակս այս լինէն, բայց ոչ որպէս ես կա-
միմ, այլ որպէս Գու» Նրա ձայնը տարածուեց խո-
րին լուսութեան մէջ, որից պատերն անդամ ոար-
ուուր զգացցին:

Ս.զօթքը թեթևացրեց վշտացած Ներսէսի սիր-
ուը, նա զգաց հոգուոյ այնպիսի անդորրութիւն, որ
կարծես երիտառարդ լինէր ու խաչելութիւնը մի
կողմէ զնելով, նորից նստեց գրասեղանի մօտ, ձեռն

առաւ գրիչը և սկսեց գրել: Սյդ զիրը Ներսէսի
պատերազմական չքարերականն էր, ուր ի միջի
այլոց գրում էր՝ «Սատծուց ինձ վրայ գրած սրբա-
զան պարտաւորութեամբ յայտնում եմ ահա Ռուսաց
օգոստավիառ պետութեան նպատակը: Նա իւր հզօր բա-
զուկը տարածեց մեր հայրեննեաց վրայ, ոչ այնքան իւր
ոեփական օգտի համար, ոքքան մեր անդորրութեան
և բարօրութեան համար ու Քրիստոսի սուրբ կրօնն
ու եկեղեցին տաշտապանելու համար: Բազմաթիւ
քրիստոնէից գերիվարութիւնը, ծերուննեաց և նոցա
որդոց հոսած արիւնը, Թիֆլիսի սուրբ եկեղեցեաց
և վանքերի հրոյ ճարակ դառնալը — այս բոլորը ա-
ռաջ բերին Աստուածապահ Ռուսիոյ տէրութեան ո-
գործութիւնը: Եւ որովհետեւ Քրիստոսի աւետարանը
մեզ համբերութիւնն է քարոզում, վասն որոյ ես,
իբր սրացաւ հայր ձեր, հովիւ սուրբ եկեղեցւոյ և
բարողիչ ճշմարտութեան, պարտք եմ համարում ձեզ
կրկնել Քրիստոսի նոյն պատուէրը: Յիշեցէք Քրիս-
տոսի աւետարաննում թագաւորի թշնամեաց մասին
ասածը թէ՝ «Զթշնամիսն իմ զայնոսիկ որ ոչն կա-
մէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէր այսր
և սպանէք առաջի իմ»: Յիշեցէք ձեր հարց մեծա-
միծ սխրագործութիւնները և աննմանների առարի-
նութիւնները: Գուք նոցա որդիքն էք, նոցա արիւնը
եռ է զալիս ձեր երակներում: Նման ձեր հարց և
նախնեաց՝ հաւատարմութիւնը առ Աստուած,
առ քրիստոնէութիւնը, և առ Բարերարն մեր —
Աստուածապահ Կայսրն Ռուսիոյ, — գերազանց

լասեցէք քան զգոյքն ձեր և նոյն իսկ կեանքն։
Մեռնենք արիութեամբ մեր եղբարց համար և ա-
րատ չ'թողունք մեր փառաց։ Ահա ժամանակ երբ
ամեներեանդ վերածնելով ձեր մէջ մեր նախնեաց
սխրագործութիւնները միաբանութեամբ պիտի քա-
շալերէք միմեանց ասելով «մեռնենք քաջութեամբ
և առանց հայրենեաց դաւաճանելու ժառանգինք մեր
նախնեաց պանծալի անունը ու փառքը։ Մի տարա-
կուսէք, մի դոզաք պարսից արշաւանքերից, հաւա-
տացած եղէք, որ Սոտուծոյ հարշալի փրկութիւնը
կ'պահպանէ ձեզ, իսկ Սոտուծային չնորհը և Ռու-
սիոյ օգոստափառ Ենքնակալի ողորմած ուշադրու-
թիւնը՝ պատկիներ կ'հիւսին ձեզ և թէ բոլոր ձեր հա-
մազգեաց *):

Երբ վերջացրեց Ներսէսը այս ոգիորիչ շրջարե-
րականը այդ ժամանակ արշալոյսը նոր էր բացուել
և սփռել չորս կողմը իւր կենարար լոյսը։ Թիֆլիս
քաղաքը կենդանացաւ ու շարժուեց ու երբ շրջարե-
րականը տարածուեց Կովկասի, Պարսկաստանի ու
Տաճկաստանի մի ծայրից միւսը, հայերը կենդանա-
ցան և ձայն տուին ամեն կողմից։ Հայ կամաւորնե-
րի խումբը արդէն պատրաստ էր իւր դրօշակով,
որին առաջնորդում էր Ներսէս դէպի պատերազմ։

*.) Կովկասի Հայք—Երիցեանի. եր. 237—243.

ՃԲ.

Կ Ր Ա Կ Ի Մ Ի Զ Ի Ց,

Զ մեռը արդէն մօտ էր։ Արագած սարը նո-
րահարսի նման սպիտակ քող էր ձգել գլխին, ու
ճակատը վեր պարզած, նայում դէպի իւր աւագ եղ-
րայրը՝ դէպի ալեոր Մասիսը, Յուրացը հետզհետէ
զգալի էր դառնում, թէն Արագածի ստորոտները
զիռ պատած էին թաւշիայ կանաչավ։ Արագածի
փեշերի տակ, ճանապարհի երկու կողմերում, մի
կրծի մէջ, պահ էր մտած պարսիկների զօրքը իւր
զլուխ ունենալով Երկանի սարդարի եղբօրը Հասան
խանին։ Հասան խանը տեղեկացել էր, որ Ռուսա-
կան մի վաշտ շուտով պիտի անցնի այդ կիրճով,
ուստի թազնուած այդ տեղ սպասում էր նրանց
իւր թակարդի մէջը ձգելու։ Նա անհամբերութեամբ
շուտ շուտ դէպի հեռուն էր նայում ու սպասում
ուստի երկալուն. բայց ոչ ոք չէր երեսում. Գիշե-
րը արդէն վրայ հասաւ ամեն ինչ ընկպմուեց խորին
խաւարի մէջ, բայց պարսիկները դեռ կազմ ու
ուղատրաստ սպասում էին թշնամուն։

Այդ միջոցին կիրծի ճանապարհի վրայ, Գիւմրու
(Աղէքստեղրապօլի) կողմից, երկու ձիւտոր էին գա-
լիս դէնք ու զրահի մէջ կորած և եափունջիների

մէջ փաթաթուած։ Նրանք լուռ էին, ոչինչ չէին խօսում և խիստ զգուշոթեամբ առաջ քայլում։ Սմեն մի քար, ամեն մի թուփ նրանց սրատես աշքերից չէր անյայտանում։

Զգուշութեամբ նրանք նայում էին ճանապարհի աջ ու ձախ կողմը։ Կասկածաւոր շշունջ լոելիս խոկոյն ձիերը կանգնեցնում էին, քննում ամեն ինչ և կրկնու առաջ քայլում։ Մութը հետզհետէ խոտանում էր, երկնքում մի քանի աստղեր էին փայլվում, բայց նրանք էլ շուտով ծածկուեցան ամպերով և քիչ յետոյ սկսեց բարակ անձրե մաղել։

—Առլան, թուրքերի հետքը չի երեսում, տեսնես որտեղ են թաղնուել նրանք, ընդհատեց լուսինը ձիաւորներից մէկը։

—Հեռու չեն լինի նրանք, Գէորգ, սլատասխանեց Ասլանը։

—Անիրանները կիրճը կը լինեն բռնած, ասաց մեզ ծանօթ Գէորգը։

—Հա, ճիշտ է, որպէս զի ոռւսներին թակարդի մէջ ձգեն, ջարգեն նրանց... Բայց պատէ Հասան խանի համար։

—Այդ գեռ հարց է, Ասլան։

—Չէ, հարց չէ, այսպէս թէ այնպէս պիտի անցնենք այդ կիրճով և իմացում տանք ոռւսներին։

—Դմացում տալը հեշտ է, բայց կիրճով անցնեն է դժուար։ Ուրիշ ճանապարհ չ'կայ, իսկ ոռւսները այսօր է թէ վաղը կ'հանգիպեն դրանց և մին եղբայրների կոտորածը անխուսափելի է։

— Ճիշտ է, Հասան խանը մեծ զօրբով անցաւ այս կողմը, անզլիական թնդանօթն էլ այս տեղ է, որի վրայ մեծ յոյս են դնում պարսիկները։

— Բայց Յակոբը լաւ ոմբաձիգ է, նա կարող է մեծ ջարդ տալ։

— Տեսնենք, յոյս ունիմ որ խնայի խը քրիստոնեայ եղբայրներին։

Նրանք լուցին և ամեն մինը մտածմունքներով շրջապատուած առաջ քայլեցին։ Յանկարծ ճրագի աղօտ լուսաւորութիւն նկատեցին և երկումն էլ ձիանները կանգնեցնելով, դէպի լոյսը նայեցին։

— Բանաձին է արդիօք, շշնչաց Գէորգը։

— Չէ բանակը չի կարող լինել, կիրճը գեռ հեռու է, բայց պիտի իմանալ թէ ովքեր են դրանք։ Նրանք մի քանի քայլ էլ առաջ զնացին և կանգ առան։ Այժմ պարզ նկատեցին երկու թուրք, ժայռի խորոշի մէջ, ճրագի աղօտ լուսաւորութեան տակ նստած և մի ինչ որ բաժանում էին իրար մէջ։

— Ե՞... թուրքեր են, հայի արիւն բրտինքով աշխատած ոսկիններն են բաժանում իրար մէջ, ասաց Ասլանը և ցած իջնելով ձիուց սանձը տուեց Գէորգին։

— Ի՞նչ ես անում, ուր ես զնում, հարցրեց Գէորգը։

— Ի՞նչպէս թէ ուր եմ զնում։ Գնաւմիմ նրանց գլուխները թռցնելու։ Անիրանները հայի արիւնք քամեցին, հիմա ոսկիններն են բաժանում։ Դու սպասիր այստեղ, ասաց Ասլանը և մթութեան մէջ կո-

բաւ։ Գէորգը անթարթ աչքերով դէպի ճրագն էր նայում։ Նա տեսաւ թէ ինչպէս Սոլանը մերկացրած սուրբ ձեռքին կատուի զիւրաշարժութեամբ յարձակուեց մի թուրքի վրայ և սուրբ մինչհ կոթը խրեց նրա սրտի մէջ, միւս թուրքը սառածի նման գեռ նայում էր, երբ Սոլանը նրան էլ տեղն ու տեղը պարկեցրեց։

— Անիրաւներ... մրմրաց նա ու արիւնոտ սուրբ նրանց փեշով սրբելով, դարձաւ դէպի Գէորգը — վերջացաւ, մի քիչ սիրտս հօվացաւ, ասաց նա և իւր ձին հծաւ։

— Ապրիս, լաւ սուս ու փուս վերջացրիր, դժոխիքի բաժին արիր նրանց, աւելացրեց Գէորգը և նրանք կրկին սկսեցին առաջ զնալ։ Բայց ահա կիրճը Սոլանն ու Գէորգը պարզ կերպիւ նկատում էին կրակի լոյսերը։ Պարսիկները կիրճի այս կողմից ոչ մի նախագրուշութիւն չէին տեսել, կրակներ էին վառել նրանք այս կողմից ուուներին չէին սպասում։

— Ե՞... հիմա արդէն հանաք անել չի կարելի, ասաց Սոլանը։

— Հա, չի կարելի, սրանք երկուսը չեն, որ հեշտ գլուխները կտրես, տեսնում ես ժայռի զլսի թնդանօթները։

— Տեսնում եմ, բայց յոյս ունեմ Լուսաւորչի աջը մեղ պահապան լինի, մենք բարի գործ ենք կատարում, միաս չկայ եթէ կեանքերս էլ դնենք այստեղ մեր եզրայիների համար։

— Վէհ, շարժուինք, ասաց Սոլանը և նրանք երսները խաչ հանելով մտան կիրճը։

Կիրճի աջ ու ձախ կողմերը, թուրքերը խումբ խումբ նստած կրակի շուրջը, ոմանք նոցանից ընթրում էին, ոմանք էլ իրար ինչ որ պատմում։ Նորիկ ձիաւորների վրայ համարեա ոչոք ուշադրութիւն չ'գարձրեց, որովհետև նրանց հագուստը չէր տարբերւում իրենցից և բացի գրանից այդ կողմից թշնամու չէին սպասում. մեր տղերքը սրտատրով անցան կիրճի միջով և այն է ուզում էին գուրս զալ, երբ երկու ձիաւոր պահապան կտրեցին նրանց տռագը։

— Ո՛վրեր էր, կանչեցին նրանք։

— Խանի ծառաները, պատասխանեց Սոլանը հանդիսատ ձայնով և ձեռքը գէպի իւր ատրճանակը տարաւ։ Նա զգում էր, որ սոսկալի րոպէն մօտենում է։

— Նշանը, գիշերուայ նշանը, հարցրին պահապանները։

— Ահա գիշերուայ նշանը, ասաց Սոլանը և իւր ատրճանակը ուղիղ պահապանի կրծքին դատարկեց։ Թուրքը ճիշ արձակեց և գլորուեց ձիուց։

— Սստուած, փրկէր մեղ, կանչեցին մեր տղերքը և ձիերը մտրակելով սլացան խտարի մէջ։

Բանակը ոտի կանգնեց։ Մի բանի տեղից հրացանների կրակներ բացուեցին, իսկ քիչ յետոյ թնդանօթներից մէկը բանալով իւր ահեղ բերանը՝ գուաց ու սար ու ձոր դղրդեցրեց իւր ձայնով։

Հասան խանը իմացաւ եզելութիւնը և կատաղեց,
նա մի խումբ ձիաւոր ուղարկեց նրանց յետեից,
ստկայն մեր տղերը կայծակի արագութեամբ ոլա-
նում էին առաջ:

Նրանցից քիչ մօտ ոլանում էր մի թուրք
միայն, որը արդին հասնելու վրայ էր, երբ Գէորգը
կանգնեցրեց ձին ու ատրճանակը դատարկելով ա-
սաց.

— Սա էլ իմ բաժինը:

— Թուրքը սուր ճիշ արձակեց ու գլորուեց
գետնին: Ասլանն ու Գէորգը անվտանգ հասան ոտ-
սաց բանակը և ամեն ինչ պատմեցին:

Ճա
ԺԴ.

Կ Ո Ւ Ի Ը Ը.

Մինչպես Հասան խանը կատաղած ոտները
տափէ տափէ էր զարկում, անէծք ու նզովը կարգում
թէ հայերի և թէ ռուսների զլիսին, այդ ժամանակ
Գէնիս Դաւիթով զեներալը, որ Զալալօղու մէջ
կենդրուացած ոռւսաց զօլքերի հրամանատար էր
կարգուած, լուր ստանալով Ս.սլանից և Գէորգից
Հասան խանի տեղի և դիբրի մտախն, առանց ժա-
մակարայս լինելու շտապեց գէպի Սլավեապի ստորոտը:
Ռուսաց մի վաշտ զօրք, մի քանի թնդանօթներով
և մօտ հարիւր կտրիճ հայեր, որոնք միացել էին
այդ վաշտի հետ, գնում էին Հասան խանի ուժեղ
զօրութեան գէմ կռուելու:

Գեներալ Գէնիսը հասկանում էր այդ թուերի
տարբերութիւնը, բայց վստահ իւր կտրիճների վրայ,
և բացի գրանից պարսից զօրքերի վրայ ան գցիլու
նպատակաւ նա շտապում էր առաջ: Յուս զինուոր
ները գնում էին քաջերի պէս, նրանց հետնում էին
վրէժինդրութեամբ լցուած հայ կամաւորները: Հա-
սել էր ժամը, երբ դարիոր տանջանքների վրէժը պի-
տի լուծէին պարսիկներից և իրենց արիւով սոր-
գուած երկիրը աղատէին պարսից բանակալութիւնից:

Կամաւորների մէջ կային հասակն առած հայեր փորձուած կռուի և արեան մէջ, բայց կային և այնպիսիները. որոնք սորը նոր կեանքի մէջ դրած, չգիտէին ի՞նչ է կեանքը, մըն է կեանքի արհաւիրը, այլ հայրենիքի սիրով վառուած մտկլ էին կամաւորների շարքը ու զնում էին արին թափելու:

Մէկը նրանցից, սրին ընկերները Կարօ անունն էին տալիս, հինգ նոր մտել էր այդ շարքը: Նա Սպէրանդրապօլի գաւառի Գեօրան գիւղիցն էր, քսան, քստներկու տարեկան էր, եռուն կեանքով լի, վաւուան և կայտառ երկոսով: Սպուամազը նոր բուսել էր նրա երեսին և սիրուն շզարշով պատել էր նրա պատերն ու բեխերը: Գեօրան գիւղը ասպատակ գառնալով վախել էր, ընկել Զալալովի և այժմ թուանըն ուսին, ատրճանակին ու սուրը մէջըին, կէս ժատագիմ, կէս տխուր, քայլում էր առաջ: Նա նայում էր ուստ զինուորներին, նրանց հաստատ քայլերին ու ի՞րին էլ ոգեորւում էր, հոգի ստանում:

—Կարօ, այսօր մեր կոխը տաք կը լինի, գիտեն, ասաց նրա կողքից գնացող ընկերը:

—Ի՞նչ կոխ, հարցրեց միամտաբար Կարօն:

—Բա ուր ենք շտափում, միթէ կարծում են սալդաթութիւնը մենակ նրա համար է: որ թուանըն ուսին արխային ման գայ:

—Ո՞վ է առում, մենք պիտի կոտարենք թուրքին:

—Բայց նրանք էլ մեղ կը կոտորեն:

—Չեն կորող, տեսնում ես, ասաց Կարօն և ձեռքով ցոյց տուեց ուստական վաշտը:

—Հա, նրանք քաջ են, խօսք չունիմ, բայց պարսիկներն էլ պարապ չեն, նրանց թուրն ու սուրն էլ կտրուկ է:

—Ես պարսիկներից չեմ վախենում, ինքնառաւական կերպով ասաց Կարօն և նրա աշքերը վառուեցին ոգեորութեան կրակով:

—Տեսնենք, ասաց Կարօյի ընկերը և լուռ կացաւ: Նրա սրտի միջից անցաւ մի տեսակ կարելցութիւն գէպի Կարօն:

Սյու ժամանակ լիռան զլսին երեաց թշնամին, Նոռեց զմներալ Դենիսի խրոխտ հրամանը և գունդը երեք մասի բաժանուեց: Հայ կամաւոր գունդը Կարօյի հետ առաջ անցաւ և թագնուեց մի ձորի մէջ:

Կարծ ժամանակ անցաւ և խոր լուռթիւնը խանգարուեց թնդանօթների որոտմանը: Կարօն երեսը խաչ հանեց ու սարսուցաւ: Նա այդպիսի զարհութիւնի որոտմանը չէր լսած:

—Սկսում է, ասաց ընկերը և Կարօյի երեսը նայեց: Կարօն ապուշի պէս լսում էր թնդանօթների որոտը և չ'լսեց ընկերոջ խոռը: Թնդանօթների որոտման հետ խառնուեց և հրացանների ճայթմանըների ճայնը: Կարօն հետաքրքրութեամբ պլուխը վեր բարձրացրեց և նայեց գուրաւ: Ամրող զաշտը նա ծխի մէջ կորած գտաւ:

—Տեսնում ես, գարձեալ ասաց ընկերը, կոխը ինչքան զարհութիւն է:

—Վատարկ բան է, կրկնեց Կարօն:

Սյու բովէին օդը ճղելով, մի ինչ որ հրային գունդ թռաւ նրանց վրայից և ընկաւ զետնին։ Ընկերը Կարօյին հրեց և ասաց.

— Տես, տես։ Կարօն առանց այն էլ նայում էր ոռոմքին։

— Ի՞նչ է դա, հարցրեց նա։

— Երկաթի կտորներ ուրիշ ոչինչ։

Օռոմքը ճայթեց և հոգի ու խոտի կտորներ ցաքսցրիւ տուեց։ Բայց բարերախտաբար ոչ ոքի վեաս չհասցրեց։

Դեռ Կարօն մտայոյդ նայում էր ոռոմքի կողմը, երբ հեռուից թնդանօթների և ոռոմքերի ճայթման հետ լսուեց առասց գնդի „ուրան“ խոկ քիչ յիտոյ մի ձայն որ գոռում էր „յառաջ“։

Կարօն նկատեց որ իւր ընկերները շտապ-շտապ գուրս են թռչում ձորից և վազում առաջ։ Անքն էլ հրացանի կոթը ամուր սեղմած հետեւց նրանց։ Մի փոքր անցան և նրանք մտան կրակի շրջանը։ Գրնդակները մելուների նման բզզալով անցնում էին աջ ու ձախ և գետնին դարկում։ Կարօյի արիւնը սառեցաւ երակների մէջ՝ նա պատերազմը այդպէս չէր կարծում։ Յանկարծ նրա ընկերներից մէկը յետ ու յետ վնաց, դիպաւ իրան և սոսկալի հառաչանք արձակելով գլորուեց գետին։ Նրան հետեւց մի ուրիշը, երրորդը, խոկ մէկի տաք արիւնը մինչև անդամ ցայտեց Կարօյի երեսին։ Կարօյի մարմինը փշաքաղուեց, հաղարաւոր մրջիւններ կարծես վաղիցին նրա մար-

մնով և նա ակամայից կանգ առաւ մի բոպէ շունչը ետ բերելու։

— Առաջ գնա, Կարօ, մի վախի, մենք մօտ ենք թռորքերին, չես տեսնում, ոռուները արդին ըշում են նրանց սուխնիրով, ասաց նրան ընկերը և թեփց բոնելով բարչեց առաջ։

— Աստուած իմ, սոսկալի է, ախ մայրիկ, ասաց Կարօն և տեղն ու տեղը մնաց կանգնած։ Քրտների խոշոր կաթիլները պատել էին նրա գէմքը, աշքերը կարմքել ու երեսը բորբոքուել։ Խոկ այդ բոպէին նրա մտքի մէջ վառ պատկերանում էին նրա անցած գնացած կիանքի պատկերները, որոնք կայծակի արագութեամբ, փոխանակելով մէկը միւսին, տեղի էին տալիս մահուան սարսուուին ու նրան ձգում այնպիսի երկիրովի մէջ, որ գողալուց ատամ-ատամի էր Կարօն իւր աշքի տուաջ տեսնում էր մազարիում։ Կարօն իւր աշքի տուաջ տեսնում էր մազարիում։ Յանկարծ նա ցնցուեց հը իւր բոլոր զարհուրանքով։ Յանկարծ նա ցնցուեց ու չուրջը նայեց, նա տեսաւ որ ամենքը շտապ շտապ, բայց հաստատուն բայլերով, վազում են առաջ, խոկ քիչ յիտոյ նկատեց ոռոսական հեծելազունդը, որոնք սրերը հանած, թռչում էին առաջ։ Այդ ժամանակ նրա մտքի մէջ անցան թռորքերը, Հասան խանը և նրա արած բարերարսուութիւնը։

Նա լիշեց իրենց աւեր զիւզը, նրա ծուխն ու մուխը, մահուիների և կանանց հառաչանքն ու կոծը և մի վայրկեան առաջ իւր վախկատութիւնը մտած բերելով սոսկաց ինքն իրենից։ Արէծինդրութեան սոսկալի բոցը վաղեց նրս երակների մէջ, սիրան

ու հոգին լցուեց մի այնպիսի սպեորութեամբ ու
նա բարձր ձախով գուաց.

—Յառաջ, յառաջ, մահ թուրքերին, սուրը
պատենից հանեց և մղուեցաւ կռուզիների մէջ, Նրա
առաջին պատահող թշնամին մի վիթխարի թուրք էր,
որ ահազին սուրը ձևոին, արիւնոտ աշքերով մօտե-
նում էր Կարօյին: Կարօն նկատեց այդ, յաջող սոտիւն
գործեց և թուրքի հարուածը իրան չ'գիպաւ: Այժմ
հերթը իրանն էր՝ կատաղած զաղանի նման վրայ
պրծաւ թուրքին և սուրը մղերով սիրտը մի քանի
անգամ պտտեցրեց և զուրս հանեց:

Տաք արիւնը սովորեց իրեն, իսկ թուրքը խոր
հառաշանք արձակելով փայտի նման ցած գլորուեց
իւր սոքերի տակ: Թնդանօթների որոտը արդէն
դադարել էր: Թուրքերը չ'կարողանալով դիմանալ
սուսաց յարձակմանը, հետզհետէ փախուստ էին տա-
լիս կռուի դաշտից: Այդ Կարօն չ'գիտէր ու իւր
արածն էլ չէր հասկանում և մղում էր ամենա-
վտանգաւոր տեղերը: Երբ զգաց մի սուր ծակոց,
որ ասեկի նման ծակեց իւր սիրտը՝ այնտեղ յառա-
ջնելով մի խոր ցաւ: Անզիտակցաբար ձեռքը
կրծքին գրեց ու յետ-յետ զնալով ընկաւ մէջքի վրայ:
Ի՞նչ էր այս, ինչն սիրտս ցաւց... Ի՞նչ եղաւ անօ-
րէն թուրքը, Հասան խանը... քոյրիկ, իմ քոյրիկ...
մայրիկ, վաղը Զատիկ է, կարմիր ձու սլէտը է ներ-
կել... զնամ տեսնեմ Եսթերս ուր զնաց..., ու սիր-
տը կտրատւում է, մի կաթիլ ջուր... Շուտ տուէր
ինձ... առաց նա, մի ցնցիւն արեց և մնաց ան-

շարժ: Նրա կուրծքը պատած էր թանձր արիւնով
և բերանը լի արիւնախառն փրփուրով: Նա մեռաւ,
Մնաց անշարժ, բայց աշքերը բաց էին, լայն, ա-
պուշ կրթած, որոնք կարծես նայում լինէին ան-
հուն երկնքին, ուր դանդաղութեամբ սողում էին
գորշ ամպերը և լիզելով Սրազածի ձխուտ զազա-
թը կորչում հեռու և հեռու...

Կարօն մեռած էր, բայց երջանիկ ժայիտը
փայլում էր նրա մատաղ երեսի վրայ: Նա զօհ էր
և երջանիկ: Նա կատարեց իւր պարտքը՝ մեռաւ իր
հայրինիքի վրկութեան համար...

Կոիւն արգէն վերջացել էր և լռել հրացաննե-
րի ճայթմունքների ձայնը: Հասան խանը ամօթա-
հար փախուստ էր տուել գէպի Երեան, պատերազ-
մի դաշտում թովնելով բազմաթիւ դիակներ, որոնց
զլիսին սրտում էին արդէն դիշակեր թռչնները
և յարմար բովէի սպասում:

Ուստաց յաղթութիւնը կատարեալ էր:

Դաստիարակութեան Հայոց

ԺԴ.

Փ Ա. Խ Ո Ւ Օ Տ.

Հասան խանը իւր զօրքի մնացորդներով յետ
էր փախչում: Անյաջողութիւնը և ամօթը քստմնեց-
նում էին նրան:

Նա կատաղել էր, խիստ կատաղել և նիւթ էր
որոնում իւր բարկութեան թոյնը թափելու, սրտի
ոխը հանելու մէկից և ահա վերագարձին մի քանի
կանգուն մնացած հայ գիւղեր նրա վրէժխնարութեա-
նը զոհ գնացին: Նա իւր քէնը թափեց խեղճ ան-
պաշտառն հայ գիւղերի վրայ ու հրամայեց կրակի
ճարակ գարձնել նրանց: Նրա հրամանը կատարուեց
և հայ գիւղերը կրակի զոհ դառնալով, ծուխը միւ-
շի երիխնք էր հասնում և բալորում բարձրելոյն:
Բայց նա լուռ էր և անողոք: Ծխում էին հայ գիւղերը
և այդ գիւղերի ծխի մէջ այրում խորովում էին կեն-
դանի նահատակները ու չորս կողմը լցնում ճնհճ-
րային խեղդող հոտ: Հասան խանը գիւղեան ժայ-
տը երիխն ականատես էր լինում նրանց սոսկաւ-
տահնքներին և մրմրում:

— Գեաւաւրնե՞ր, թող գան ձեր հաւատակիցները
և ապատեն ձեզ բայցերի միջից:

Կրակի շուրջը դների նման վիստում էին Հա-

սան խանի զօրքերը և սոված գայլերի պէս որս
փնտրում, այս ու այն անկիւններից իրանց ցանկա-
ցած առարկաները զուրս կորզում և կենդանի մնա-
ցած կանանց ու երեխաններին կամ սրախողխող անում
կամ կենդանի կրակի մէջ ձգում, ուր կլանում էին
նոցա կրակէ անկուշտ ալիքները և թաղում աների
փլատակների տակ: Կրակի և փլատակների միջից լո-
ւում էին սիրտ պատառող զարհուրելի մարդկային ճիչ
ու աղաղակ, այնքան զարհուրելի, այնքան սոսկալի
որ զժոխքը անդամ կը սարսափէր, կը խղճար, բայց
Հասան խանն ու իւր զինուորները ժպտում էին,
ժպտում ինքնաբաւական կերպով ու իրենց սրտի
մէջ ուրախանում...

Նըանք հանում էին իրենց վրէժը, հանգցնում
իրենց շոփի կատաղութեան բոցը... Թալանն արդէն
վերջացել էր, զիւղի հրդեհը սաստկացել և թալա-
նելու էլ ոչինչ չէր մնացել:

— Խան, բոլորը վերջացրինք, ասաց բէզերից
մէկը մօտենալով Հասան խանին:

— Բոլոր չներին կոտորեցինք, հարցրեց նա:

— Բոլորին խան, մէկը չմնաց կենդանի:

— Լաւ է, շատ լաւ, այժմ զնանք առաջ, միւս
գիւղերն էլ այս օրին հասցնենք, թող լուսաւորենք
մենք գիւղերների յաղթական ճանապարհը կրակէ
փունջերով, ասաց զառն ժպիտով Հասան խանը
և հրաման տուեց առաջ շարժուելու ու բոլոր շըշ-
կայ գիւղերը նոյն վիճակին ենթարկելու:

Հրամանը ճշտութեամբ կատարուեց: Անցած

ճանապարհին հետզհետէ բուսնում էին կրակէ փունչիր, որոնք լուսաւորում էին ռուսաց գօրքի յաղթական ճանապարհը ու նրանց միրտը ճմլում, խոցուում։ Կրակէ այդ փունչիրի միջից դեռ լուսում էին հեծկլտանքներ ու մահամերձ հառաշանքներ։ Բայց գաղանը շտապում էր առաջ նա չէր կանվնում, չէր սպասում դէմ յանդիման կանգնելու ռուսաց գնդին, այլ չարագործութեամբ առաջ քայլում մինչև որ հասաւ մի դաշտ, ուր իւր առաջ բացուեց հին հին գարեւից շմբած հայոց մենաստանը՝ ո. Եջմիածնի վանքը։ Կատաղած Հասան խանը կանդ առաւ, վայրենի աշքերը դէպի վանքը գարձրեց ու ցայց տալով դէպի յաղթական խաչերը, որոնք փայլում էին Եջմիածնի կաթուղիկների դլխին—կանչեց։—

— Շարեցէք թնդանօթները և հիմնատակ արէք գեաւուրների այդ խաչերը և հաւասարեցրէք հողի հետ։

Խանին շրջապատող բէկերը սոսկալով լսեցին նրա հրամանը և տեղներից չշարժուեցին։

— Զէք լսում, գուաց աւելի զայրացած Հասան խանը, քանդեցէք գեաւուրների այս վանքը և հողի հետ հաւասարեցրէք։ Բէկերը նորից մնացին անշարժ և լուռ, նրանք սփրթնած դէմքերով գետնին էին նայում։

Հասան խանը դեղնեց, սփրթնեց, երեսը մեռելի գոյն ստացաւ, բայց աշքերը կրակներ ցայտեցին։ Նա սուրը պատենից հանեց ու ահեղ ձայնով դուաց։

— Դուք չէք լսում, իմ հրամանը գետին էք ձգում, բայց իմացէք որ խանը անհաւատարիմներին պատժել դիտէ, ասաց նա և ուզեց յարձակուել, սուրը մզել ուզիլ իւր առաջ կանգնած ծերունի բէկի կուրծքը, երբ նա ծունկ չոքեց Հասան խանի առաջ ու դողդոցուն ձայնով ասաց։

— Խան, մենք քո ստրուկներն ենք, արա մեղ հետ ինչ կամինում ես, բայց մի քանդիր քրիստոնէից այդ վանքը։ Յիշիր որ վարդապետները օրհնեցին Շահ-զադէի թուրը և նա դրանով յաղթեց տաճկաց*): Յիշիր խան, որ ռուսները երկու անգամ եկան Երևան նուածելու և պարտութիւն կրելով յետ քաշուեցին, բայց նրանք ոչ մի անգամ ձեռ շտուխն մեր մէջիներին... Հասան խանը հանգարտեց, իջաւ նրա բարկութեան բոցը, մասյոյդ սուրը պատենանը դրեց և ասաց։

— Լաւ բէկ, թող քո խօսրը լինի, գեաւուրների վանքը թող կանգուն մնայ, ասաց նա և զօրքը յետ քաշեց։

Եջմիածնը փրկուած էր վտանգից,

*.) Նազիր շահի հրովարտակի զօրութեամբ Եջմիածնին տուած է յաւիտենական ժառանգութիւն 12 զիւղ և մի ոսկեայ կանթեղ թանկագին քարերով զարդարուած, որ վառւում է Փրկչի պատկերի առաջ։ Այդ ընծայաբերութիւնը Շահի ծանր հիւանդութիւնից յետոյ է լինում նույն հիւանդութեան մէջ տանջուելու ժամանակ, թւում էր նրան մի ձայն, թէ իւր առողջութիւնը վերադարձնելու համար նա պիտի գնայ Եջմիածնին և այնտեղ Փրկչի առաջ,

զգում էր որ ահռելի ժամը ժօտենում էր, զգում էր որ գարունը բացուելուն պէս մահի և կեանրի կոիւ է ունենալու և երկիւղ կրկոլ հայերի ապոտամբութիւնից, խումբ-խումբ նրանց գաղթեցնում էր կամ պարսկաստանի խորքերը և կամ լցնում Երեանի բերդը, Երեանում էլ տեղ չ'կար, նա լցուած էր ծայրէ ի ծայր թէ թուրք զինուորներով և թէ պատանէ հայերով:

Մինչդեռ Պարսկաստանը և Երեանի սարդարը պատրաստութիւններ էին տեսնում, Ռուսաստանն էլ ներսէսի աջակցութեամբ խորհուրդներ էր կազմում և զօրքեր կենդրուացնում: Ներսէսը հետզհետէ ողերուամ էր և հրճում նրա փայփայած գաղափարները իրականութիւն էին ստանում: Սնթիւ նամակներով նա աւետիս էր կարգում ամեն տեղ ցրուած հայերին, ոգերում նրանց, խրախուսում շխնայել իրանց կեանքը հայրենիքի ազատութեան համար: «Ոտքի կանգնեցէք հայոց քաջեր զրում էր նա, թօթափեցէք պարսից լուծը, ուրախացրէք ալեգարդ Մասիսին, մի անգամ էլ արիւնով ներկեցէք հայրենի հողերը և ապա ապրեցէք ազատ... ժամ է արդէն, օն անգը... հիմա կամ երբէք...» Եւ հայոց ազգը զարթեց, նա իւր կեանքը պատրաստեց զոհելու իւր հայրենիքի և իւր քրիստոնեայ եղբայրների համար: Ստացուեց Նիկողայոս Ամենասովորմած Կայսեր հրովարտակը՝ յանուն ներսիսի, որ իւր գոհունակութիւնն էր յայտնում թէ ներսէսին և թէ հայոց ազգի հաւատարմութեան: Ներսէսն աւելի

ժԵ.

ԽԱ. 2 ԵՒ ՍՈՒՐ.

Զմեռը վրայ հասաւ, փշեցին սառը բամիներ և սար ու ձոր ծածկուեցաւ ձեան թանձր շերտի տակ: Բնութիւնը թմբեց, խոր րուն մտաւ, նորից արթնանալու, նորից կենդանանալու և աշխարհին նոր կեանք, նոր եռանդ ներշնչելու, Մնուած էր բնութիւնը բայց մեռած և թմբած չէին մարդիկ: Հայոց երկիրը տենդային աշխոյժով պատրաստութիւններ էր տեսնում և զարնան գալստեան սպասում: Պատրաստում էր թուրքը, պատրաստում էր հայն ու պատրաստում էր ռուսը: Նրանք զէնքն ու զբանը սրում էին իրար գէմ կոռւելու, իրար կոսորելու ու վերջին անգամ իրար ոյժը փորձելով կամ մեռնելու և կամ աղատութիւն ձեռք բներելու:

Հուսէին Ղուլի խանը՝ Երեանի սարդարը,

որ եկեղեցու ձախ անկիւնումն է, աղօթք անէ Սատծուն, Մի կաթոլիկ միախոնար, որ թժկում էր Շահին, խորհուրդ է տալիս նրան անպատճառ կատարելու այդ: Նադիր Շահը, որ երբէք վանքում չէր եղած, եկեղեցին ներս մտնելով, իսկոյն ճանաշում է իւր երազում տեսած պատկերը աղօթք է անում նրա առաջ, առողջութիւն ստանում և ընծայում յիշեալ կանթեղն ու զիւղերը վանքին:

խրախուսունեց և խաչը ձեռից շպցելով միւս
ձեռքին սուր առաւ։ Սյդ բաւական չէր՝ նրա հրա-
ւերքները հաւարեցին ամեն կողմից կամաւոր հայեր
որոնք մանելով նրա դրօշակի տակ կազմեցին հայ-
կական առանձին գունդ։ Հետևեալ 1827 թուի գար-
նանը ամեն ինչ պատրաստ էր, Վարախ*) անուա-
նեալ հրավարակը դդրգում էր։ Սյնտեղ երկու հա-
րիւրից առելի կտրիներ կազմ և պատրաստ կանգ-
նած էին և սպասում էին իրենց սիրելի Ներսէսին։
Խմբի դրօշակը ծածանում էր մեզմ քամուց և մի
սիրուն պատկիր ներկայացնում։ Կտրին զինուորների
գէմքերը փայլում էր ոգեսրութեան կրակով և նրանք
անհամբեր սպասում էին այն բռպէին, երբ հրաման
պիտի ստանային մղուելու պարսիկների շարքերի
մէջ։ Հրավարակը լի էր խուռն բազմութեամբ։

Թուսաց և վրաց մեծամեծները ներկայ էին
այդ հանդիսին և նրանք էլ գովասնքով էին խօսում
խմբի մասին։ բայց ահա երենցաւ արհին՝ Ներսէսը
ձի հեծած։ Զինուորների սրտերը տրովտրովաց և
թունդ առաւ։

— Ողջոյն բաջերիս, ասաց սրբազնը և խաչ-
կնքեց հայ զօրքին։ Անվերջ կեցցեն և ուրան թըն-
պացրեց օդը։

Երբ կեցցէները վերջացան, այն ժամանակ
' Ներսէսը ոգեսրուց նրանց սրտաշարժ ճառով և օրհ-
նեց նրանց։ Զինուորական երաժշտութիւնը նուա-

գեց և հայոց դօրքը ուաղմաւոր ձեռով անցաւ արհւոյ
առաջ։

— Ապրիլ քաջեր, խրախուսում էր Ներսէսը ու
ինքն էլ հրճում։ Գունդը պատասխանում էր.

— Կեցցէ Ներսէսը, ապրի Ներսէսը...

Հանդէսը վերջացաւ։ Ներսէսը յանձնեց հայոց
զնդի վերջնական կազմակերպութիւնը Յարութիւն
աւագ քահանայ Վլամդարեանցին խվլ ինը ճանա-
պարհ ընկաւ Զալալօղի, ուր կենդրոնացած էր ու-
սաց զօրքը, նրանց դէպի կոխւ առաջնորդելու։

*) Այժմեան Ծղերս սնդրեան այգու տեղը։

Ճ. 2.

Զ Ի Ւ Ւ Ե Զ .

Պուրաք ոռնում էր բուքը: Ամպի նման ձիւնի ահազին ըիւրեները թոցնելով վեր՝ սատանի քամու նման պտտեցնում էր, մի տեղից միւաը անցնում, հեծկլում, հեծեծում, հոգևարք մարդու նման հառաշում և ապա մտնելով խոր ձորի մէջ, կամ ժայռերի արամեներում կծկում էր, փորբանում ու շունչը փշում: Բայց լեռների գագաթներին կամ բաց դաշտերի մէջ սառը քամին դեռ լալիս էր ու ոռնում և իւր մահարեր չնշով մեռելութիւն սփռում չորս կողմը... Յիրաւի մեռած էր բնութիւնը, և ու ձոր ծածկուած էին թանձր ձիւնով և ոչ մի կենդանի արարած չէր երեսում չորս կողմը: Երբեմն երբեմն միայն կռնչիւնով անցնում էին ագռաները և մեռած բնութեան մէջ կենդանութեան նշով միայն թողնելով, անցնում կորչում էին և ասպարէզը թողնում մահաշունչ քամուն... Արել արդէն թագնուել էր բարձրաբերձ լեռների ձիւնապատ գագաթների յետեր և խաւարք գաղտագովի, կարծես վախնալով, հետզհետէ պատում էր երկրին:

Նա գալիս էր սողալով խոր-խոր ձորերի միով և կամաց-կամաց տիրապետում նրանց, ապա

բարձրանում լեռանց փեշերը, նրանց էլ խաւարով պատում և ապա իւր մռայլ հայեացքը վեր ուղղելով, գէպի լեռնային գագաթները, առանց ձայն, առանց շունչ հանելու, սովում էր վերև նբանց գագաթներն էլ պատում մե խաւարով... Տաղտկալի և զարհուրելի էր դառնում երկիրս: Զիւնը էլ չէր փայլում, ահանում էր և այդ մութի մէջ երեսում էին փայլուն, ճրազի նման կետեր, որոնք ձորերից գաշտերն էին գազում ու սոսկալի բնութիւնը լցնում մհոած ոռնոցով... Այդ կետերը սոված գայլեր էին, որոնք դիշերային մթութեան մէջ, որսի էին մանգալիս և սովածութիւնից ատամները կրծտացնում: Այդ միջոցին Փամրակի զաշտի վրայով անցնում էին երես ձիւուրի Զիւնը յողնածութիւնից հազիւ շարժում էին և ամեն մի ոտք փօխելիս խրում էին թանձր ձիւնի մէջ մինչև սրունդները: Զիւռնիներն էլ փաթաթուած էին եափունջիների և բաշլուների մէջ, բայց ցուրտը, մանաւանդ դէմից փշող սառը բամին, սարսուեցնում էր նրանց մարմինները և նրանք շուտ-շուտ մտրակելով ձիերին շտապում էին համնել մի տաք օդեան և հանգիստ տալ թէ իրենց և էէ ձիերին: Զիւռներից մէկը Ասլանն էր, մրւու գորգը, որոնք մտայով առաջ էին բայլում:

— Յուրաք հանար չէ անում, առայ Գէորգը լմդհատելով լուռթիւնը: Ասլանը ոչինչ չպատահանեց: Նա կարծես շնոր Գէորգի խօսքերը:

— Հը, ինչ ես լիզուդ փորդ ձգել, չիս լում, առայ նորից Գէորգը և ձին կանդինցըց:

— Գհան առաջ, մի կանգնիր, պատասխանեց Առանք:

— Ո՞ր ջառու ջահանդամը զնամ, ոչ ճանապարհ է երևում, ոչ դիւղ. թէ նրանդ ենք Ալլահը զիտէ:

— Ջառու ջահանդամը թող-թուրքերը զնան, գու ուր ես զնում, ասաց Առանք և մտրակեց Գէորգի ձիուն. քիչ էլ զնանիր, ահա այս թմբի տակ հայի զիւղ կայ, որտեղ զիշերս կը մնանիր և եղաց Աստուծով տեղ կ'հասնենիր:

Նրանք լուռ առաջ զնացին, քիչ յետոյ առաջների թմբի շուրջը պտտեցին և յանկարծ ձիերը կանդ առան և ականջները խշկոտելով առաջները նայեցին, մօտ կէս վկրստի վրայ փայլուն կետեր նկատեցին. իսկ քիչ յետոյ լուռեց նրանց զարհուրելի ոռնոցը:

— Ե՞հէ, զայլերը որս են գտել և նրա շուրջը պտտում են, տեսնես ինչ որս են գտել, առաց Առանք և նրանք նորից առաջ զնացինք Յիրաւի չորս հինգ զայլ ետերի ոտքերի վրայ նստած՝ կանգ էին առել մի տեղ և ատամները կը ճաշնելով ոռնում էին. Նրանք ճանապարհորդների մօտենալը տեսնելով, թողին իրանց տեղը և փախան հեռու:

Ճանապարհորդները մօտեցան այդ տեղին և շփոթուած կանգ առան: Նրանք իրանց առաջ մի խրճիթ տեսան, որի գուները բաց էին և խրճիթի միջից լուռում էին աղիողորմ հառաշանքներ և երեխանց ճիշ ու կական:

— Մենք արդէն զիւղումն ենք, ասաց Առանք,

իշտանք, տեսնենք նւմ խրճիթնէ սա, որ գուռ չունի և զայլերի համար աղատ մուտք է պատրաստուած:

Նրանք իշտն ձիերից, չորս կողմը նայեցին, բայց ոչ մի կողմից կրակի լոյս չը նկատեցին: Ձիւնը այնքան առատութեամբ էր թափուել, որ զիւղի խրճիթները չէին երևում ձիւնի տակից: Թանձր ձրինը թագել էր ամեն ինչ:

— Աստուած իմ, օգնութիւն տուր կամ առ հոգիս, լուռեց յանկարծ խրճիթի ներսից մի ցաւալի ձայն, որը ցնցեց մեր ճանապարհորդների մարմինը, Ասլանը խելագարի նման ձիու սահնձը յանձնեց Գէորգին և ներս մտնելով բաց գանից ասաց.

— Այստեղ մի գժբախտութիւն է պատահել, ուշոք օգնել սրանց, ասաց ու մի քանի քայլ առաջ զնալով կայծակնահարի նման կանգ առաւ:

Կիսախսաւար խրճիթի մի անկիւնում, խոնաւ և սառն հոգի վրայ զցած էր մի քանի հնամաշ կապիրտներ իսկ նրանց վրայ, ցնցոտիների մէջ, փաթաթուած երեսում էին մի քանի զլուխներ, որոնք կը ծկուել փաթաթուել էին իրար և կազմել մի մսային գունդ: Խրճիթը կիսով չափ լիբն էր ձիւնով և թանձը ծխով, որը արգելում էր պարզ որոշել թշուառութեան իսկական պատկերը: Կանթեղի աղօտ լոյսը և խրճիթի մէջ տեղում առկայժող փայտի կտորը միայն թոյլ կերպով լուսաւորում էին այդ բատմենի պատկերը:

Առանք գիռ աղուշի նման կանգնած շուտուու աշքերն էր տրորում, բայց երբ նրա աշքերը

սովորեցին ծխին ու մթին, երբ նա պարզ որոշեցիր առաջ գտնուած քստմնելի պատկերը, այն ժամանակ մի խոր հառաչանք դուրս թռաւ նրա սրտից և նրա աշքերը լցուեցին աղի աղի արտասուրներով և ցած գլորուեցին:

—Ո՞չ, սոսկալի է, սոսկալի... մրմրաց նա և նրա մաղերը փշաքաղուեցին:

Նա խոր առաջ տեսաւ մի կմաղք դարձած կին չորս թէ հինգ երեխաներով շրջապատուած, որոնք ամուր-ամուր կպել էին թշուառ կնոջը և համարեան խեղդում էին նրան, Յնցոտիները չէին ծածկում նրանց մարմիները և նրանք կողում էին ցրտի սաստկութիւնից, Թշուառ մայրը իւր թոյլ չնչով տաքացնում էր ամենափոքրին, որը ամուր քաշում էր մօր ցամաքած ստինքները և ապա աղիողորմ բառաշում... Մի երեխան միայն, այդ մսային զնդից քիչ հեռու էր ընկած ու ինքն իրան ինչ որ խօսում էր, զառանցում ու ակնակապիճներից գուրա ընկած աշքերով չորս կողմը գիտում, առանց հասկանալու թէ ինչ է կատարւում իւր շուրջը...

Ինչպէս երեսում էր խեղճ կինը գտնւում էր կիսապշութեան մէջ, ցամաքած աշքերը կարծես հանգչում էին ու առկայծող կեանքը չքանում.. Նա տպուշ, անմիտ աշքերով նայում էր Սոլանին և ոչինչ չէր խօսում, ոչինչ չէր առում, երկիւղի կամ ուրախութեան ոչ մի նոյզը չէր արտայայտում իւր երիսին, Թորշումած դէմքը նոյնիքան սառն էր և անդզայ, որքան դրսի ձիւնը...

Բայց Ասլանը երկար կանգ չ'առաւ նա ժողովեղ իւր ինքնազիտակցոթիւնը և հասկացաւ, որ պէտք չէ լուս, ձեռքերը ծալած կանգ առնել, սարսափել թշուառութեան ովկեանից, այլ պէտք էր անմիջապէս օգնել թշուառներին: Նա շտապով եափունջին հանեց, թափ տուեց, զցեց թշուառների վրայ և ապա մօտենալով Գէորգին ասաց.

—Գէորգ, խորչինները ցած բեր, ձիերը տար մի տեղ տեղաւորեցրու և ինքդ շուտ արի... այստեղ... Ասլանը այլ ևս չկարողացաւ խօսել, արտասուրները նրան խեղդուցին:

—Ի՞նչ է պատահել, դու լալիս ես, հարցրեց Գէորգը:

—Լաց լինելուց աւելի մեծ բան կայ այստեղ, եղբայր, թշուառութեան ծով չէի տեսել այժմ տեսայ:

Գէորգը այս կողմը այն կողմ ընկնելով վերջապէս ձիերի համար մի տեղ գտաւ, նոյն իսկ այդ խրճիթի մօտ, նրանց կապից և ինքն էլ խրճիթ մտաւ: Ոյդ ժամանակ Ասլանը խանջալը հանած, սիւներից փայտ էր կոտրատում և կրակ վառում:

Կրակը վառուեց, նրա ջերմ ճառագայթները տարածուեցին չորս կողմը և կարծես տաքացրին թշուառների մարմինները: Եափունջու տակից նրանք այժմ հետաքրքրութեամբ նայում էին մեր ճանապարհորդներին, իսկ կինը կիսով չափ հստելով տեղում ամօթխածութեամբ գետին էր նայում: Զոկ լինիած երեխան իւր զառանցելը չէր դադարեցնում և երբ Ասլանը նրան մօ ոեցաւ ու ձոռը դրեց ճա-

կատին, նա սոսկումով նկատեց, որ նա այրվում էր ջերմի մէջ։ Նա հիւանդ էր և խիստ հիւանդ։

— Հաց, մայրիկ, մի կտոր հաց, կանչեց մէր երեխայ,

— Սոված եմ։

— Քաղցած եմ, կանչեցին զանազան կողմերից։

Մեր տպէրքը քնած չէին, իրենց խուրջններում ամեն ինչ ունէին՝ գինի, հաց, պանիր։ Երբ նրանք կերակրեցին և կաղզուրեցին թշուառներին— Սոլանը դիմելով թշուառ մօրը հարցրեց։

— Մայրիկ, ի՞նչու ձեր գոււը բաց է, գուռ. չկայ։

— Թուրքիրը կոտրեցին, որդիս, նրանք տարի տուին մեր գիւղը, շատերին կոտորեցին, շատին էլ փախցրին։ Ամբողջ գիւղում մնացին չորս թէ հինգ ընտանիք, որոնք իրարից հեռու են ապրում ու ոչինչ յարաբերութիւն չունին։ Թշուառ տղամարդուն սպանեցին աշքերիս առաջ և մենք որբ մնացինք անտէր, անտարական։ Չմեռն էլ վրայ հասաւ և մենք չկարողացանք ոչ մի կողմ գաղթել։ Հացի վերջին բրժուճը երէկ վերջացրինք ու մենք գայլերի կերակուր պէտքէ լինէինք եթէ Սոլանած ձեզ չուզարկէր։

Սոլանը լում էր և խոր հառաչում, գառն մտքերը յուղում էին նրա սիրտը և տանջում նրան։

— Ահա պատերազմի հետեանրը, բայց մինչ երբ պիտի շարունակուի այս, արդեօք հայոց աղբի համար մի օր արև պիտի ծաղի թէ ոչ, գարձաւ նա դէսի Գէորգը։

— Սոլանած ողորմած է, Սոլան, ամեն բան լաւ կը լինի, բիշ էլ և աղատ չունչ կը քաշեն հայերը։

— Սոլանած տայ այդպէս լինի։

Սյդ ժամանակ հիւանդ երեխան մի ճիշ արձակեց և մի քանի ցնցիւններ արձակելով մնաց անշարժ։ Մայրը որդիկորոյս գաղանի նուան վրայ ընկալ և գրկելով նրա անշունչ գիակը, խելացնորի նուան կանչեց։

— Բալիկս, սիրուն բալիկս, ես պիտի մեռնէի դու ապրէիր, այս ինչ եմ տհմնում, քուանան մօրդ աչքերը, ասաց նա ու գառն հեկեկանքները խեղանեցին նրան։

Սոլանն ու Գէորգը լուռ լսում էին մօր խոռքերը և յուգում, նրանք հասկանում էին մօր վիշտը։

— Սրանց այստեղ չը կարելի թողնել, ասաց վերջապէս Սոլանը, պէտք է մի կերպ Զալալօղի հասցնենք թէ չէ բոլորը կը կորչեն։

— Պէտք է տանել, կասկած չկայ, այնտեղ քիչ կը թեթեանայ գրանց վիճակը։ Ներսէս Սրբազնն էլ շուտ այնտեղ է գալու։ Մի ամսից գարունը կը սկսի և այս ժամանակ տեսնենք ինչ կանենք։

— Մեզ հետ ինչ լինում է թող լինի գոնէ այս թշուառութիւնը չը տեսնենք, ասաց Սոլանը և նրանք երկուսն էլ լուռ կացան, մտքերի մէջ ընկան, առանց աշք անգամ խփելու լուտացրին կրակի շուրջը։

Երբ լուսացաւ երեխալի գիակը հազին յանձնեցին իսկ միւսներին իրենց ձիերի գրայ նստեցնե-

լով, իրենք սանձերը բռնեցին և ստով աւագ ընկան: Երկրորդ օրը հասան Զալալօղի և թշուառներին տեղաւորելով իրենք ոռւսաց զօրքի հետ միասին սպասեցին Ներսէս Սրբազնի գալստեանը:

ԺԷ.

ԳՆՉՈՒՀՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ.

Գեղածիծաղ գարունը բացուել էր... Նա կեանք և հոգի էր ներշնչում մարդկանց սրտին, բայց նազուի և Մանուշակի որտերից արիւն էր կաթում, Նրանց սրտերը լի էր դառնութեամբ:

Վիշտն ու տրտութիւնը իրանց ամբողջ զօրութեամբ կաշկանդել էին նրանց հոգին ու միտքը և նրանց զցել յուսահատութեան մէջ: Գարնան սկսուելով սկսուել էր պատերազմական գործողութիւնները, աւելի յամառ աւելի սասատիկ կերպիւ: Երեանի սարդարը՝ Յուսէին-Ղոլի խանը, Երեանի բերդը ամրացնելուց յետոյ, իւր եղրօրը՝ Հասանին մեծ զօրքերով ուժարկել էր ուռմսներին գիմագրելու և նրանց յառաջ խաղացումը արգելելու: Սյդ զօրքի մէջն էր Յակոբը իւր անգիտական թնդանօթով, որը ահա մի շարաթէ էր ինչ թողել էր տունը, տեղը, մանրիկ դաւակներին և նազուին ու հեռացել գնացել գէպի պատերազմ, թողնելով ընտանիքը Սատուծոյ նախախնամութեանիք: Երեան քաղաքը եռում էր, Փողոցները լիքն էին զինուած մարդկանցով, որոնք շտապ-շտապ, գունդ-գունդ անցնում էին փողոցներում և քաղաքը ձգում մի տեսակ տենդային կենդանութեան մէջ:

Դուք այսօք Դիշ
ճապատեցի կռայ
Ծովու եմ Եւ Եւ
Դուք այսօք Ե՞՞Ե՞
Երան իրեւ, բայց
Դուք այսօք Ե՞՞Ե՞
Դուք այսօք Ե՞՞Ե՞
Դուք այսօք Ե՞՞Ե՞
Դուք այսօք Ե՞՞Ե՞

Սակայն քաղաքի այդ եռուն կեանքը նրա շարժողութիւնն ու ժխորը, ոչ մի տպաւորութիւն, ոչ մի հետևանք չէին թովնում ոչ նազուի և ոչ Մանուշակի վրայ։ Նրանք փակուած սենեակում, բւռ են-թարկուել էին իրանց վշտին և ծանր հառաշանքներ էին արձակում։

✓ Նազուն նստած բուրդ էր զգում և դառն արցունքները հեղինելում էին նրա աշքերից, իսկ Մանուշակը նրանից մի փոքր հեռու, գլուխը կռթնել էր ձեռքին և ապուշ կտրած աշքերով դիտում էր մի կետին։ Երեխաներն էին միայն, որոնք անուշ ճռւղուն էին արձակում և անհոգ թռչնիկների նման վազվղում։ Նազուն բուրդը զգելով դեռ լաց էր լինում և լացակումաց մրմրում մի երգ և ասում.

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ
Մանիր թելեր հաստ ու բարակ
Որ ես մոռնամ իմ ցաւեր...*)

Նա երդում էր ու լալիս, լաց լինելիս խոր հառաշանքներ հանում և ապա ճախարակը նորից պատաշնում։

—Քոյրիկ ջան, մի լար, մի կոկծացնիր ինձ, դարձաւ Մանուշակը նազուին և նստեց մօտը։

—Ա՛յս, Փանուշակ ջան, ինչպէս շըլամ, ինչպէս չը խորավիմ, Յակորս գնաց, կուիւ գնաց. գիտես

ինչ սոսկալի է կոխը, արդիօք երբ պիտի վերջանայ և հս նրան նորից տեսնեմ...

— Աստուած ողորմած է, քոյրիկս, նեղ օրերին լայն օրեր էլ կայ, նա ողջ և առողջ կը վերադառնայ պատերազմից և գուք ուրախ ու երջանիկ կեանք կանցկացնէք։

— Բայց սիրտս, Մանուշակ ջան, սիրտս այդ չէ ասում, նրա բաժանուելու բոպէին հոգիս այնպէս խռովուեց, այնպիսի մի սոսկալի տրտմութիւն պատեց վրաս, որ կարծում էի թէ նրան վերջին անգամն եմ տեսնում։

— Նախազգացմունքներին մի հաւատա՛, Նազուն ջան, նրանք երրեմն սխալ գուշակութիւններ են անում և զուր շփոթում ու մոլորեցնում մարդու հոգին։

— Երանի թէ այդպէս լինէր... Բայց նա գնաց կռուելու ոռւաների դէմ, իսկ ոռւաց սուրը կտրուկ է և գնդակը նպատակին ծառայող... Ա՛յս եթէ նա ոռւաց բանակում ծառայելիս լինէր՝ ես այսպէս չէի վրդովի, ցաւի։

— Գրիգոր Լուսաւորչի ս. Աջը նրան պահապան կը լինի, նա թէ և թուրքերին է ծառայում, բայց հոգով և մտքով հայ է։ Հայի Աստուածը շիթողնի որ նրա հետ վատ բան պատահի։

Այդ միջոցին փողոցի միջով անցնում էր մի գնչուհի կին կիսամերկ երեխայի ձեռքը բռնած։ Մանուշակը նրան տեսնելով, նրա մտքի մէջ մի բան ծնեց, ուստի դառնալով նազուին ասաց։

— Քոյրիկ, ահա փողոցով մի գնչուհի կին է

*) Ոտան Պ. Ա. Ա. Ե.

ահցնում, լաւ չի լինի եթէ կանշենք և մեր ապագան իմանանք, տեսնենք մեռնելու ենք թէ ապրելու:

— Կանշիր, կանշիր, ասաց Նազլուն սրտատրոփի:
Բայց զնչուհին ինքը մօտեցաւ երբ կանանց տեսաւ և կանգնելով, ասաց նրանց:

— Հին շոր կամ մանը փող չունիք, աղջիպարոններ, ես ձեր բազդը բաց կ'անեմ, ապագաներդ կ'որոշեմ: Նազլուն նշանացի արաւ և զնչուհին ծարապատիկ նստեց նրա ոտների տակ:

— Դէ, զնչուհի, ճիշտ գուշակութիւններ արա, ես քեզ լաւ կը վարձատրեմ, ասաց Նազլուն:

— Իսկ եթէ սուտ սուտ բաներ ես գուրս տուել կաշիդ կը քերթեմ, մազերիդ ծամերից կ'քաշեմ, աւելացրեց Մանուշակը:

— Քնչուհին երբէք սուտ չի խօսում, ինչ խօսում է իրանից չէ խօսում, նրա գուշակութիւնները կատարում են ինչպէս մարգարէինը, ասաց զնչուհին:

— Դէ, սկսիր, ինչ ես ուզում, ջուր, խունկ թէ մոմ:

— Ոչինչ պէտք չէ, տուէք ինձ միայն փող և հին շորեր և ես ամեն բան կը յայտնեմ:

Նազլուն մի քանի դրամներ դրեց զնչուհու բուռը, որը շտապով թագցնելով, բռնեց Նազլուի և Մանուշակի ափը իւր ափի մէջ, մի քանի անդամ շփեց նրանց և ուզիդ նրանց աշքերին նայելով ասաց խորհրդաւոր ձայնով:

— Պուք քոյրիկներ էք, ինչպէս երկու կաթիլ մի բաժակ զրի մէջ, բայց այդ կաթիկները մի աղ-

բիւրից չեն, այլ երկու հեռաւոր կաթիկները միացնել են ու մի ձուլուել: Բայց երկուսի վերջն էլ մի է լինելու: Երկուսիդ ճակատին էլ մի որոշում կայ գրուած...

— Ի՞նչ որոշում է, ինչ է գրուած, հարցրեց Նազլուն և սիրար բռնեց: Գնչուն լուռ էր, կարծեց ինայում էր ծանր հարուածը տալու. բայց մերջապէս խօսեց.

— Երկուսիդ էլ արժանի կը լինէք ձեր սիրելիների տեսութեան:

— Փառք Ստուծոյ, աղատ շունչ քաշեց Նազլուն:

— Բայց ինչպէս, ինչ դրութեան մէջ...

— Քնչպէս, ասա շուտ, զնչուհի, ճշմարտութիւնն ասա, հարցրեց սրտատրոփի Մանուշակը:

— Այլանդակուած, խեղաթիւրած և մարդկային պատկերից գրկուած:

— Սնատ ես ասում, կորիր, կորիր, գոռաց Նազլուն և քիչ էր մնում յարձակում էր նրա մազերը վետելու:

Գնչուհին յետ ու յետ զնաց և անյայտացաւ դրների յետե, այն ինչ Նազլուն զլուխը ձեռքերի մէջ ծածկելով սկսեց դառնագին հեկեկալ. Սյու իսկ բոսպէից նրա սրտի մէջ բացուեց մի այնպիսի խոր վերը, որից օրաւուր սկսեց ճահր ու թարախ հոսել ու քրքրել նրա սիրտը...



ԺԸ.

Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ.

Տօթ օրին յաջորդեց զով և անուշ գիշերը, մինը այն գիշերներից երբ անհուն երկնակամարի վրայ մեղմութեամբ փայլում էր կաթնանման լուսինը և իւր դիւթող ճառագայթները սփռում չորս կողմը: Սյդ ժամանակ երկնը պարզութեան մէջ պլազում են սիրուն աստղերը և լուսնի հետ գրկած խորհրդաւոր կերպիւ փայլելով լոզում առաջ...

Նրանք կարծես պատմում են իրար երկրիս վրայ անցած գնացած անցքերը, հին հին դարերից ՚ի վեր կատարուած ուրախութիւններն ու տրտմութիւնները, վիշտն ու արցունքները, թագաւորների արիւնուուշտ կոխներն ու խրախճութիւնները և ապա կարծես իրենք էլ վշտանալով, յօդնած, տրտմած հետզհետէ խաւարում են և խոնարհելով դէպի իրանց մուտքը կորչում շրանում երկնքի երեսից...

Սիրուն, հրաշալի այդ տեսակ գիշերներից էր, երբ Դիլիջանի հովիտներից մէկում, մի շարք վրաններ էին երեսում, ուր բնութեան հէնց ծոցում, եռում էր կեանքը և հնչում զինուորների մելամաղձուտ երգեցութիւնը: Լսում էր այդ տեղ թէ ուստի և թէ հայի երգեցողութիւն, նրանց ձայնի մասնիկները,

թնդացնում էին հովիտները, ապա բարձրանալով դէպի զեր՝ դէպի սիրուն աստղերն ու լուսինը, այդտեղ պատմում իրենց սրտի մութ խորշերում թագնուած զաղտնիքը. այն զաղտնիքը, որը միայն երկնքին է յայտնւում...

Վրանների մէջ տեղը, առանձնացած տեղում, երեսում էր մի առանձին վրան, որը թէ իւր մհծութեամբ և թէ շրեղութեամբ աշքի էր ընկնում: Սյդ վրանի մէջ, այդ խակ բուղէին, նստած էին երկու անձն, որտնք տաք տաք մի ինչ որ բանի վրայ խօսում էին, ապա լրում, խոր մտածութեան մէջ ընկդմում և դարձեալ իրար հարց ու պատասխան տալիս: Նյդ անձնաւորութիւններից մէկը զինուորական էր իսկ միւսը հոգեստրականի համեստ սրէմ ունէր հագած, բայց իւր պատկառելի հայեացըով յարգանք էր աղդում խօսակցի վրայ: Զինուորականը Խուսաց առաջապահ գնդի հրամանատար Բեկինդորֆն էր, խակ հոգեստրականը — Ներսէս Աշտարակեցին:

— Սրբազնն, ասում էր Բեկինդորֆը, պարսից ահեղ բանակները մեղ չեն կարող վախեցնել և յուսահատեցնել, բայց պաշարի պակասութիւնը մեղ կարող է նեղը ձգել մինչև Պասկիչի զալսւատը:

— Պաշարի մտսին հոգ մի բաշէք, իշխան, պատասխանեց Ներսէսը, այդ թողէք իմ վրայ, հայ աղդաբնակութիւնը սրտատրոփ սպասում է իւր պատիչներին և նա իւր վերջին ունեցածը չի խնայի նրանց համար:

— Այդ ես հասկանում եմ, գիտեմ նրանց հա-

ւատարմութիւնը գէպի Թուսիան բայց...

— Բայց ինչ, ընդհատեց Ներսէս սրբազանը և
նրա աչքերից կրակներ թռան:

— Բայց այն, որ պարսիկները մեր ճանապարհը
աւերակ են դարձրել ու հայ գիւղերը մոխրի կոյտեր են
փոխարկել: Ամայի և աւերակ գիւղերից մենք պա-
շար շենք կարող ստանալ: Ներսէսը նորից ընկաւ
մտածութեան մէջ:

— Ճիշտ է Զեր ասածը, իշխան, բայց վստահ
եղէք ինձ վրայ, Եջմիածնում ես կը հասցնեմ պաշար
որբան որ հարկաւոր լինի, պատասխանեց Ներսէսը
փոքր լռելուց յետ:

— Ուրեմն վաղը մենք ճանապարհ կ'ընկնենք
գէպի Եջմիածին և այնտեղ հանգստութիւն կ'տանք
զօրքին, մինչև գլխաւոր բանակի հասնելը, միայն
սրբազան, հարկաւոր է առաջուց յայտնել Եջմիածնի
միաբանութեանը մեր գալուատը և նրանց պատրաս-
տել ուստական զօրքին գիմաւորելու և պաշարը հո-
գալու, այնուհետեւ կարելի է մտածել Երեանի պա-
շարման մասին:

— Հէնց այս գիշեր ես կուղարկիմ մի մարդ
նրանց այդ աւետիսը տալու:

— Այդ մարդը պիտի լինի անձնուէր և հաւա-
տարիմ, ճանապարհները խիստ երկիւղալի են և բըռ-
նուած պարսից զօրքերով, նրանք չպիտի իմանան
մեր զօրքի պաշարի պակասութեան մասին:

— Վստահ եղէք: Այդ մարդը իր արեան վեր-
ջին կաթիլը կը տայ և գաղտնիքներ չի դուրս տաի:

— Հէնց այդ տեսակն էլ պէտք է, պատասխա-
նեց բեկենդորֆը: Քիչ յետոյ ներսէս սրբազանը
դուրս եկաւ այդ վրանից և մտաւ բանակի միւս
վրանների շարքը:

— Վրանների առաջ նստած կամ պարկած էին
զինուորները և նրանցից ոմանք խօսում էին, ոմանք
ինչ որ պատմում ծիծաղում, հրհրում, իսկ ոմանք
էլ մի շրջան կազմած երգում: Երբ ներսէս սրբա-
զանը մօտեցաւ նրանց, նրանք լռեցին և ոտի կանգ-
նեցին: Սրբազանը օրհնեց նրանց և առաջ անցաւ,
քիչ յետոյ նա հասաւ այնտեղ, ուր հայ վնդի վրան-
ներն էին զարկած: Այդ տեղի վրաններից մէկում,
տաք ասզուրը առաջները դրած, նստած էին երկու
մարդ և ընթրիք էին անում: Նրանցից մէկը Առ-
քանն էր իսկ միւսը Գէորգը:

— Քէֆը քոնն է, Սպան, շուտով մենք Երեան
կը լինենք և քո կանաչ կարմիրը կը կապէնք, բայց
տես խաչ-հղբայրդ ես ևմ լինելու ուրիշին չընտրես,
ասում էր Գէորգը և ասզուրը խաշտում:

— Ե՞ս, այդ մասին նվ է մտածում:

— Գահ, բաս էլ ինչի համար ես մտածում:
Զէ որ Մանուշակը, այն սիրուն հրեշտակը, սրտա-
րովի սպասում է:

— Հա, սպասում է... ճիշտն առած ես կարօ-
տում ևմ այդ տղջկան, սիրում նրան, բայց նվ գիտէ
մինչի այն ժամանակ ինչեր է պատահում՝ դուցէ
կամ նա կամ նո կենդանի չլինենք:

— Ե՞ս դու միշտ վատ բաներ ես մտածում,

լաւը թողած վատի յետելից ես վազում: Ի՞նչ պիտի
պատահի նրա հետ քանի որ նա ապահով տեղ է,
Յակոբի խնամքին յանձնուած:

— Թուրքի երկրում ապահով տեղ չ'կայ, ոյսօք
կարող է ապահով լինել բայց մի ժամկց յետոյ պատ-
կերը փոխուել,

— Զարմանալի մարդ ես, ճշմարիտ, էլ ինչ հի-
մա պիտի վատանայ իրը մենք մօտ ենք մեր նպա-
տակին:

— Բայց սիրտս մռայլ է, Գէորգ, խիստ մռայլ,
կարծես մի ինչ որ պատահում է ինձ հետ, ես որ
մահից չհմ վախենում...

— Սպրիս, այդպէս էլ պէտք է, մահից վախե-
ցողը մարդ չէ այլ կին, ասաց ներս մտնելով ներ-
սէս սրբազնոր, Սոլանն ու Գէորգը ուսքի կանգնե-
ցին և գլխարկները վերցնելով լուռ կանգնեցին սլր-
բազանի առաջ:

— Նստեցէք, որդիք, թող Սատուած օրհնէ ձեզ
և ձեր ընթրիքը, երկու չ'լինենք երեք լինենք, ասաց
ներսէսը և նստելով նրանց մօտ, ինքն էլ ճաշակից
նրանց ընթրիքից:

— Ս. ինչքան քաղցր և անուշ է ձեր ապուրը,
այսպէս անուշ կերակուր ես կեանքումս չեմ կերել:
Սոլանն ու Գէորգը ամօթխածութիւնից կարմրեցին
և լուռ մնացին:

— Ես ճիշտն եմ ասում, քաջերի հացն ու զուրը
համով է, մանաւանդ նրանց, որոնք կեանքները դրել
են հայրենեաց փրկութեան համար: Բայց թողիներ

այդ ես ձեր խօսակցութիւնը ընդհատեցի: Շարու-
նակեցէք, ես արգելք չեմ լինի, ես ձեր հայրն եմ և
դուք իմ հարազատ որդիբրը:

— Սրբազն, Սոլանի նշանածի վրայ էինք խօ-
սում, Մանուշակի, որի խաչեղբայրը ասում եմ ինձ
ընտրիր, իսկ Սոլանը քրիրւում է, նազ է անում,
ասաց Գէորգը: Սրբազնը ժպտաց և դառնալով
Սոլանին ասաց.

— Իսկ ես իմ ձեռքով պսակ կ'կատարեմ, յոյս
ունիմ Սոլանը չի մերժի:

— Այդ Սատուածոյ գործն է, Սրբազն, մինչեւ
պսակը դեռ շատ գործեր ունինք կատարելու, պա-
տասխանեց Սոլանը:

— Հա, ճիշտ է քո ասածն էլ, գործեր շատ
ունենք, ասաց ներսէսը և ինքն էլ մտածութեան մէջ
ընկաւ: Իսկ քիչ յետոյ շարունակեց—բայց գիտես
ինչ, Սոլան, զու մի ծանր յանձնաբարութիւն պիտի
կատարես:

— Հրամայիր, սրբազն, ես պատրաստ եմ կրակն
ընկնելու:

— Ես հաւատում եմ, բայց աշխատիր կրակը
չմտնել այլ առանց կրակի մէջ մտնելու կատարել
այն ինչ որ ես քեզ կըպատուիրեմ:

— Սրբազնիս պատուէրը սուրբ է ինձ համար:

— Դէ ուրեմն լսիր—մի ժամից յետոյ զու պիտի
այս բանակը թողնես և շտապիս էջմիածին: Երեք
օրից յետոյ բանակը էջմիածնում կ'լինի: Բայց այդ
բանակը պաշար չունի, հարկաւոր է պաշարի պատ-

բաստութիւն տեսնել: Քարի տակից էլ լինի այդ պաշարը պիտի հասցնուի զօրքին, մինչև որ Պատկեւիչը իւր զօրքով կ'հասնի մեզ օգնութեան: Կաւետս Եջմիածնի միաբանութեան, որ ազատութեան ժամը արդէն մօտ է, Հիւսիսի Արծիւր արդէն ոլանում է որ ազատի ո. Եջմիածինը դարաւոր սորբկութիւնից:

—Կասես նորանց, որ թող ծունկ չորեն ո. Տաճարում և ազօթեն մեր ըրխառնեայ եղբայրների համար: Կասես նրանց, որ երեք օրից յետոյ գալիս է առաջապահ գունդը, իսկ յետոյ կ'գայ նրանց ահեղ բանակը պարսիկների զօրութիւնը խորտակելու: Ես էլ ոչինչ չեմ ասում, մնացածը գու գիտիս, երբ պատրաստ կը լինիս անցիր իմ վրանիս կողմը, ես քեզ ուրիշ յանձնարարութիւններ էլ կ'տամ և նրանք էլ տեղ կը հասցնես, այժմ մնաք բարեաւ, ասաց սըրբաղանը և երկուսի ճակատն էլ համբուրելով դուրս գնաց վրանից:

Սյդ ժամանակ մօտակայ վրանից լուսում էր մի հայկական երգ, որը խորը, անբացատրելի յոյզ էր տարածում լսովի սրտում: Ներսէսը մի բաղէ կանդ տուաւ, զինուորների ոգեսրութիւնը նկատելով: Իւր սիրտն էլ թունդ առաւ և նրա աշքերում երեացին մի ջուխտ արցունքներ, որնք լուսնի ճառագայթների տակ մի վայրկեան միայն պսպղալով, ընկան թաւշեայ կանաչի վրայ և կուլ գեացին այնտեղ:

— Զէ, կորած չէ այս ազգը, ինքն իրան մըսմաց սըրբաղանը և ձեռքերը տարածելով դէպի ամ-

բողջ բանակը աւելացրեց—Եւ թող Էարձրեալի օրհնութիւնը անպակաս լինի այս բանակից, ասաց և շարժուեց առաջ, դէպի իւր վրանը, որ հեռու չէր Շեկենդորֆի վրանից:

Մի ժամի չափ անցաւ, երբ նրա վրանի առաջ երեցաւ Սոլանը զիւղականի պարզ հազուստով: Նա պատերազմովի արտաքինը դէն էր շպրտել և նմանուել էր խեղճ, անմեղ զիւղացու: Երբ սրբազանը նրան տեսաւ, զոհունակութիւնից քահ քահ ծիծաղեց և ասաց:

— Աստուած վկայ, շատ լաւ կերպարանափոխվել ես, թուրքերը ոչ մի կասկած չեն կարող տանել և թէ այդ վառվուն աշքերդ չ'լինէին:

— Ճանապարհները այժմ խիստ վտանգաւոր են, որբաղան, ու զինուած մարդուն ամեն քայլափոխում խուզարկում են, ես էլ կերպարանափոխուեցի, խեղճ գիւղացու նմանութիւն ստացայ, որ անարգել հասնեմ Եջմիածին:

— Ապրիս, այդպէս էլ պէտք էր, իմ խելքը բան չ'կարեց, որ քեզ զգուշացնէի թէ պէտք է ծըլտեալ գնալ, բայց գու ինձանից առաջ մտածեցիր: Նէն, քեզ էլ սպասեցնել չ'տամ, ահա այս թղթերը լաւ տեղ պահիր և թող Աստուած օրհնէ ճանապարհը:

Սոլանն առաւ թղթերը, ծոցը դրեց, իւր ձին հիծաւ և շուտով հեռացաւ բանակից:

Ներսէս սըրբաղանը երկար հայում էր նրանց յետից և մտածում, Թէ ինչ էր մտածում այդ Աս-

տուծուն էր յայտնի, միայն թէ այդ միջոցին նրա
սիրտը յուզւում էր և մռայլում, կարծես նա ցաւում
էր, խիստ ցաւում Ասլանին դէպի վտանգը ուղար-
կիլով...

ԺԹ.

ՊԱՐՍԻԿԱՆԵՐԻ ԲՅՈՒԿՈՒՄ

Առաւօտը երբ յուսացաւ, երբ աշխարհիս
երեսին տարածուեցան արեի ճառագայթները և եր-
կիրք լցուեց կենդանութեամբ, այն ժամանակ Աս-
լանը կանգ առաւ և նայեց իւր ոտների տակ: Այն-
տեղ՝ իւր առաջ տարածում էր Սկանայ լիճը, որի
վճիռ ալիքները մեղմ ծփում էին և լիզելով ժայռոտ
ափերը ինչ որ մրմնջում:

Ասլանը նայում էր ջրի սլարդ կռակներին, ու
հին հին անցած գնացած անցքերը մինը միւսի ետե-
ւից անցնում էին նրա մոքի միջով ու նրան զցում
այնպիսի մտատանջութեան մէջ, որից նրա սիրտը
բազւում էր ու հողին խռովում... Նա յիշում էր հա-
յոց պատմութեան պանծալի դէպքերը, նա յիշում էր
իւր նախնիքների՝ Աշոտ Երկաթի քաջալործութիւն-
ները, որը հօթահասուն կտրիճներով ջարդ ու փշուր
արեց արաբաց ահոելի զօրութիւնը և բըշը ոստի-
կանին ի փախուստ դարձրեց, ու նրա սիրտը աւելի
ու աւելի էր տանջում:

— Ա, ուր էք գուք, մեր նախնեաց հին հին
քաջեր, շարժեցէք, բացէք ձեր ոուրք շիրիժների բե-
րանները, գուրս թռէք ու ձեր պողպատէ կտրուկ

սուրը շարժելով, օգնեցէք ձեր որդիներին, որոնց
արիմնը անխնայ թափում են անհաւատները ու
իրենց նախնեաց գերեզմանների վրայ ծաղրում...
Դուք, ջրեր, Սևանայ լճի վճիռ կոհակներ, նահան-
ջեցէք յետ, յետ դէպի խոր-խոր անդոնդներ, ուր
յաւիտենական քուն են մտած մեր քաջ նախնիքնե-
րի աճիւնները՝ ու այնտեղ հնչեցնելով ձեր կարկա-
շինը, դարթեցրէք նրանց քնից... Հասել է ժամը...
ահաւոր ժամը՝ երբ դարեսը ստրկութիւնից հայր
սուրի պիտի կանգնի ու իւր նախնիների պանծալի
անունը վերականգնի...

Դեռ կանգնած էր Սոլանը և ապուշ կրթած
աշքերտ նայում էր Սևանայ լճի ջրերին ու դիտում
նրա մէջտեղի ժայռոտ կղղին, որի մի ճակատից
դուրս էր ցցուել Սևանայ վանքը և տխուր տրտում
պահպանութիւն անում ջրերին...

Բայց արել հետզհետէ բարձրանում էր և իւր
կիզող ճառապայթները տարածում չորս կողմ: Շուր-
ջը թռչունները ուրախ ուրախ թռչկոտում էին ու
իրանց ճռուղինով բնութիւնը կենդանացնում. ար-
տուտն էր միայն որ յանկարծ դետնի միջից ոլա-
նում էր վեր, կանգ էր առնում ու երգում... Նրա
երգը տխուր էր ու յուսահատ: Այդ երգի մասնիկ-
ները թափանցում էին Սոլանի սրտի խորերը և
նրան մեջաղձութեան մէջ ձգում...

— Տխուր է սիրտս, տրտում է հոգիս, յուսոյ և
ոչ մի նշոյլ չորս կողմս, ասաց Սոլանը և ձիուն բաց
թռղնելով, ինքը թիկն տուեց մի ժայսի վրայ: Չին

ագահութեամբ սկսեց պոկոտել թարմ խոտը, այն
ինչ Սոլանը մի կետի նայնլով աւելի ու աւելի
մոալլուռմ և յուզում էր:

— Ա՛յս, ինչու ես այսպէս շփոթուած եմ, շա-
րունակեց նա գարձեալ: Բայց այդ ժամանակ լսուե-
ցաւ հեռուից ձիանց ոտքերի գոփիւններ, որոնք
Սոլանի ուշաղրութիւնը զբաւեցին: Նա անթարթ
աչքերով դէպի ճանապարհն էր նայում և իւր չու-
խայի տակ պահուած զէնքերը ուզում: Ճանապար-
հորդը արագ մօտենալով յանկարծ կանգ առաւ Սո-
լանի մօտ և ձիուց ցած թռուտ:

— Բարի օր, ասաց նա թուրքիրէն և կասկածելի:
հայեացը ձգելով դէպի Սոլանը, ձեռքը դէպի ատր-
ճանակը տարաւ որ խրած էր նրա գօտկում:

Սոլանը մեքենաբար վեր թռաւ տեղից, խոր
կերպիւ դիտեց իրին հետ խօսողին և ասաց նրան:

— Ատրճանակդ քեզ պահիր, բարեկամ, ես հայ
եմ, զուր ինձ թուրքի տեղ մի դնիլ:

— Որ հայ ես, Սոտուծոյ փայ ես, ես էլ հայ
եմ, ասաց ճանապարհորդը քաղցրութեամբ, հագուստով
ինձ կասկածի մէջ ձգեց, ես քեզ մի թուրք կար-
ծեցի և ուզեցի հողիդ դժոխքի բաժին անեմ: Սո-
լանը ժպտաց և դառնալով նրան ասաց.

— Դէհ լաւ, պատերազմական եռանդ պահիր,
մօտս նստիր, մի րիշ նախաճաշ անենք և թող Սո-
տուած օրհնէ մեր ճանապարհը:

— Ա՛յ, այդ լաւ բանէ, ես էլ զայլի պէս սո-
ված եմ ու յոզնած, ամբողջ զիշեր ճանապարհ եմ

զալիս, ասաց նա և իւր ձին էլ թողեց կանաչի վրայ ու ինքը նստեց Ասլանի մօտ։ Ասլանը երկար սպասեցնել չ'տուեց՝ նա ցած բերեց խուրջնել, միջից հաց, պանիր, ձու հանեց և գնելով ընկերոջ առաջ.

— Ո՞հա առ, ասաց, ինչ Աստուած տուել է։

— Գոհութիւն Աստուծոյ, որ այս էլ գտնում է, թէ չէ թուրքերը մեր մէջ էլ հացի պատառ շթողին։
— Ի՞նչպէս։

— Ել ինչ ինչպէս, ամբողջ Արարատեան դաշտը լցուել է թուրքերով ու հայի տան ամեն քունջ ու պուճախ ընկելով բան չեն թողել։

— Միթէ այդքան շատ է թուրքերի զօրը, հարցը Ասլանը։

— Եներից էլ շատ։ Հասան խանը արդէն բռնել է ամբողջ Եջմիածնի դաշտը։ Վաղարշապատը, Օշականն ու Աշտարակը լիքն են թուրքաց զօրքերով, իսկ ճանապարհները բռնուած են թուրք զինուորներով։ Թռչունը նրանց միջով չի կարող անցնել բայց Աստուծոյ ովարմութեամբ ես անցայ ովզ ու առաջ։

— Ո՞րտեղից և ուր ես շտապում, բարնկամ, հարցը Ասլանը։

— Եջմիածնից գեպի ոռւսաց բանակի։

Ասլանը ուրախութեամբ բռնեց ընկերոջ ձեռքը և սեղմեց նրան։

— Սենք եզրայր ենք ուրեմն, ես էլ ոռւսաց բանակից գեպի Եջմիածնին եմ զնում։

— Բարի ճանապարհ կը մաղթեմ, բայց զնալիս զգոյշ եղիր թէ թուրքերի ձեռքն ընկար քեզ

ոլրծնիլ չկայ։ Բայց ասա ինձ, ուր է ոռւսաց բանակը, հեռի է այս տեղից, երբ արդեօք կը մօտենան Եջմիածնին։

— Դու նրանց ճանապարհին կը սլատահես, ասաց Ասլանը և խուրջնը հաւաքելով ձիու մէջքին ձգեց։ Քիչ յետոյ նրանք ձի նստան և երբ ուզում էին բաժանուիլ, ճանապարհորդ մարդը կանչեց։

— Լոիր, Աշտարակ զիւղին մօտենալիս, ձիուցդ ձեռք վեր առ և ոտով զնայ, թէ չէ թուրքերը երկու բայլ չեն թողնի որ զնաս։

— Ենորհակալ եմ խորհուրդիտ համար, ասաց Ասլանը ու նրանը իրարից բաժանուեցան։

Երեկոյեան դէմ էր երբ Ասլանը անվտանդ հասու Աշտարակ։ Հեռու արդէն երկում էին բազմաթիւ ճրագներ, որոնց շուրջը վիստում էին պարսից զինուորները։

Ասլանը կանգ առաւ և ընկաւ մտատանջութիան մէջ։ Բայց բանակի միջից ձիով անցնելը յիրաւի անհնար էր։ Ակամայ պիտի կասկածի տակ ձգէր իրան։ Ուստի ձիու զլուխը դարձնելով դէպի ուրիշ կողմը՝ ուր երկում էր գիւղի ճրագների աղօտ լոյսը, որարշաւ ախ կողմը քշեց և երբ հասաւ գիւղը ձին յանձնեց գիւղացիներից մէկին, ապա երեսը խաչ բաշեց և ոտքով դէպի Աշտարակ գիւղը զիմեց։

Երկար զնում էր նա և ոչ ոք գեռ չէր պատահել, բայց երբ մօտեցաւ Աշտարակ զիւղին, զինուած մարդիկ նկատեց, որոնք այս ու այն կողմն էին զնում։ Նրանք նայում էին Ասլանին և ոչինչ

չեն ասում, Ասլանի թուրքական զդեստը խաբում էր նրանց, Բայց Ասլանը լուս առաջ էր զնում և աշխատում անցնել վտանգալից տեղը, նա երբեմն իրեն պատահող թուրքերին բարե էր տալիս, բարե առնում ու անցնում առաջ:

Մութն արդէն ընկել էր և խորին խաւարը պատել շուրջը և Ասլանը աշխատում էր միշտ առաջ գնալ երբ իւր առաջ մի այդու ցանկապատի մօտ կրակի լոյս շողաց և լուսաւորեց իրան: Ասլանը ուշադրութեամբ նայեց այն կողմը և նկատեց որ մի խումբ մարդիկ բռորել են կրակի շուրջը և մի ամբողջ ոչխար են խորովում:

Իւր ճանապարհը ընկնում էր ուղիղ այդ ընկուղինու տակով ուր խմբուած էին մարդիկ, իսկ ճանապարհը շատ վտանգաւոր էր: Թուրքերի տրամադրութիւնը ուրիշ էր, ամեն մի անցւորի կամ պիտի հարց ու փորձ անէին և կամ ոչխարի ընթրիքի կանչէին:

Խեց անէր Ասլանը. յետ դաւնալ անկարելի էր, իսկ առաջ գնալը դժուար: Մի քանի բոպէ կանդ առաւ Ասլանը և այգու փշեայ ցանկապատին նայեց: Ել երկար կանդ առնելու ժամանակ չկար: Նա ձեռքերը բարձրացրեց դէպի փշեայ ցանկապատը և ուղեցաւ թուշել դէպի այգին երբ ցանկապատը չդիմանալով նրա ծանրութեանը քանզուեց և շոնչին արձակեց: Թուրքերը ոտքի կանգնեցան և ամենը իւր դէնքն առնելով վազեցին առաջ:

— Ո՞վ է, ո՞վ, կանչեցին նրանցից մի քանիսը

և շրջապատեցին Ասլանին: Ասլանն էլ թագնուել չէր կարող և ասաց.

— Ես եմ, եղբայրներ, ուզում էի այդին մըտնել, չկարողացայ:

— Ո՞վ ես գու:

— Աշտարակցի եմ:

— Հըմ, Աշտարակցի ես, այդ կը տեսնենք, ասաց թուրքերից մէկը և ուզեց բռնել Ասլանի ձեռքերից, Բայց Ասլանը մի թռիչք արաւ, սուրը հանեց և գոռաց.

— Մօտեցէք, եթէ կարող էք, անիրաւ թուրքեր: Թուրքերը նախ ետ-ետ գնացին բայց ըիշ յետոյ սիրտ առան և նրանցից մէկը ատրճանակը ուղղելով դէպի Ասլանը արձակեց. գնդակը վրիպեց և երբ Ասլանը նկատեց որ այլ ևս փրկութիւն չկայ, մերկ սուրը ձեռքին ընկաւ թուրքերի մէջ ու սկսեց իւր հունձը: Երեք թէ չորս թուրք ճիշ արձակելով ընկան գետին: Բայց ինչ կարող էր անել մի մարդ տասը քսանի դէմ: Ասլանին բռնեցին ու երբ ուզում էին նրան մաս-մաս կտրատել՝ թուրքերից մէկը մօտեցաւ նրան և ուշադրութեամբ զննելով Ասլանին, յանկարծ վրայ վազեց, նրա ձեռքերից պինդ բռնեց և համարեած գոռաց.

— Տղերք, պէտք չէ սրան սպանել, սրա ոտն ու ձեռը պինդ կապեցէք, սա լրտես է: Ասլանը նայեց այդ մարդուն և սոսկաց: Իւր առաջ կանդնած էր նազի բէկը՝ իւր սխերիմ թշնամին:

— Միթէ ինձ չես ճանաշում, գեաւուր, ասաց

Նազի բէկը և իւր ժանտ դէմրը տնկեց նրա առաջ;
Սոլանը ոչինչ չը պատասխանեց այլ մի մոլի հայ-
եացը ձգեց: Թուրքերը պինդ կապեցին նրան և
սկսեցին ծեծել, մազերը փետել և առաջ տանել:

— Նազի-բէկ, ինչ կհրամայիս անել սրան, շան-
սատակ անենք թէ թողնենք էլի մի քանի ժամ
շունչ ունենայ, ասաց թուրքերից մէկը:

— Զէ, Հասան խանի համար լաւ նուէր է,
ովէտք է տանել զրան խանի մօտ, ասաց Նազի-բէկը
ձեռքի փայտով խփելով Սոլանի մէջրին: Մի քանի
թուրք առաջ անցան իրանց հետ տանելով կապկա-
պած Սոլանին:

Ե.

Ա Ն Ո Ւ Ր Զ Ք

Վանը և խեղտող զիշեր էր: Տօթը այնքան
սոսկալի էր, որ մարդու չնշառութիւնը արգելում
էր, նեարդերը թուլացնում, զգացողութիւնը ըթաց-
նում և զցում կիսաթմրութեան մէջ: Երկանի կիզող
արկից յետոյ, տաքացած գետինը արտադրում էր
մի այնպիսի ծանր, խեղտող օդ, որ շատ մարդու
սիրտ էր նեղացնում, և նրանք կործքն ու զլուխը
սրսկում էին ջրով և մի բոսէ միայն շունչը յետ
բերում: Նազուն և Մանուշակն էլ քնած էին մի
սենեալի մէջ, ուր բացի իրենցից, պարկած էին
նաև Յակոբի երկու մանուկները, որոնք չնայեած
տօթի սաստկութիւն մանկական անուշ քնի զիր-
ընկղմած, չէին զգում օդի խեղտող ազդեցութիւնը
այլ անուշ ննջում էին: Այլ էր Նազուի և Մանու-
շակի քունը: Նրանց քունը խխտ վրդավալից և տան-
ջալի էր:

Կեանքի առօրեայ զէպքերն ու հարուածները
նրանց հոգին գցել էին տանջանքի ծովը և իւր վիթ-
խարի ալիքների վրայ ծփացնելով՝ տանջում չարչա-
րում էր նրանց և զցում վշտի մէջ: Ցերեկները վիշ-
տը կրծում էր նրանց հոգին, խև զիշերները անըլ-

ջական երազները նրանց հանգստութիւն չէին տալիս: Գիշերային խելոտող տօթն էլ նրանց այդ անրջական երազներին հանդիսանում էր մի լաւ միջնորդ ու այդ երազները աւելի սոսկալի, աւելի ահաւոր դարձնում...

Սյն օրից երբ գնչուհին իւր չարաբաստիկ գուշակութիւնն արաւ, Նազլուն ընկել էր մի տեսակ ծանր վհատութեան մէջ և նրա սիրտը հետզհետէ մռայլելով ընկել էր մի այն տեսակ գրութեան մէջ, երբ մարդուս համար կեանքը ներկայանում է մի դատարկ բան, մի սնոտի երազ, բայց թէ այդ կեանքի համար նա ամեն ըոպէ գողում է ու սարսափում և ամենաշնչին երեոյթն էլ նրան երկիւդ պատճառում:

Ինչ էր պատահել Նազլուի հետ՝ այդ ինքն էլ չէր հասկանում, սակայն վերջին դէպքերը՝ պատերազմի պատրաստութիւններն ու թնդիւնները, իւր սիրելոյ հեռանալը նրա հոգու վրայ այնքան խոր տվաւորութիւն էին գործել, որ նա ամեն ըոպէ, ամեն վայրկեան, սպասում էր թէ ահա ուր որ է պիտի ներս բերեն Յակոբի արիւնաթաթախ գիալիք և թշուառացնեն թէ իրան և թէ իր մանուկներին...

Օր աւուր մաշտում էր Նազլուի հոգին ու քըրքը ու մարմինը: Հոգեկան վիշտը ազդում էր նրա մարմինի վրայ և նրա մարմինը օր աւուր նիհարում, այտերի վրայ պատում դժգունութիւնը և թորշոմները գծում էին իրենց նշանները նրա ճակատին խև սիրուն աչքերը ընկնում խոր ակնակապիճների

մէջ և շրջապատւում կապոյտ շրջանակներով... Քնած էր Նազլուն թախտի վրայ ու նրա քունը աւելի քան տանջակից էր այս զիշեր: Նա պարկած էր մէջքի վրայ, ձեռքը ընկած ցած, իսկ երկար զիսակները խառն ի խուռն թափուած էին նրա սպիտակ կուրծքի վրայ: Վերմակլը կիսով չափ ընկել էր ցած և նրա բաց կուրծքը արագ-արագ բարձրանում էր ու իջնում: Արագ չնշառութիւնից և տօթի սաստկութիւնից, նրա սիրուն ճակատի վրայ շարուել էին քրտնքի խոշոր կաթիլներ, որոնք պըլպը պլում էին նրա թախտի դիմացին պատից կախ արած կանթեղի ազօտ լուսաւորութեան տակ: Կանթեղի թոյլ լոյսը լուսաւորում էր նրա դժգոյն դէմքը և սիրուն կուրծքը: Կուրծքը իւր ելեէջներն էր շարունակում խև նրա աչքերը երբեմն բացւում, առաջ-ապօւշ նայում էին և կրկին փակւում, այն ինչ ամբողջ մարմինը անշարժ էր, առանց մի կննդանութեան նշոյլի անդամ:

Չվինէին նրա շարժւող կուրծքն ու աչքերը և ծանր չնշառութեան ձայնը, Նազլուին կարելի էր համարել մեռած: Նազլուն մեռած չէր, կեանքի թեւը չէր կտրուել, այլ այդ միջոցին նրա միտրն ու ուղեղը գործում էին խիստ արագ և նրան ձգում տանջանքի մի այնպիսի ահաւոր դրութեան մէջ, երբ մարդիկ միայն իրենց կեանքի ու մահու օրհասի ժամանակ են պատահում...

Նա տեսնում էր այդ ժամանակ անդնդախոր իհեր, որոնց միջից լուռում էին դժոխքի ձայներ ու

իրեն ձգում սարսափի մէջ, այդ վիճերից նա փախչում էր հեռու, սեպացած ժայռերի վրայից թռչկոտելով վաղում էր առաջ, բայց այդ ժայռի կտորների տակից գուրս էին սողում զղուելի սողուններ, գարշելի օձեր ու մողներ, որոնք դարս հանելով իրենց լեզուները, կարմրատակած, արինով լի աշքերով նայում էին իրեն և պատրաստում թռչելու վրան։ Սոսկումը պատում էր իրան, շունչը կտրում էր, մաղերը փշաքալում և գարշելի սողունների աշքերից մագնիսացած, մեխածի նման կանգ էր առնում ու աշնան տերեի նման գողում... Նա ուզում է ձայն հանել, օգնութիւն կանչել, բայց ձայնը չի գուրս գալիս նրա կրծքից, ուզում է վագել առաջ, ոտքերը կարծի մեխուած լինեն գետնից... Բայց ահա, այս ի՞նչ է, նա լայն բաց է առում աշքերը և նայում առաջ։

Սոսկալով փակում է աշքերը, բայց մի բոպէից յետոյ նորից բաց անում..., զարհուրելով նա նկատում է, որ իւր հինգ կրծքին, այնտեղ ուր բարխում է իւր սիրառ, նստած է մի այլանդակ արարած և ուզիղ իւր աշքերին նայելով զանազան ծամածութիւններ է անում... Նրա ծանրութիւնից շունչը կտրում է, մարմինը փշաքալում. նա ճիշտ է թափում շարժում գործել, գէն շպրտել այդ այլանդակուած արարածին, բայց կամը նրան չի հպատակում և նա մնում է անշարժ գրութեան մէջ... ուզում է ձայն հանել, սակայն նրա կրծքից միայն խրխրոց է գուրս թռչում... «Աայ ինձ...»

ինձ խեղտում են և ոչ չկայ, որ ինձ օգնի՛, ոչ ոք մտածում է նա ու սառն քրտինքը աւելի ու աւելի պատում նրա դէմքն ու մարմինը, Բայց նրա կուրծքը աւելի ու աւելի է ճնշում և չնշառութիւնը ծանրահում։

Քանի բաց է անում աշքերը, տեսնում է զարշելի արարածին, որը ոչ մարդու նմանութիւն ունի, ոչ կասկի, այլ մի այլանդակ հրեշի նման, երբեմն բաց է անում իւր բերանը, մի շաբք սուր ատամները ցոյց տալիս, լեզուն գուրս զցում և արինով լցուած աշքերով նայելով իրեն, կամաց-կամաց ձեռքերը մօտեցնում դէպի իւր կոկորդը խեղտելու իրեն...»

«Աստուած իմ, օգնիր, խեղճ են սրգիրս, սիրուն բալիկներս, նրանք որը կը մնան, անտէր, անտիրականն մրմնջում էր նազլուն և նրա աշքերի մէջ երեսում են արտասուններ, իւր անդօրութիւնը հականալով յանկարծ նրա կրծքից գուրս են թռչում խուլ հեկիկանիներ։ Այդ հեկիկանիրի ձայնից յանկարծ վեր է թռչում Մանուշակը և մօտենալով նազլուին ուղղում ու զարթեցնում նրան։ Անցնում է մի քանի րոպէ, նազլուն ուշրի է գալիս և ամուր սեղմելով Մանուշակի ձեռքը ասում։»

— Ուր է, ինչ եղաւ, Մանուշակ ջան։

— Ո՞վ, բոլիիկ։

— Ոխ, նա նստած էր հինգ սրտիս վրայ ու խեղտում էր ինձ, պատասխանում է նազլուն և երեսը խաչ հանում։

— Ով էր նստած, քոյրիկ, ի՞նչ ես ասում, ա-
սում էր Մանուշակը և ինքն էլ սոսկում:

— Քաջը, քոյրիկ, քաջը նստած էր որտիս,
բայց փառք Աստուծոյ անյայտացաւ, ես ազատուեցի:

— Թող Աստուած ամեն մարդու ազատ պահ,
այդպիսի պատահարներից, պատախանից Մանու-
շակը և նրանք մինչև լոյս էլ չ'կարողացան աշքերին
խփել: Մանուշակը բաց արաւ սենեկի պատոհանը
և առաւտուայ թարմ օդը տարածուեց սենեկի մէջ
ու զուարթացրեց նազլուի խռոված սիրտը:

16 XII 58 №.

Կ Ե Ա Ն Ք Ի Ց Է Լ Թ Ա Ն Կ

Զեռքերը պինդ կապած, թոկի մի ծայրը
մի թուրքի ձեռքին, աջ ու ձախ էլ երկու երեք
թուրք սրերը համած, տանում էին Ասլանին դէպի
չասան խանը, որը բանակ էր գրել Եջմիածնից
չորս հինգ վերստ հեռաւորութեան վրայ, Աշտարա-
կից քիչ ցած:

Ասլանը լուռ էր, ոչինչ չէր խօսում, աջ ու
ձախ չէր նայում, այլ իւր մտքի մէջ ընկղմուած ա-
ռաջ էր քայլում: Մահուան երկիվը չէր որ նրան
մտքի ծովն էր ձգել, մահուան հետ նաև հաշտ էր,
բարեկամ, նա գիտէր որ ինքը այլ ևս արեի
երես չի տեսնի, որ հասել է իւր կեանքի վախ-
ճանը. բայց նա տանջուում էր միայն նրա համար,
որ ինքը չկարողացաւ իւր պարաքը կատարել, Ներ-
սէս սրբազնի իւր վրայ գրած յանձնարարութիւնը
վերջացնել: «Ա՛յս, եթէ ես կարողանայի տեղ հասց-
նել Ներսէս սրբազնի յանձնարարութիւնը, եթէ
ես կարողանայի աւետիս տալ Եջմիածնին թէ վրա-
կա թիւնը մօտ է, այն ժամանակ թէկուզ մաս մաս
կտրատէին ինձ՝ մտածում էր Ասլանը և ծանր վիշ-
տը կրծում էր նրա հոդին:

— «Ե՞ն, ինչ ուզում է թող կատարուի, առանց
իմ տեղ հասնելուն Եջմիածինը էլի կազատուի, վնաս
չկայ ասաց ինքն իրեն և ապա գլուխը վեր բարձ-
րացնելով նայեց իւր պահապան թուրքերին, որոնք
մի մեծ յաղթութիւն կատարածի պիս, հպարտ-
հպարտ առաջ էին բայլում:

Չ'զիտեմ ինչ անցաւ այդ միջոցին Սոլանի
մտքով, բայց այդ բողէին նրա գէմքով մի ժայռա-
անցաւ ու նա սկսեց քթի տակ մի երդ մրմնչալ:
Թուրքերը գարմացած նրան նայեցին ու նոցանից
մէկը ասաց Սոլանին ծալքելով,

— Դեռ շուն, փոխանակ լացի զու երգում
էլ ես, միթէ չ'զիտես, թէ Հասան-խանը լրտեսներին
ինչ պատիժ է տալիս: Սոլանը ականջ չըրեց նրա
խօսքերին այլ շարունակում էր իւր երգը:

— Երեխ զեռ յոյս ունի թէ ոռուները իրան
օգնութեան կը զան ու պատիւներ կը տան, ասաց
թուրքերից մէկը:

— Տեսնենք թէ ինչպէս կօգնեն, երբ սրա կա-
շին քերթելիս կը լինենք, պատասխանեց միւսը:

— Ինձ սպանելով զուք չէք ազատուի, չներ, այլ
ամենը կոտորուելու էք, ձեր վերջն արդէն եկել է:

— Զայնդ, անամօթ հայ, կանչեց մի թուրք եւ
սրի կոթափ հասցրեց Սոլանի գլխին: Սոլանի աչքե-
րից կրակներ թուան և նա բարկացած կանչեց:

— Ա՛յս, եթէ ձեռքերս ազատ լինէին և պող-
պատէ փայլուն սուրս ձեռքիս, զուք, վախկոտ թուր-
քեր, չէք համարձակուի Սոլանի մազին անզամ

դիպչել: Նրանք արդէն մօտեցան Հասան խանի վրա-
նին և կանդ առան: Քիչ յետոյ դուրս եկաւ Հասան
խանը շրջապատուած միքանի միծամնեծներով: Նրանց
մէջ Ասլանը նկատեց նազի բէկին, որ արխնաբրու
աչքերը յառելով Ասլանի վրայ հեղինօրէն ծիծագում
էր: Ինչպէս երեւում է նա արդէն վազուց պատրաստել
էր Հասան խանին և համացրել թէ ով է նա: Հա-
սանը մի քանի բողէ լուռ նայեց Սոլանին, հրա-
մայեց պարանը քանզիկ և ապա գիմելով նրան ասաց.

— Այ հայ, քեզ մօտ գտնուել են մի քանի թըդ-
թեր, որով քեզ մահուան պիտի գատապարտել, զու-
լլաւս ես, իսկ լրտեսին խիստ ովատժով են պատ-
ժում: բայց եթէ իմ հարցերին ճիշտ սպատախան
կ'ուտաս և չես խարի ինձ, այն ժամանակ խոստա-
նում եմ մեծ մարզպարէի անհունով որ քեզ ոչ թէ
մէնք պատժի այլ միծամնծ պատիւների կարծանաց-
նենք: Սոլանի գէմքին երեաց մի դառն հեղինական
ժամանակից և ոչինչ չը պատասխանեց, նա սպասում էր
թէ ինչ պիտի ասի Հասան խանը:

— Ո՞րտեղացի ես, հարցրեց Հասան խանը:

— Ես Բիւրականցի եմ և զալիս եմ ոռուաց
բանակից:

— Հըմ, մներ գիտենք որ ոռուաց բանակից ես
զալիս: բայց այժմ ասա, ճիշտը, թէ սրբան է ոռուաց
զօրքի թիւը, սրտեղ են նրանք կենդրուացած և ինչ
նազատակով են քիզ տռաջ ուղարկել: Եթէ դու այս
հարցերիո ուղիղ պատասխանես, իմացած եղիր, որ
փրկուած ես:

— Հա... հա... հա... մի բրդիջ արձակեց Աս-
լանը և գառնալով Հասան խանին աւելացրեց.

— Հասան խանը մի՛թէ այնքան միամիտ է, որ
կարծում է թէ Ասլանը այդ բաները կասի իրան,
չէ, Հասան խան, իմ կեանքը ձեռքիդ է, ինչ անում
ես արա և ոչինչ բան մի յուսայ ինձանից:

Հասան խանը գունատուեց. բարկութիւնից ա-
տամները կրճտացրեց ու գառնալով Ասլանին ասաց.

— Ենք, ես քո լեզուն իսկոյն բանալ կ'տամ,
ես կը սովորեցնեմ քեզ թէ ինչպէս պէտքէ խանի հետ
խօսել:

— Սրա, ինչ սւզում ես, անհաւատ շուն, բայց
զիտցիր, որ ինձ յանձնարարածը կեանքիցս էլ թանկ
է, շատ թանկ, զու իմ կեանքը կը խլիս, բայց զակա-
նիքը չես իմանայ:

— Տղերք, մօտեցէք այս տեղ, գարձաւ Հասան
խանը մի քանի թուրքի: Թուրքերը մօտեցան, որե-
րը մերկացրին ու լուռ Հասան խանի հրամանին
էին սպասում:

— Վերջին անգամ զգուշացնում եմ, թող քս
յամառութիւնը:

— Կրկնում եմ, ես ձեր սրերից չեմ զախենում,
սովանհցէք ինձ, ասաց Ասլանը և մի քայլ առաջ
անցաւ:

— Լաւ, եթէ յանկանում ես, միայն քեզ այն-
պիսի մահով կսպանենք, որ օրերով տանջուիս ու այն-
պէս դժոխքն իջնիս, ասաց խանը և գառնալով գէպի
մերկացրած սուրը ձեռին կանգնած թուրքը ասաց.

— Առաջ սրա քիթը կտրիր, Մահմադ, տես
նենք հայն արխինից վախեննում է թէ ոչ:

Մահմադը մօտեցաւ Ասլանին, ուզեց բռնել նր-
ան, բայց Ասլանը մի այնպիսի արացի տուեց, որ
թուրքը կուշ եկաւ և ցաւից կսկծաց: Այդ միջացին
իրկու որիշ թուրքը մօտեցան Ասլանին և ուժերն
ու ձեռքերը պինդ բռնեցին այնպէս որ Ասլանը էլ
ոչ մի շարժողութիւն չէր կարող անել: Մահմադը
աղատ մօտեցաւ և բռնելով Ասլանի գանգուր մազե-
րից, սրի մի հարուածով կտրեց նրա քիթ: Արինը
աղբիւրի նման դուրս բղիմոց, բայց Ասլանը ոչ մի
ձայն, ոչ մի ծալտուն չ'հանհց, աշքերն էին միայն
որ կատաղութեան շանթեր էին արձակում:

— Հը, էլի խելքի չես զալ, հարցրեց զազան
խանը:

— Անիրաւներ, անհաւատներ... մրմրաց Աս-
լանը և նրա բերանը լցուեց արինով:

— Մահմադ, սրա աշքերը խիստ են պսպում,
համիր մի աշքը, հրամայնց խանը:

Մահմադը կատարեց խանի հրամանը: Նա խան-
շալի սուր ծայրը կտիսեց Ասլանի մի աշքի մէջ, մի
քանի անգամ պտտեցրեց այնտեղ և այնտեղից դուրս
կորցեց աշքի խնձորը:

Ասլանը սոսկալի ցաւից կսկծաց և նրա մար-
մնի միջով մի սառը զող անցաւ: Յաւը այնքան
սոսկալի էր, որ ուզում էր ճշալ, զոռալ, բայց ինքն
իրեն զապեց և լուռ կացաւ:

Թուրքերը մհացին ապշած, զարմացած: Նրանք

այդպիսի քաջութիւն մի հայից չէին սպասում:

— Ասա գաղտնիքը, վերջին անգամ դիմեց Հասան խանը:

Բայց Ասլանը լուռ էր և իւր մտքում կարծես աղօթք էր մրմնջում, զարհուրանքով լցուած մի աշքով նայում էր գաճճին և սշինչ չէր խօսում: Ամբողջ դէմքը այլանդակուել էր ու արիւնով լցուել:

— Կտրիր լեզուն, որ ուրիշների մօտ էլ գաղտնիքը չասի, հրամայեց Հասան խանը: Ասլանը թէ և ցաւի կոկծից ատամները հուպ էր տուել, բայց Մահմադը բերանը ուժգին բաց անելով, դուրս քաշեց մի ձեռքով լեզուն ու սրով կարելով՝ դէն շպրտեց:

Ասլանը ուշրից գնաց, երեսի վրայ փայր ընկաւ դետին, կանաչ խոտը արիւնով ողսղելով: Սնկուշտ գաղանը դրանով էլ չբաւականացաւ, նա հրամայեց ոտքերի կրունկներն էլ կտրելու, ապա նայեց արիւնաշաղաղ դէմքին և գառնալով դէպի թուրքը ասաց.

— Բաւական է, թողէք դիակը ընկած մնայ շներին կերակուր, ասաց նա և երեսը շուռ տուեց: Կարճ ժամանակից յետոյ Հասան խանը իւր բանակով հեռացաւ այդ տեղից Ասլանի կիսաշունչ դիակը թողնելով դաշտի մէջ:

Ժամեր անցան: Չորս կողմը տիրում էր խորին լուռթիւն, ոչ մի ձայն ոչ մի կողմից չէր լուռում: Խաւարը իւր սկիթոյր թերը տարածել էր ամեն կողմը, երբ Ասլանը ուշրի եկաւ և շուռ եկաւ մէջքի վրայ: Արիւնը արգէն կոշտացել էր երեսի վրայ և

հաստ շիջուկով պատել դէմքը: Ձեռքերով նա տրաբեց առողջ աշքը և վեր նայեց դէպի անհուն երկինքը, ուր սողալով անցնում էին ու ու ամպի կտորներ:

Ասլանը նայում էր այդ ամպերին ու նրա միտքը շփոթելում էր ու խառնելում: Ցաւի սաստկութիւնը բթացրել էր նրա միտքը և նա դիռ չէր հասկանում թէ ուր է ինքը: Բայց ամպերը մինը միւսի յետերից անցնում էին ու կամաց-կամաց երկնքի երեսը պատում: Հեռուից երբեմն լուռում էր որոտման խուլ դղրդիւնը, որը կամաց կամաց մոտենալով դէպի Ասլանը՝ խուլ դղրդիւնով անցնում էր նրա վրայով և կորչում հեռու...

— Աստուած իմ... սոսկալի է, ոհ մահ, հասիր ինձ, առաց Ասլանը և ձեռքերի վրայ յենուելով, գլուխը վեր բարձրացրեց ու նայեց առաջ: Սյդ միջոցին փայլակի ուժեղ լոյսը կոտրտուած գծերով անցաւ հորիզոնի մի ծայրից միւսը և լուսաւորեց շրջակայքը: Ասլանը պղտորուած մի աշբով տեսաւ հեռում էցմիածնի վանքը իւր գմբէթներով, որոնց գլխին Քրիստոսի յաղթական խաչերն էին տնկուած՝ և նա սիրտ ու հոգի առաւ:

— Սյնտեղ է եցմիածինը, մեր սուրբ մայր Աթոռը, մեր Լուսաւորչի առաջին հիմնած տաճարը: Լուսաւորիչն էլ տանջուեց հաւատի համար, նա էլ կրեց սոսկալի տանջանքներ... ոհ, զօրացրու ինձ, ով մայր տաճար, մինչև քեզ համնեմ, Սրբազնիս լուրը հաղորդեմ և ապա շունչս փշեմ... մտածեց Ասլանը ինքն իրան և փորսող տալով առաջ անցաւ:

Բո՞մք, բո՞մք... բո՞մք, անցաւ նրա զվասի վրա-
յից որոտը և կրկին գղրդեցրեց շրջակալը։ Առանը
վերջին ճիգը թափելով, քարերի ու խոտերի միջից
սողալով անցնում էր առաջ ու ինքն իրան խրա-
խուսում։

—Քիչ էլ, քիչ էլ, ահա մօտ է Եջմիածինը...

Բայց նրա ոյժերը հետղհետէ սպառում էին և
շունչը կարւում, նրա ոյժի վերջին թերին էր մնա-
ցել, Յաւը սոսկալի կերպիւ տանջում էր նրան ու
ցեցում նրա ուղեղը։ Ահա նա ուժասպառ գլուխը
ցած զլորեց և մատներով հողը քանդելով կանչեց.
—Ո՞հ, սոսկալի է... փրկեցէք ինձ ..

Նրա ձայնի մասնիկները տարածուեցին հեռու,
գեպի Եջմիածնի պատերը, ուր այդ ժամանակի կեան-
քը գեռ եռում էր և վանականները դեռ ընած չէին։
Առանի խօռքերը լսեց վանքի դռանը կանգնած ծա-
ռաներից մէկը, որը ինչ որ խօսում էր մի վանա-
չօր հետ,

—Հայր սուրբ, լսեցիք, օգնութիւն են կանչում,
ասաց նա։

—Ոյն, իմ ականջիս էլ հասաւ մի աղիողորմ
ձայն, պէտք է օգնութեան վնալ, ասաց վանահայրը
և մի քանի մարդիկ լապտերներով վագեցին դէպի
այն կողմը ուր Առանն էր ընկած։

Խեղճ Առան, նա չկիտէր, որ այդքան մօտ է
Եջմիածնի պատերից, նրա ամեն մի քայլը վերստեր
էր երեսում, բայց երբ նրան քարձրացրին, վանքի
խուցը տարան, երբ նա աշքը բաց արաւ և վանա-

կաներսիվ շրջապատուած տեսաւ, ուրախութիւնից
վեր թռաւ և մի ինչ որ զլլացրեց։ Նեղու չկար որ
հասկացնէր, ձեռքով թռողթ ու մատիտ ուղեց և
շտապ, բայց դողդոջիւն ձեռքերով, զրեց։ «Փրկու-
թիւնը մօտ է, ուռսները գալիս են, պաշար հասց-
րէք» այն ժամանակ նրա ձեռքից վայր ընկաւ մա-
տիտը և նա ուշաթափ վլորուեցաւ մի կողմը... Վա-
նականները սրտատրով վրայ վազեցին նրան օգնելու։

ին.

ՌՈՒՍՆԵՐԸ ԵԶՄԻԱԾՆՈՒՄ

Եզմիածինը հրճում էր: Գարեսր ստրկութիւնից յիտոյ մօտենում էր ցանկալի ժամը, երբ պիտի թօթափէր պարսկաց ծանր լուծը և աղատութիւն ստանար քրիստոնեայ պետութեան չնորհիւ: Սոլանի լուրը հաղորդելուց յիտոյ Եզմիածնի միարանութիւնը, որոնք ընդամենը քսաներկու հոգի էին, գիշեր ցերեկ քուն չունէին և սրտատրոփ, աշքերը գէպի ճանապարհ դարձրած սպասում էին ուսաց զօրքի երեալուն: Սոլանի բերած լուրը ճշտում էր որովհետև Եզմիածնի շրջակայրում էլ չէին երեսում պարսիկների զօրքեր, այլ նրանք ուսաց զնդի մօտենալու հոտն առնելով, քաշուել էին գէպի ամուր բերդերն ու լեռները և Եզմիածինը ազատ թողել: Յանկարծ միարաններից մէկը որ կանգնած էր Եզմիածնի պարսպի վիրայ և դիտում էր հեռուն, ճանապարհի վրայ փոշու մի ամպ նկատեց: Նրա սիրտը սկսեց արագ բարախել և նա ցած թռչելով պարսպից միարաններին աւետեց ուսաց զօրքի մօտենալը: Ղօղանչեցին Եզմիածնի զանգակները և միարանութիւնը շտապով հագաւ իւր եկեղեցական զգեստները և խաչ ու խաչուառով շարուեցան պարսպի առաջ:

Անցաւ մի կարճ ժամանակ և ահա Եզմիածնի միարանութեան առաջ ներկայացաւ մի հրաշալի տեսարան: Օրուսական զօրքերը գունդ զունդ իրենց գրոշակիներով և երաժշտական խմբով մօտենում էին և երեք երեք անգամ «ուրա» կանչելով կանդ առնում պարիսպների տակ: Եզմիածնի միարանութիւնից շատերը չէին տեսած այդպիսի կարդ ու կանոնով զօրքեր ու նրանք նայելով նրանց սուլիների բազմութեանը, ոմբաձիգների շարժողութեանը, նըրանց սիրտը թռւնդ էր առնում ու նրանք էլ զօրքերի հետ կանչում էին ուրա կամ կհցցէ:

Եկող զօրքը բնեկնդորֆի գունդն էր որի հետ և գալիս էր ներսէս արհին: Ահա և նա՝ ներսէսը հոգեորականների և զօրքի մեծամեծների ու զինուորների հետ մտաւ տաճար և ծունկ չողեց: Նա յուզած էր, ուրախութեան արցոնքները թորում էին նրա աշքերից և ընկնում տաճարի սառը քարերի վրայ: Բայց ահա նա վեր թռաւ տեղից, երեսը գէպի բազմութիւնը դարձրեց ու սկսեց իւր սրտառուշ քարոզը: Նրա խօսքերը թափանցում էին թէ հայ և թէ ուսւ հանդիսականների սրտերը և նոցա խորքերում թռնում անջնջելի տպատորութիւն: Թռւ զինուորն էլ թէ և չէր հասկանում նրա խօսքերը, բայց նա զգում էր իւր սրտի խորքերում, որ այդ միջոցում մի ինչ որ հանդիսաւոր բան է կատարում էր: ու ինըն էլ ծունկ չոքելով ջերմաշերմ աղօթում էր: «Հասաւ ժամը, ասում էր ներսէսը, երբ Հայատանի գարեսր փառը աշխարհիս վրայ նորից պի-

տի վերականգնի խաչի զօրութեամբ որ բերում են իրանց հատ ռուս զինուորները՝ մեր եղբայրները...«

Բայց երկար չտևեց Եջմիածնեցոց ուրախութիւնը: Որովհետեւ Եջմիածնը արդէն թալանուածէր և հաց չունէր, ուստի Եեկենդրքը Եջմիածնում մի վաշտ զօրք թողնելով պաշտպանութեան համար, ինքը իւր գնդերով առաջ խաղաց հաց որոնելու: Նա պաշտեց Սարդարապատ ամուր բերդը ապա Երեսնը, մինչի որ Կովկասի հրամանատար Պատկիշը եկաւ վրայ հասաւ:

Նա Բեկենդորֆի տեղ նշանակելով Կրասով-
սկուն, ինքը առաջ խաղաց դէպի Նախիջևան, յանձ-
նելով Երևանի պաշարումը վերջինին։ Բայց այդ ժա-
մանակ Եջմիածնի շրջակայրում սկսուել էր սոսկալի
շրջը և մեծ նեղութիւն պատճառում Կրասովսկու
զօրքին, որոնք չդիմանալով կիզող արեին, մեծ մասը
հիւանդանում էին և ուղարկում Եջմիածն։ որ
խնամում էր Ներսէս Օրբագանը։ Գեներալ Կրասով-
սկին իւր զօրքի օրաւոր նուազիլը տեսնելով, ստիպ-
ուեցաւ Երևանի պաշարումը յետաձգել ու քաշուել
դէպի Բաշ-Արարան

Ուստաց բանակի յետ քաշուելով պարսիկները սիրտ առան և ահա Հուսէին-Դալի խանը գուրս զալով Երևանից 1500 սարբազներով, 2000 ձիա-ւոր զօրքով և վեց թնդանօթով պաշարեց Էջմիա-ծինը և սպանում էր հիմնայատակ անել վանքը և թէ անձնատուր չիմին։ Էջմիածնում գտնուած թնդանօթները իրանց որոտումով պատասխան տուին

Հոսէին-Ղուլի խանին և նա արդէն պատրաստւած
էր ոմբակոծել վանքը երբ Կրասովսկին վրայ հասաւ
ու քշեց պարսիկներին:

Բայց հէնց Կրասովսկին հեռանում էր իւր բանակատեղին, պարսիկները նորից շրջապատում էին Եջմիածինը և նեղում նրանց։ Բայց այդ դրութիւնն էլ երկար չտևեց։ Օգոստոս ամսուայ շորսին Եջմիածնի դաշտում յանկարծ երևաց Արա Միրզան իւր 30,000 զօրբով և բանակ դրեց Աշտարակ գիւղում, իսկ ամսի 15-ին մտաւ Օշական գիւղը և ապա շըրջապատեց Եջմիածինը երկաթէ օպերով։ Թնդանոթները շարուեցին և ապա սկսուեցին Եջմիածնի տանջալից օրերը...

long wing web
molted 24E-21p
top flight feathers
sprung & closed 5;
upper & lower wings
of long wing web

gcp 2^o/E 540

նորը և սռողում երկրի մեծ տարածութիւն։ Սմբադշ շինուածքը չրջապատուած էր չորս սիւներով որոնցից երեքը բարձրանում են նահատակած կոյսերի նշխարների վրայ և այդ բոլորը միանալով ի մի հրեղին աթոռի վրայ ունեն տէրունական խաչը։ Եւ ովերուած, ո. Գրիգորը այդ տեսնելով ՅՈՅ թուին կանգնեցրեց Տաճար, որ դարձաւ կենդրոն և հոգի ամբողջ հայութեան...

Թարեր էին անցել, կատաղի բարբարոսների արշաւանքներին շատ և շատ անզամ նա ենթակայ էր եղել, շատ փոթորիկներ ու մրրիկներ նրա գլխի վրայով շռնշալով անցել էին, բայց նա դեռ կանգուն էր, անսասան և ոչ մէկը չէր հտարձակուել Հուսաւորչի և Տրդատ թագաւորի ձեռակերտ այդ մենայատակ կործանել՝ աշխարհի երեսից վերցնել, այն ինչ Արաւ-Միրզան ամեն բազ սպանում էր քարուքանդ անել նրան... Բայց Նախախնամութիւնը այդպէս չէր տնօրինել։ Եջմիածնի վախճանը դիռ չէր մօտեցել...

Այն միջոցին երբ Արաս Միրզան պաշարել էր Եջմիածինը, այնտեղ, նրա պաշտպանութեան համար թողնուած էին մի վաշտ ոռուական զօրք, հինգ թնդանօթ և հայոց հեծելագունդը, բայց հազար հոգուց էլ աւելի հիւնդ ու վիրաւոր զինուորներ, որսնց խնամում էր ներսէսը։

Եջմիածինը խիստ նեղ դրսւթեան մէջ էր, Արաս Միրզայի հրամանով նրա զօրապետ Եառութեանը առաջարկեց Եջմիածնի բերդապահին անձնատուր

Եջմիածինը պաշարուած էր...
Քառասուն թնդանօթ իրենց պղնձէ ժանտ բերանները դարձրած գէպի նա, ամեն բոպէ պատրաստ էին զարհութելի մոնշիւն արձակել և իրանց բոցավառ բերաններից գնդակների կարկուտներ թափելով, հիմնայատակ տալ դարեսոր մենաստանը, ջնջել, կործանել աշխարհիս երեսից նրան և այդպիսով յակուրդ տալ իւրեանց անկուշտ որովայներին... Եջմիածինը փտանզի մէջ էր... Այն Եջմիածինը, ուր ո. Գրիգոր Լուսաւորիչը տեսաւ երկնքից իջնող լոյսը և հրեշտակների գունդը և Միածնին ոսկէ ուռը ձեռքին։ Այնտեղ, ուր Միածնինը ուռով բաղյաց գետնին և գետինը դղրդաց, լեռները շարժուեցին և սանդարամետը բանալով իւր մահաշունչ բերանը բեկի եղան սղբալի ձայներ։ Այնտեղ, ուր ո. Գրիգոր Լուսաւորիչը տեսաւ թէ ինչպէս թագաւորական պալատից բարձրանում էր ոսկեայ խարիսխը զոհագործութեան սեղանի նման, որից ծագում է հրեղէն սիւն ամպեայ զարդարանքով և որի վրայ փայլում էր խաչը։
Ոհպահի տակից բղխում էր կենդանի ջրոյ տղ-

լինել: Բայց նա յանձնառու չեղաւ, Սյն ժամանակ
խանը գրեց Ներսէսին:

— «Եթէ քո կամքով չես բանալ պարսպի դըռ-
ները, զիտցիր, որ ամբողջ վանրը հիմնայատակ կա-
նեմ: Սյն ժամանակ, Ներսէս, մեզը քո շնորին լի-
նի».

Ներսէսը յոյսը Սստուծու վրայ դնելով պա-
տառօխանեց:

— «Չդօք է, Սստուծոյ գօրտթինը, առ, եթէ
կարող ես»:

Ներսէսի պատասխանի վրայ Արտօ Միրզան
կատագեց ու հրաման արձակից ումբակոծել վանքը:
Սյդ ժամանակ մութը նոր պատել էր երկրին և
վանքը ընկզմել խաւարի մէջ: Գիշեր էր ամենուրեք
մութ, ու գիշեր, Վանքի մի բուռն պահապանները
կազմ ու պատրաստ կանգնած էին և սպառում թէ
ինչ էր լինի. Առողջների որտերը տրափարովում
էին, վերջին մնաս բարեն տառում իրար ու լուռ
հրամանի սպասում, որպէս զի իրենք էլ սկսեն կրա-
կը և իրենց կիանքերը վայր գնեն Ս. Տաճարի պա-
տերի տալ: Հիւանդներն էին միայն, որոնք ծանր
հառաջում էին կամ զառանցում և ամենին չէին
հետարքքրում թէ ինչէ կատարուում գուրսը: Կեանքն
ու մահը նրանց համար այդ բոլովին ոչինչ՝ արժեք
շունեին: Պապակած շրթունքներով նրանք շարու-
նակ ջուր էին խնդրում և բոլորուած աչքերավ
չորս կողմը նայում: Ներսէս սրբազնն էր որ իր
կեանքն ու առողջութիւնը մոռացած՝ մէկ հիւանդ-

Ների շուրջն էր պտտում և մէկ պարիսպների գլու-
խը բարձրանում ու խրախուսում գօրքերին...

— Զօրապետ, զրութիւններս կրիտիկական է,
հարկաւոր է իմաց տալ գեներալ Կրասովսկուն, ա-
սում էր Ներսէսը:

— Սյն, պէտք է, թէ չէ կորած ենք:

— Բայց պարախները ինչ որ ուշացնում են ի-
րանց սպառնալիքը իրազործել, ասաց Ներսէսը և
զէպի պարսից բանակը զիտեց: Սյնտեղ զեռ խա-
ւար էր ու լուռ:

— Ճայ Սստուծ չիրագործեն թէ չէ վանքի
կորուստը անխուսափելի է, պատասխանեց գօրա-
պետը ինքն էլ զէպի պարսից բանակը նայելով:

Յանկարծ նրանք այնտեղ փայլուն կրակներ
և կատեցին, որոնք մի վայրկեան միայն վառուեցին ու
շրացան: Նրանց շրանալով լսուեցին զարհուրելի
որոտմունքներ, որոնք դրդեցին լիռ ու ձոր:

— Քաղանները ոռնացին, ասաց գօրապետը:

— Սյօ, ոռնացին և մեզ շուտով կ'լափին, պա-
տասխանեց Ներսէս սրբազնը մտայոյդ:

— Ո՛հ... յանկարծ լսուեց խորին խաւարի մի-
ջից մի սուր, սիրտ կտրատող ճիշ ու ամեն ինչ լսեց:

— Սկսուեց, պինձէ գաղանները լափել սկսե-
ցին, ասաց Ներսէսը և երեսը խաչ հանելով կանչեց,
զղումած Սստուծ գու փրկիլ մեզ...

— Եւ թող Սստուծոյ կամքը լինի, ասաց գօ-
րապետը և առաջ անցնելով հրաման ալձակեց: Քիչ
յետոյ պարսպի վրայից էլ սկսեցին զոռալ թնդա-

Նօթները և միանալով պարսից քառասուն թնդանոթների գոռուն գոչինի հատ՝ աշխարհ թնդացնել... Կովուն արդէն սկսուած էր...

Պարսիկների ոռւմբերի հասցրած աւերածոթիւնը զարհութեալի էր Եջմիածնի համար, եթէ երկար շարունակուէր, վանրը ու նրա միջի մի բուռն քաջերը պիտի ոչչանային:

Ներսէս սրբազնը և զօրապետը առանց վախենալու ոռւմբերից դեռ կանգնած էին և ոմբաձիգներին խրախուսում էին պարսպների վրայ, երբ մի ոռւմբ տղղալով անցաւ նրանց զլսի վրայից և դիաչելով վանրի պարսպին թաղուեց մէջը:

— Սրբազն, մի քիչ էլ ցած անցնէր, այս ոռւմբը կ'իգէր և քնքոյշ համբոյր կտար մեղ, ասաց զօրապետը հեգնօրէն:

— Զէ, մեղ համբուրող ոռւմբը, դեռ չէ ծնուել, մենք դեռ շատ գործ ունենք, պատասխանեց Ներսէսը: Թհիգանօթների կատաղի գոչինը հետզհետէ աւելի ու աւելի սաստկանում էր: Սրդէն երեսում էր որ պարսիկները վճռել էին վանրը աւերել: Սյու միջոցին Ներսէս սրբազնը վայր իջնելով մտաւ այս խուցը, ուր հայ գունդը կազմ ու պատրաստ հրամանի էր սովասում:

— Տղէրը, դարձաւ նա, վանրը քարուքանդ է լինում, ով ձեզանից յանձն է առնում պարսից շարքերի միջից անցնել և գեներալ Կրասովսկուն իմաց տալ մեր դրութիւնը:

— Ես, և... գոռացին ամեն կողմից կտրիճները առաջ անցնելով:

— Բայց իմացէք, որ կարող էք պարսիկների ձեռքն ընկնել:

— Մեր պատրաստ ենք կեանքերս գոհել, ասացին ամեն կողմից:

— Սպրիթ, տղայք, ասաց Ներսէս սրբազնը ուրախանալով, բայց ամենքդ պէտք չէք, ինձ հարկաւոր է միայն հինգ մարդ: Ու նա հինգը նրանցից ջոկելով, առաջ ուղարկեց մէկին, քիչ յետոյ միտոնին և ապա գիշերուայ ընթացրում միւսներին:

— Եթէ չորսը ընկնեն թշնամու ձեւքը գոնէ մէկը տեղ կը հասնի, մտածում էր Ներսէս սրբազնը: Յիրաւի հինգ մարդուց միայն մէկը տեղ էր հասել, իսկ մնացածները պարսիկների ձեռքն ընկներով չարաշար մահով սպանուել էին:

Բայց կրակը հետզհետէ աւելանում էր և թշնդանօթների որոտը սաստկանում: Կարծես զիհենք բաց էր արել իւր անկուշտ որովայնը և ուզում էր կլանել ամբողջ աշխարհ...

նման նստած իւր տեղը նայում էր իր առաջ:
Բայց գիշերը վրայ հասաւ, նրան յետեց ա-
ռաւօտուայ արշալյուր և դեռ ոչ մի լուր չկար պա-
տերազմի դաշտից, այն ինչ թնդանօթների գոռ
ձայնը հետզետէ սաստկանում էր և դղրդեցնում
շրջակայրը:

Գեներալը ամբողջ գիշեր բռն չունէր, բայց
հենց որ լուսացաւ առաւօտը նա արդէն պատրաստ-
ւում էր մարդիկ ուղարկելու համբաւ բերելու, երբ
հեռու ճանապարհին մի փոշու ամպ նկատեց: Նեռա-
զիտակը դէպի այդ ամպը ուղղեց և այնուղ մի
ձիւար նկատեց, որ քափ ու բրտնիրի մէջ կորած
շտապում էր ռուսաց բանակը:

—Վերջապէս մի լուր կստանամ, ասաց նա
թեթևացած և երբ ձիւարը մօտեցաւ, գեներալը
դիմեց նրան:

—Ո՞րտեղից ես գալիս, տղայ, ինչ լուր ունիս:

—Եջմիածնից, գեներալ, Ներսէս որբազննն է
ուղարկել ինձ, ասաց նա և ցած թռաւ ձիւց, Եջ-
միածնը վտանգի մէջ է գեներալ և օգնութեան
կարօտ, ամեն մի բոլին թանկ է նրա և նրա պաշտ-
պանների համար եթէ օգնութեան չ'հասնէք Եջմիա-
ծնը հողի հետ կ'հաւասարուի և նրա պաշտպան
մի բուռն բաջերից մարդ չի մնայ:

—Ո՞րքան զօրքով է շրջապատած Եջմիածնը:

—Արառ Միրզան երեսուն հազար զօրքով կանգ-
նած է Եջմիածնի պատերի տակ և քառասուն թըն-
դանօթով ոմբակոծում է վանիրը, Ներսէս որբազնը

Բաշ-Արարան լիւան լանջի վրայ, ռուսաց
զօրքի բանակատեզում, իւր վրանի առաջ նստած
էր գեներալ լշյանանտ Աֆանասի Դվանովիչ Կրա-
սովսկին և լուռ հեռուն էր գիտում:

Նրա գէմբը յուզուած էր, մռայլ մտքերը տակն
ու վրայ էին անում նրա հոգին ու նրան ձգում ան-
մելինելի վշտի մէջ, Այդ միջոցին նա հոգով ոլացած
էր Եջմիածնի Վանիրը ու նրա մէջ ապաստան գտած
փորբիկ ռուսական զնդի վրայ էր մտածում: Եջ-
միածնի շուրջը որոտալ թնդանօթների գոռ ձայ-
նը համում էր վեներալի ականջին, ու նրանց ա-
մեն մի որոտը ցնցելու շափ կտիլիծ ալլում նրա
սրտին:

—Ա՞խ, կըկորչի Շանքը, կըկորչեն նրա մի բո-
ռըն բացերը, եթէ ես օգնութեան չ'հասնեմ, մտա-
ծում էր նա ու աւելի յուզոււմ: Բայց ինչպէս ես
օգնութիւն համեմ, քանի որ Թիֆլիսից օգնական
զօրքերը և թնդանօթները զեռ չեն հասած, իսկ
Արաս Միրզան ահազին զօրութեամբ լցրել է դաշ-
տը... Ա՞խ, զոնէ ինձ մի տեղիկութիւն տան Եջ-
միածնից... մտածում էր նա ու անշարժ, արձանի

ինձանից առաջ չորս համբաւարեր ուղարկեց ձեզ
մօտ օգնութիւն խնդրելու, ևս արդէն հինդերորդն
եմ:

— Առաջինը ու վերջինը: Հնդից միայն մէկն է
հասել ինձ և այդ գուք էք և գուք կ'ինէք վերջի-
նը, ասաց գեներալը ու արձակելով համբաւարերին,
զինուորական խորհուրդ կազմեց: Խորհուրդը երկար
չտեղ նա շատ շուտ վերջացաւ և գեռ նոր խորհ-
ուրականները ցրուել էին բանակի մէջ, երբ թմրուկ-
ների ձայնը դպրուեցրեց շրջակայրը ամրող բանակը
ստրի կանոնեցնելով:

— Ինչ որ պատահի պէտքէ է փրկել վանքը և
նրա բուռն քաջերին, ասաց գեներալ Կրասովսկին
և հետը առնելով 1800-ի չափ հետեակ, 500 հեծե-
լազօր, 12 թնդանօթ, հայոց զնդից էլ 100 հոգի
օգսուստի 16-ին ճանապարհ ընկաւ Եջմիածին:

Բանակում պաշտպանութեան համար թողնուեց
մի բանի հարիւր զինուր և տասը թնդանօթ: Մու-
թըն ընկել էր, երկիրս արդէն ծածկուել թանձը խա-
ւարի մէջ, երբ ուսւաց բանակը կանդ առաւ հան-
գոտանալու Օշականի մօտ:

Պարսիկները արդէն լուր էին ստացել և գունդ
գունդ առաջ էին խաղում շրջապատելու քրիս-
տոնէից այդ մի լուռն գործին, որ համարձակուում
էր իրեն ահռելի զօրութիւնը արհամարել ու Եջմիա-
ծինը գուրս կորդել իրենց ձեռքերից:

Օսւաց քաջերին չէր վհատեցնում պարսից
բազմութիւնը, երանք յոյսերը Աստուծու վրայ դրած

սպասում էին կռուի սկսելուն: Խորամանկ պարսիկ-
ները փախչում էին այդ կռուից և յարմար տեղ
վնասուում ուսւաց բանակին ծուզակի մէջ ձգելու:

Լուսացաւ օգոստոսի 17-ի չարաբաստիկ առա-
ւոտը: Արել իւր գլուխը հանեց լեռների քամակից
և անամակ երկնակամարի վրայ հետզհետէ բարձրա-
նալով իւր կիզող ճառագայթները տարածեց երկրի
չորս կողմը: Օդը քանի գնում տաքանում էր, տօթը
անտանելի դառնում և մարդկանց ու կենդանիների
չնշառութիւնը դադարեցնում:

Սյու միջոցին ուսւական գորրը զնում էր ա-
ռաջ՝ Քասախ գետի ձախ կողմով, քարքարուտ և
ամայի բլուրների վրայով, այն ինչ գետի աջ ափից
քայլ առ քայլ հետեւում էին պարսիկները և յարմար
բոսկի սղասում նրանց կուլ տալու: Թէի խոր ձորի
մէջ շոնչալով վազում էր Քասախ գետը, քայլ այն
բլուրների վրայ որոնց վրայով անցնում էր ուսւաց
գորրը՝ ջուր չկար և գորրը նեղում էր ծարաւից:

Սնատանելի տօթն ու ծարաւը տանջում էր ուս-
ւաց զօրքին, քայլ նա վերջին ճիկը ժողովելով դեռ
առաջ էր զնում: Քրանքից շորերը կպել էին մար-
մնին և ջուրը աղբիւրի նման ծլծլում էր նրանց ճա-
կատներից: Ժայռերի և քարերի մէջ ջարդում էին
սայլերի և թնդանօթների անիւները, և ուստ զի-
նուորները անձնազոհութեամբ սայլերը իրանց վրայ
էին բառնում և դարձեալ առաջ քայլում.

Քայլ ֆիզիքական զօրութիւնն էլ վերջ ունի,
նա էլ ունի իւր սահմանը, որից այն կողմ անցնել չի

կարելի։ Զօրքը հետզհետէ թուլանում էր, յուսահատում, համնում այնպիսի բոպէի երբ թշնամեաց գնդակներն ու սրերը նրանց այլ ևս չէին յուսահատեցնում, վախեցնում, երբ կեանքը նրանց համար կորցնում է իւր արժէքը, ու նրանք ընկնում են մի տեսակ ինքնամոռացութեան մէջ...

Գեներալ Կրասովսկին նկատում էր այդ և յուղում, նա տեսնում էր որ թշնամիները այնքան երկիւղ չեն ազդում, որքան ծարաւն ու տօթը։ Բնութեան այդ արհաւիրքը թուլացնում էր իւր քաջերին, նրան կորստեան մատնում ու նա վերջին ճիպը թափելով խրախուսում էր զօրքերին ու առաջ քայլում։

Բայց ահա նրանց առաջ բացուեց մի նեղ ու բարբարոտ ձոր։ Ծուսաց զօրքը ներս մտաւ այնտեղ և շփոթուած կանդ առաւ։ Լեռների վրայից պարսից թնդանօթները յանկարծ հառաչեցին, հառաչելով նրանք սար ու ձոր գլրդեցրին ու գնդակների ոռումբերը թափեցին ուսւների գլխին։

Սյդ բաւական չէր, չորս կողմից լսուեցան պարսիկների հրացանների ճայթմունքներ և անթիւ արճճէ բղէզները եկան համբոյրներ տալու ոռուսաց քաջերին։ Կրասովսկու բանակը ընկած էր ծուղակի մէջ։ Չորս կողմից նա շրջապատուած էր պարսիկներով և ոչ մի կողմից դուրս գալու հնար չկար։

Գեներալ Կրասովսկին աջ ու ձախ նայեց, տեսաւ իւր քաջերի կոտորածը, որոնք մինը միւսի յետից գլորւում էին գետին՝ ու նրա սիրտը կսկծաց

ցաւից և երկու ջուխտ արցունքներ գլորուեցան նրա աչքերից։ Նա իւր կեանքի համար չէր ցաւում, չէ, այլ զօրքի անխնայ կոտորածը, նրա սրտի մէջ կրակ էին ձգում։ Ահա նա ձին առաջ բշեց, մզուեց պարսիկների շարքը և որոտաց։

— Տզէրք, մահը մի է, մհանենք մեր թագաւորի համար, ասաց նա և սրով ջախջախից մօտեցող պարսիկների գլուխը։ Զօրքը սիրտ առաւ, սպաներն ու դինուորները վերջին վերմարդկային ճիպ թափելով առաջ մզուեցին ու իրանց սրերով ու սուիներով ճանապարհ բացին։ Գեներալ Կրասովսկու ձին երկու անդամ սպանեցին և վիրաւորեցին իրեն, բայց նա վէրքը ծածկելով առաջ էր սլանում... Սակայն թնդանօթներն աւելի ու աւելի էին որոտում ու իրանց հունձն անում։ Ահաելի էր նրանց որոտի ձայնը։ Անխնայ կոտորւում էին սպաները, կոտորւում զինուորները և երկներից միայն փրկութիւն սպասում...

պատառ միս և գնում ումբի հետ ուստաց բանակը:
Նրա լուրջ գէմքը հետզհետէ մռայլում էր,
մթաղնում, իսկ ուղեղի մէջ կայծակի արագու-
թեամբ այցնում էին մտքերը, որոնք արագ-արագ
փոխանակում էին ու նրան ձգում մի տեսակ տես-
դային դրութեան մէջ:

Նա նայում էր կոտորածին, նայում ու նրա
ձայնը հետզհետէ կերկերում էր, գողում, հազի-
գուրս գալիս բերանից: Կամքը ընկճուած էր զի-
տակցութեան առաջ, պարտականութիւնը տեղի
տալիս խղճին ու նա հետզհետէ գանդաղեցնում էր
հրաման տալը և այդպիսով ուսմբերի արագ ձգելը:
Պարսիկ զինուորները, որոնք իրենց յաղթութիւնը
ահենելով ուրախութիւնից տեղները չէին մնում
հանգիստ, մի վայրկեանում թնդանօթի մէջ ուսմ-
բեր էին զնում և շատ անգամ առանց Յակոբի
հրամանին սպասելու արձակում:

Սպշած, մտայոյդ զիու նայում էր Յակոբը և
մտածում: Գառն ու սոսկալի էին նրա մտքերը: «Ա, այ-
ինձ, ինչ եմ անում ես, մտածում էր նա, բրիտո-
նեայ զօրքերը զնում են հայրենիքս ազատելու, ո-
չչմիածին փրկելու, իսկ ես իմ ուսմբերով անինայ
կոտորում եմ նրանց... Ենչ անեմ թէ ես ծառայում եմ
պարսիկն, թէ ես պարտաւորուած եմ ուստաց կոտո-
րել, բայց չէ որ այստեղ ջարդում են բրիտանեայ
կոբայրներս, որոնք հայրենիքս փրկութեան համար
կարծիս քաղաքում էր նրա սիրտը ու մաշւում հոգին,
կարծիս ամին անշամ կտրում էր նրա սրտից մի

թնդանօթի արձակելը, բայց ձայնը խեղատուեց նրա կոկորդում, դուրս չեկաւ նրա բերանից, այն ինչ այդ վայրկեանին այնպիսի սոսկալի կոկիծ զգաց, որքիշ մնաց ցնցէր նրա ուղեղը... Ծումբերը շարունակ թռչում էին ու կոտորած անում, նա տեսնում էր թէ ինչպէս սպանդանոցի նման կոտորում են քրիստոնեաները ու աւելի և աւելի մզկտում:

— Զէ, պէտք չէ կոտորածը շարունակել, ես քրիստոնեայ եմ, նոյնպիսի քրիստոնեայ ինչպէս նրանք... ասաց նա, բայց այդ ժամանակ նրա մըտքից անցաւ իւր կինը, սիրուն զաւակները, որոնց կորսանեան պիտի մատնէր... Նա համեմատեց նրանց կեանքն ու տանջանքը իւր առաջ կոտորուող քրիստոնէից կոտորածի հետ ու սոսկաց... Քրտնքի խոշոր կաթիները դուրս ցայտեցին նրա ճակատի վրայից ու կաթիլ առ կաթիլ ընկան գետին:

— Ո՞հ, կանչեց նա, զոհը ծանր է, գնահատութիւնը թանկ, խիստ թանկ... երեխաներիս, կնոջս և իմ մահով պիտի գնիմ քրիստոնեայ եղբայրներիս ազատութիւնը, ասաց նա ինքն իրեն, վայրենի հայնացրով նայեց իւր ոմբաձիգ պարսիկներին ու համարեա խելագարի նման կանչեց.

— Է՞յ, Ալի, Մահմադ, ինչ էր անում, դադարեցրէր թնդանօթի արձակումը, մեր թնդանօթի ուումբերը մերոնց են ջարդում: Զինուորները մեխուածի նման կանգ առան և իրենց հրամանատարի երեսը դիտեցին: Բայց Յակոբը նրանց ժամանակ շրատուեց մտածելու: Ցնորուածի պէս վրայ ընկաւ

թնդանօթի մերենային և թնդանօթի գլուխը շուռ տուեց, նրա մահաշունչ բերանը դէպի պարսիկները դարձրեց, Մի քանի վայրկեան անցաւ, նա ամբացրեց թնդանօթի ստուտակը, գլուխը վեր բարձրացրեց և խրոխտ ձայնով հրամայեց.

— Շուտ, տղայք, շուտ-շուտ արձակեցէր թնդանօթը, էլ իմ հրամանիս մի սպասէք, ոչ մի գեաւոր թող կենդանի չմնայ... Պարսիկ զինուորները ուումբը մէջը դրին և ուրախ ուրախ արձակեցին... թնդանօթը ախ քաշեց, որոտաց ու կրակէ ուումբը շպրտեց...

Վայրենի հայեցքրով նայում էր Յակոբը ուումբի սլանալուն ու երբ նկատեց, որ նա պայթեցաւ պարսիկների զվարին, այն ժամանակ նրա դէմքի վրայ անցաւ մի երանաւէտ ժպիտ, ու նրա որտից կարծես ծանրութիւնը ընկաւ: Ուրախ ժպիտն երեսին նա զարձաւ պարսիկներին, խրախուսեց նրանց ու ասաց:

— Սպիրիփ, տղայք, շատ ապրիփ, անիծած գեաւուրները կստորւում են, ճանձերի նման ոչնչանում: Պարսիկները նոր եռանդով գնում էին թնդանօթի ըերանում ուումբերը և ուրախ ուրախ առաջ շրպտում... Յակոբը հիանում էր, նա տեսնում էր իւր աշխատանքի պտուղը, նա տեսնում էր թէ ինչպէս պարսիկների մէջ իսկ սուսաց զօրքի մէջը հոգի:

— Շտապեցիք, սիրտ առէք, յաղթութիւնը մերնէ, ասում էր Յակոբը դարձեալ պարսիկ զինուորներին և ուրախ ուրախ նայում ցած, ուր ուսաց մի

վաշտ անվնասո անցնում էր կիրճի միջով։

— Տէր իմ Սստուած, փրկուած են, նրանք ազատուած են, անցան կիրճից, ասում էր Յակոբը և ուրախութիւնից ոտքերը զետին զարկում։ Եւ յիրաւի ռուսաց մի վաշտ ազատուած լինելով Յակոբի թնդանօթի սպահնող կրակից, անվտանգ անցաւ կիրճի միջից և քշեց պարսիկներին։ Բայց Յակոբի ուրախութիւնը երկար չը տևեց, երբ որ ռուսները անցան կիրճից և իրենց սուխներով ճանապարհ բացին, այն ժամանակ պարսիկները նկատեցին Յակոբի դաւաճանութիւնը և մի խումբ ձիաւորներ Նազի բէկի առաջնորդութեամբ, շտապ բարձրանում էին գէպի այն բլրակը ուր կանգնած էր Յակոբը։ Յակոբը նկատեց այդ և զգալով վտանգը խառնուեց միւս պարսիկների մէջ և անյայտացաւ։ Նազի բէկը կատաղեց երբ նրան իւր տեղում չգտաւ, նա իսկոյն շորս կոմը մարդիկ դրկեց ու ինքն էլ առաջ անցաւ նրան դժոնելու...

ԵԶ.

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ն Ե Բ

Պուսաց զօրքը գերբնական ջանք գործ գնելուց յետոյ, գուրս զալով կիրճից, իջաւ Եցմիածնի զաշտը։ Հոգեալէս և մարմնապէս ընկճուած, նա սուխներով հարթում էր ճանապարհը և առաջ գնում։

Տօթը այնքան սոսկալի էր, որ նրանք հազիւ շունչ էին քաշում, իսկ ծարաւը զարհուրելի կերպով տանջում էր նրանց։ Ա՛խ եթէ լինէր մի ումզ, մի կաթիլ ջուր, նրանք կեանքերը կը գնէին... Եւ գեներալ կրասովսիկին, հրաշըռով կիրճից ազատուած, այժմ այդ բանից էր վախենում։ Եւ այդ բանը կատարուեց։ Մինչդեռ գագարել էր կռիւը, մինչդեռ էլ չէր լսւում պարսից թնդանօթների ու հրացանների ձայները, ուստ զինուորները իրանց առաջ նկատեցին պղտոր առու, որ այգիները ջրելու էր գնում։ Նրանք առանց լսելու մեծաւորների հրամանին, թափուեցին այդ առուի շուրջը և ցնորուածի նման սկսեցին իրանց պապակած ծարաւը յագեցնել։ Եւ պարսիկները կարծես այդ բանին էին սպասում։ Չորս կողմից նրանք նորից վրայ տուին և սկսեցին կոտորել ռուսաց զօրքին։ Ուստները այնքան թուլացած էին, որ պարսիկները մորթում էին նրանց

ոչխարների նման իսկ նրանք ոյժ չունեին մինչև
անգամ ընդիմանալու և իրենց զլուխները դէմ էին
անում պարսից սրերին։ Պարսիկները կտրում էին
զինուորների զլուխները և ժողովելով տանում Շահ.
զադէի մօտ նրանից վարձատրութիւն ստանալու։

Սյն միջոցին երբ ոռւմները ագանութեամբ
ծծում էին այդ պղտոր ջուրը, իսկ պարսիկները
մորթոտում նրանց, Յակորը վախուստ տալով վա-
զում էր շնչառալառ դէպի ոռւսաց բանակը, ու երբ
նա հասաւ այնուհետ ու նրանց կոտորուելը նկատեց
մի վայրկեան կանգ առաւ և ցաւից կոկծաց. ապա
նա հանեց ատրճանակը և արձակեց մի պարսկի
վրայ, որը սուրբ պատրաստ ուզում էր կտրել մի
ոռւս զինուորի զլուխը։ Պարսիկները նկատեցին այդ
և կատաղութեամբ վրայ վազեցին։ Յակորը սուրբ
հանած պաշտպանում էր, գերմարքիկային ճիգ էր
թափում աղատուել իրեն վրայ յարձակողներից,
երբ վրայ հասաւ նազի բէկը և նրա ձեռքիրից ա-
մուր բռնեց։

— Զէ, գետուր, այդպէս յանկարծ չիս մեռնի,
ասաց նա և ամուր կապիապեց նրա ձեռքն ու ոտքը։

Սյդ միջոցին Եջմիածնի կողմից լսուեցին թըմ-
րուկների ձայներ իսկ քիչ յիտոյ լսուեցին ոռւսական
«ուրան» և Եջմիածնի պահապան զօրքը օվկութեան
հասաւ գեներալ Կրտսովսկուն։ Պատերազմը գալիք-
րեց և պարսիկները վախկոտ նապաստակի նման
ևտ քաշուեցին կոտի գաշտից, տանելով իւրեանց
չետ կապիապած Յակորին։ Եւ Կրտսովսկու վորք-

թիւ զօրագունդը, այդ օրը այդ սպանդանոցում 24
սպայի, 1130 զինուորների զիակներ ու 200 հոգի
զերի թողինելավ, մօտեցաւ ո. Եջմիածնին։ Այդ ժա-
մանակ Ներսէսը և Եջմիածնի միաբանութիւնը ծըն-
կաչոք, ո. Եջման տեղում, աղերսում էին Առաւուծուց
օգնութիւն հասցնել ոռւսաց զօրքին և վրկել նրանց։

Մի որտառուչ պատկեր էր ներկայացնում այդ
ժամանակ ո. տաճարը։ Ներսէսը ո. Գեղարդը ձեռ-
քին, աղի արցունքներ թափելով՝ աղօթում էր Սո-
տուծուն։ Հիւանդ զինուորներն էլ մի կերպ ներս
էին մտել տաճար ու միախառնում էին իրանց ջնր-
մաջերմ աղօթքները, երբ յանկարծ զօղանջեցին Եջ-
միածնի զանգակները և կուում մասնակցող զինուոր-
ներն էլ խումբ-խումբ ներս թափուեցան ու իրանք
էլ ծունկ չորեկով փառաբանութիւն մատուցին Առ-
ել ծունկ չորեկով փառաբանութիւն մատուցին Առ-
ուուծուն իրենց վրկութեան համար։ Ներսէսը դի-
մաւորեց նոցա՝ իւր աղատիչներին խաչ ու խաչվա-
ռով ու զգացուած կանչեց։

— Երեսուն հազար կատաղի զօրաց միջից այս
մի բուռն զօրքը ճղեց անցաւ ու անմահ վառաց
արքանացաւ և թող անջնջելի մեայ գեներալ Կրտ-
սովսկու անունը մեր տարեգրութեան մէջ *):

*) Եփրեմ կաթողիկոսի խնդրանոք, Եջմիածնից չորս
մի բառութեամբ մի արձան կանգնեցրեց այն նա-
հասակների անունը յաւերժացնելու, որոնք ընկան այդ պա-
տերազմի մէջ (17-ին օդոստոսի 1827թ.) Եջմիածնի պաշտ-
ուառութեան համար։ Արձանը մինչև հիմայ էլ կայ և ամեն
պանութեան համար։ Արձանը մինչև հիմայ է կատարում այդ տեղում։
Պատմութեան համար։ Արձանը մինչև հիմայ է կատարում այդ տեղում։

Մինչդեռ ներակս սրբազներ դգացուած տակ-
նաբանում էր ու ոռւս զինուուրները խումբ-խումբ
եջմիածին էին մտնում, այդ ժամանակ նազի բէկը
ծեծելով, թքելով երեսին և հայոյանիներ թափելով,
տանում էր Յակոբին դէպի Հուսէին-Ղուլի խանը:
Եբբ խանը՝ նրան տեսաւ, բարկութիւնից առամները
կրճացրեց ու մոլեզին ձայնով կանչեց.

— Անհաւատ շուն, ինչպէս համարձակուեցար
դու ինձ գաւաճանել, միթէ չ'կիտիս թէ ինչպէս
շարաշար կը պատժուիս դու:

— Սարդար, արա, ինչ անելու ես, ես իմ
պարտը կատարեցի:

— Շուն, դու դրանով բեզ էլ, քո ընտանիքն էլ
ոչնչացրիր, այստեղ դու կմեռնիս, իսկ Երկանում
քո կինն ու զաւակները:

— Եյդ ես կիտեմ, սարդար, կիտեմ, որ պազա-
նի համար խտրութիւն չ'կայ, մեղաւորն արդարի
պիտի պատժուի:

— Բոլորդ էլ շուն էր և մի ազգից, ամենիրդ
արժանի էր մահուան և թող ջնջուի աշխարհի երե-
սից ձեր ցեղը, ասաց սարդարը և գառնալով նազի
բէկին ասաց.

— Նազի բէկ, սովորեցրու դրան թէ ինչպէս
են պատժւում զաւաճանները:

Նազի բէկն էլ սպասեցնել շ'առւեց, նա վազուց
էր կարօտ այդ հայի արեան՝ սուրը հանեց, մօտեց
ցաւ Յակոբին ու ոկտիկ իւր գործը...

ԻԵ.

Ա. Յ Ի Կ Ն Ո Տ Գ Ա Ծ Հ Լ

Անամալ երկնրի վրայ՝ հորիզոնի ծայրում
երեաց լիալուսինը ու սկսեց զանգազութեամբ վեր
բարձրանալ, Արիւնոտ էր նրա դէմքը ու ծանր
կիճիռները պատել էին նրան ու մոայլեցրել արտա-
յալութիւնը: Տխուր ու մռայլ էր նա, այնքան
ախուր, որ մարգում սրառում սերմանում էր վշտի
ու թափիճներ և ձգում մտատանջութեան մէջ...

Բայց նա բարձրանում էր հորիզոնից ու հատգ-
հուոէ լուսաւորում խաւար երկիրը... Նրա արիւնոտ
ճառագայթները լուսաւորում էին այն դաշտը ու
կիրճը ուր ընկան նահատակները քաջի պէս... տխուր
և սոսկալի պատկիր էր ներկայացնում դաշտը:

Լուսնի ճառագայթների տակ արիւնով ներ-
կուած առուները, տխուր, մելամազնոտ ձայնով խո-
խոզում էին ու խոտերի և մացանների աշանինե-
րով, գալուով սովալով, վազում առաջ ու մտնելով
այլինների ծառերի արանինները ողողում: Եթի նրանց
արմատները... Ծառերի և թփերի արատները ա-
ռութեամբ ծծում էին նահատակների արեան կա-
միլները ու իրանց սրուերի մէջ աւանդ պահում
այդ սաւրը կաթիճները, առաջ թիվի սոսափիւն ար-

ձակելով լուռ հառաշում էին և իրանց կանաչ տերեների վրայ մի մի արցունք թափելով ողբում էին քաջերի մահը...

Սրինոտ դաշտի մէջ գիաթաւալ տարածուած էին արխնաթաթախս դիակները, որոնցից շատերը ձեռքի մէջ պինդ բռնած հրացանի կամ սրի կոժը մնացել էին տեղն ու տեղը անշարժ ու իրանց լայն քացած աշքերով գիտում էին անհուն երինակամարը ու լուռ երկների տնօրինութիւնը խնդրում... Տեղ տեղ դիակները կուտակուած էին իրար վրայ, որոնք հեռուից քարակոյտի նմանութիւն էին տալիս: Մահուան հրեշտակը պտտում էր այդ տեղ և իւր սառսալից թերերի սոսափիւնով անշարժութիւն, մեռելութիւն տարածում... Այն մարդիկ, որոնք գեռ մի քանի ժամ առաջ լի էին եռանդով, նրանք, որոնց կրծքի մէջ բարախում էր սիրտը ու զլուխների մէջ միտք ու գատաղութիւնն էր շարժում, այժմ անշարժ էին և յաւիտենական քնով քնած... Ել չեր լուռում նրանց ուրախ երգի ձայնը, նրանց սրախօսութիւններն ու հանաքները, ուրախ քրքիչն ու արցունքները... Ղոկ էր զէնքի շաշիւնը, գիտակցութիւնը դագարել ու թշնամու հետ գրկախառնուած շամնչը փշել...

Մի ժամ առաջ երբ նրանց երակների մէջ շարժում էր արիւնը, նրանք իրենց սրերը մղում էին թշնամու կուրծքը և վրէժխնդրութեան զարհուրեկի մանշիւններ արձակում. իոկ այժմ երբ սառել էր այդ հոսող արիւնը, թշնամու հետ պինդ գրկախառնուած գետնչը փշել...

Նուած մնացել էին անշարժ և յաւիտենական քնով քներ, Մահը միացրել էր նրանց և վերջ զրել թրշնամութեան... Բայց ահա, խոտերի և մացառների արանքներում, տեղ տեղ կենդանութեան նշաններ են երևում, այնտեղ մարդիկ շարժում են և շարժուելիս խոր հառաչանքներ հանում:

Սյդ վիրաւորները ցաւի սաստկութիւնից երթիւնի կծկում են, մատներով հողը փորսում, սլիկում իրենց արիւնով ողողած խոտերը ու փորսող տալով մի քանի քայլ անցնում ու կրկին կանգնում, հառաշանքներ արձակում... Բայց ահա արիւնոտ դաշտի վրայ երկեցան կենդանի մարդիկ, որոնք լուռ տարածուեցան սգապատ դաշտի մէջ և հետաքրքրութեամբ դիակներն էին քննում: Նրանք մօտենում էին վիրաւորներին, շտապ պատգարակների վրայ դնում ու տանում դէպի վահքը, նրանց գեղ ու զարման անելու: Երջող մարդկանցից երկու հոգի լուռ առաջ ընկան և կանգ առնելով դիակների կոյտերի առաջ, նրանցից մէկը սոսկալով ասաց միւսին.

— Սրբազն, նայեցէք, այս դիակներից մեծ մասը զլուխներ չունեն, անիրաւները անշունց գիտեներից են վրէժ առել ու կտրել զլուխները:

— Օսոկալի է զազանների վարմունքը, Գէորգ, նրանք դիակներից զլուխները կտրելով տարել են Շահզաղէից պարզներ ստանալու, պատասխանեց ներսէս սրբազնը և աշքերից արտասուրները ոլոռն ընկան գետնին:

— Ո՞չ, զարհուրեկի է... Նաղմւ... զաւակ-

Ներս... յանկարծ լսուեց թվի տակից մի ձայն, որ սառսուեցրեց նոցա մարմինները:

—Վիրաւոր է, պէտք է օգնել, ասաց սրբազնը և նրանք առաջ անցան: Մի քանի քայլ դեռ չէին դրած, որ ահա թվի տակից մի մարդ նկատեցին պարսից համազգեստով, որ սողալով առաջ էր գալիս:

Գէորգը կռացաւ գլուխ վիրաւորը և սոսկալով յետ ու յետ գնաց. սառն մահուան քրտինքը պատեց նրա մարմինին ու նա խեղտուող ձայնով կանչեց.—

—Սրբազնն, նայեցէք...

Սրբազնը նայեց ու ինքն էլ սոսկաց: Նրա առաջ տապալուած էր մի այլանդակ մարդ: Աշքերի տեղ արիւնոտ փոսեր էին երեսում, իսկ քիթը, շըրթունքները, ականջները կտրատուած էին, որոնք տեսնողի վրայ զարհուրելի տպաւորութիւն էին թողնում:

—Ո՞վ ես, ինչ է անունդ, հարցրեց սրբազնը խեղտուած ձայնով:

—Օգնեցէք, ցոյց տուէք եջմիածնի վանքը, կմլմաց վիրաւորը:

—Սպասիր, սրբազն, այդ ձայնը ծանօթ է ինձ, պէտք է որ սա ոմբածիգ Յակոբը լինի, ասաց Գէորգը և գաւնալով վիրաւորին ասաց.

—Յակոբ գնեւ ես, նազուի նշանածը...

—Այս, ես եմ, անիրաւները տանջեցին ինձ, սպանեցէք ինձ... գժոխի տանջանքներ եմ կրում... պատասխանեց Յակոբը և ուշաթափուեց:

—Սզնիւ և վեհանձն հոգի, իւր տանջանքով մի վաշտ զօրքի փրկութեան պատճառ եղաւ սա, ասաց Ներսէս սրբազնը և հրամայեց զգուշութեամբ տանել վանքը և առանձնապէս խնամել նրան...

Վիրաւորներին ժողովելուց յետոյ, Ներսէսը գարձաւ վանքը և փակուելով իւր խցի մէջ, սկսեց դառնազին լաց լինել:

Աղի արցունքները քիչ քիչ հանգստացնում էին նրա սիրտը ու թեթեութիւն պարզեցնում նրա հոգուն... Երբ Ներսէս սրբազնը մի փոքր հանգստացաւ, երբ դառն զգացմունքները տեղի տուին խոհան մտածութեան, այն ժամանակ նա Գէորգին իւր խուցը կանչեց:

—Գէորգ, ասաց նրան, գու տեսար Յակոբին թէ պարսիկները ինչ դրութեան մէջ են ձգել, բայց նրանք զրանով չեն բաւկանանալ:

—Ի՞նչպէս, սրբազն, պարսիկները նրան այլ ես չեն կարող ձեռք տալ, նա արդէն Չեր հովանաւորութեան տակ է, պատասխանեց Գէորգը զարմացած:

—Գիտեմ, բայց նրա ընտանիքը... զաւակները... նրանք զոհ կերթան պարսից մոլեռանդութեան:

—Ճիշտ է, սրբազն, նրանց մասին հարկաւոր է հոգս քաշել:

—Ես էլ հէնց նրա համար քեզ կանչեցի: Պարսիկները Յակոբի գաւաճանութիւնը տեսնելով, նրան այլանդակելով չեն բաւկանանայ՝ նրանք իրանց զարբութը նրա ընտանիքից կ'հանեն: Հարկաւոր է

շատպել Երեան, դուրս կորզել նրա ընտանիքը պար-
սիկների ճանկերից, բայց հեշտ չէ Երեան մանել և
այնտեղից դուրս գալ, ուստի ամեն զգուշութիւն ու
ամեն վտանգ ի նկատի պիտի ունենաս: Ասլանիս
կորցրի, վայ ինձ, դու զոհէ նրանց ձեռքը մի ընկ-
նի, մինչև որ Տէրը մի ողորմութիւն կանի տառա.
պեալ հայերիս:

— Ես պատրաստ եմ, սրբազն, հէնց խկոյն
ճանապարհ ընկնել գէպի Երեան և տեղն եկած ժա-
մանակ՝ կեանքս էլ զոհել:

— Դիտեմ, բայց լսիր, Յակոբի ընտանիքը, էջ-
ի ահա այս թղթերը կցրուես տեղացի հայերի մէջ,
որոնց ոտքի կը կանգնեցնես: Շուտով մեր ուստ եղ-
բայրները կ'պաշարին Երեանը և տեղացի հայերը
թող պատրաստ վիսին աջակցելու նրանց և արժա-
նաւոր կերպիւ ընդունելու: Ել ոչինչ չունիմ ասելու,
գնահատը դու գիտես, ասաց սրբազնը և համ-
րուցելով Դէորդի ճակատը, նրան մի կասպոց թղթեր
յանձնեց, որոնք շրջաբերականներ էին և օրհնեց
նրա ճանապարհը:

Քէորդը դուրս գնաց գոհ սրտով և զործելու
ահնչանքով: Քիչ յիտոյ նա էջմիածինը թողած
գէպի Երեան էր շտապում...

Ի՞ւ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻՑ

Այն միջոցին, երբ տեղի ունեցաւ Աշտարա-
կի չարաբաստիկ պատերազմը, ոռոսաց զվասւոր
բանակը Պասկիկչի առաջնորդութեամբ գտնւում էր
Նախիջեանի կողմերը և պատրաստում էր արշաւել
գլավի Թաւրիդ, առանց տեղեկութիւն ունենալու
թէ Սբաս-Միբզան իւր երեսուն հազար զօրքով ար-
դէն գտնւում է Երեանի կողմերը: Կրասովսկուց լուրը
հասնելուն պէս, Պասկիկչը զօրքերի մի մասն առ-
նելով շտապում է Էջմիածին: Այստեղ Պասկիկչը
ներսէսի և Կրասովսկու խորհրդածութեամբ, որո-
շում է առաջ արշաւել գէպի Սարդարապատ բերդը
և ապա պաշարել Երեանը: Զօրքը հացի մեծ պա-
կասութիւն ունենալով, ներսէս սրբազնը յանձն է
առնում հասցնել պաշարը, որը և իսկոյն կատարում է:
Սարդար Սբատ բերդը, որ գտնւում էր Արաքսի տա-
փարակի վրայ, Նահրիար գիւղից մի քանի վերստ
հեռու, անառիկ բերդ էր համարւում և պաշտպան-
ում էր բազմաթիւ թնգանօթներով: Սկզբամբերի
սկզբներին ուստաց բանակը արդէն ճանապարհ էր
ընկնում գէպի Նահրիար գիւղը, իւր հետ ունենալով
ներսէսին և Կրասովսկուն: Այստեղ ներսէս սրբա-

զանը ոռւսաց զօրքի մի մասով անցնում է դէպի
Կողը գիւղը, խլում պարսիկների ձեռքից այնտեղ
ամբարուած պաշարը և վերադառնում Պասկեիչի
բանակը: Սկսում է Սարդար Սքատի պաշարումը և
անձնուէր հոգնորականը իւր շրջաբերականներով
դրդում է Սարդար Աքատի հայ ազգաբնակութեանը
բանալ բերդի գուները և անձնատուր լինել: Սարդար
Սքատի ոմբակոծումը սկսում է և այնտեղի բնա-
կիչները ստիպում են Հասան խանին անձնատուր
լինել և յանձնել բերդը ոռւսաց:

Հասան խանը վախենալով թէ ոռւսաց զօրքից
և թէ ներքին գժտութիւնից, գիշերուայ մութից
օգտուելով, թողնում է բերդը և անցնում Երկան:
Բերդի գոները բացւում են և հայ հոգնորականու-
թիւնը խաչ ու խաչուառով ընդունում է Պասկեիչին
և նրա զօրքց: Պասկեիչը առնելով Սարդար-Սքատ
անառիկ բերդը իւր 13 թնդանօթներով և հացի
պաշարով՝ իւր զօրքով ու հայոց զնդով գալիս է
Եջմիածին և հետեւեալ օրը պաշարում Երկանը: Ե-
րկանից Յուսէին-Ղուլի խանը հեռացել էր և պաշտ-
ովանութիւնը յանձնել իւր եղբօրը՝ Հասան-խանին:
Սկսում է Երկանի պաշարումը և ոռւսաց մհծամնծ
թնդանօթները սկսում են ոմբակոծել քաղաքը:

Ի՞՞.

Տ Ի Ֆ Ը

Երկանը օր աւուր լցում էր Լցում էր
պարսից զօրքերով, ուազմական մթերքներով ու բնա-
կիչներով, որոնց Սարդարի հրամանով ժողովում էին
շրջակայ գիւղերից և լցնում Երկանը:

Սարդարը տեսնում էր որ մօտ է Երկանի վախ-
ճանը, որ հասել է այն ժամը երբ Երկանը իւր ձեռ-
քից յախտեանս անդարձ պիտի կորչի, ուստի և
տեսնդային արագութեամբ ամրացնում էր բերդը և
հացի մեծ պաշար ժողովում՝ պաշարմանը երկար
գիմանալու: Խլառում էր Երկանի փողոցները մար-
դոց բազմութիւնից, ուր պատ անց ու գարձ էին
ժնում պարսիկները զէնքերի մէջ կորած և մոլի
հայեացը էին ձգում ամեն մի պատահող հայի վրայ:
Տաօր-տասերկու հազար հայ շրջակայ գիւղերից թա-
փել էին Երկան և համարեա բանտարկուած պահում
էին նրանց ոռւմների հետ յարաբերութիւն շունե-
նալու համար:

Ամեն մի խցում, ամեն մի տան մէջ բացօքեայ
պատերի տակ թափուած էին հայերը՝ կին, մարդ,
երեխայ, ծեր թէ երխտասարդ և աշնան տերեկի նման
գողգողալով սպասում էին իրանց վախճանին: Բնա-
գողգողալով սպասում էին իրանց վախճանին:

կիշների մեծ մասը տնօրում էր սովոր ձեռքից, հացի պատառ հազիւ էր ճարում և օրերով անզամ, բայց երկների տակ, անօթի անցկացնում, Եւ այդ բաւական չէր, Երևանի խեղառղ տօթ օդին վրայ հասաւ տիֆը և դողը, որոնք սկսեցին առաստ հունձ անել բնակիշների մէջ: Բայց չնայած հայերի այդ տառապանքին, նրանք լուռ աղօթում էին և Աստուածանից գօրութիւն խնդրում ուսւաց բանակի համար. իսկ երիտասարդները լուռ օրերը համարում և սպասում այն վայրկեանին, որ իրենք էլ իրենց ճանկերով անզամ կարողանան խեղով դարաւոր թշնամուն: Պարսիկները զգում էին այդ և հսկումը աւելացնում:

Աշտարակի պատերազմից յիտոյ, սարդար և պատում նստած էին երկու եղբայրներ՝ Հոււին-Շուլի խանը և Հասան խանը. նրանք լուռ ծխու մէին իրենց զալիանները և խորհրդաւոր լուռութիւն պահպանում, Նրանցից ոչ մէկը կարծես չէր ուզում խանզարել խորհրդաւոր լուռութիւնը և ընդհատել մըտքերի թելը: Վերջապէս Հասան խանը ընդհատեց լուռութիւնը:

— Խան, ասաց նա, զեաւուրները լաւ ջարդ կերան մեղանից, այդ նրանց համար լաւ դաս էր:

— Կերան, բայց... պատասխանեց սարդարը խուլ ձայնով:

— Բայց ինչ. . հարցրեց Հասանը, եղբօր երեսը դիտելով:

— Ո՞ն, որ նրանք դրանով հանգիստ չեն կենալ,

մեզ հանգստութիւն չեն տալ և Սարդար Արագով չեն բաւականանալ:

— Քիսեմ, ես էլ այդ էի մտածում: Հարկաւոր է առաջն առնել:

— Հարկաւոր է, բայց ինչպէս:

— Պէտք է Երեանի բերդը աւելի ամրացնել ու պաշարի մեծ պատրաստութիւն տեսնել:

— Այդ բոլորը արուած է, բայց մի բանից պէտք է վախենալ:

— Ի՞նչ բանից, խան, եթէ ուսւները կը գան, մենք պարապ չենք նստի, վկներս դէմ չենք տայ.

— Այդ մենք գիտենք, սարդար, բայց մենք մէնամի էլ ուսնենք, որ հարկաւոր է վախենալ:

— Ո՞վքեր են նրանք:

— Տեղացի և շրջակայրից այստեղ լցուած հայրը..

— Բայց այդ չները կը կստորուին մինչև ուսւների քաղաք մտնելը:

— Այդ դեռ հարց է, խան:

— Ի՞նչու՞ս:

— Դու տեսար, այդ անիրաւները ինչպէս ին վարւում մեզ հետ: Յակոր Եփէնդին քեզ օդինակ. եթէ չլինէր այդ անվիտան հայր, զեաւուրներից ոչ մէկը կենդանի չէր մնայ:

— Աներախտազէտ են այդ հայերը, բայց խիստ կը պատժուեն, ասաց սարդարը մոլեզին ձայնով դառնարվ գէպի դուռը կանչեց. *Հայութակ կանչեց*

— Ո՞վ կայ այդտեղ:

Սարվագներից մէկը ներս վաղից և լուռ կանդնեց դռների մօտ:

— Կանչիր այստեղ Նազի բէկին, ասաց նա, Սարվագը զլուխ տուեց և հեռացաւ: Տիրից դարձեալ լուռթին: Քիչ յետոյ սարդարը նորից սկսեց:
— Եղբայր, ռուսները դալու են Երևան, այդ ակների է, դու պիտի սլաշտպանես:

— Ի՞նչպիս սարդար, իսկ դու մը ևս գնալու, սլաշտախանից Հասան խանը զլուխը վեր բարձրացնելով:

— Ես գնալու եմ Սրաս-Միրզայի բանակը:

— Թող կատարուի Ալլահի կամքը, գնա, Հասան խանը զիտէ սլաշտպանել Երևանել:

Սյդ ժամանակ ներս մտաւ Նազի բէկը, իսոր զլուխ տուեց, ձեռքերը կրծքին դրեց և լուռ հրամանի էր սպասում:

— Նազի բէկ, զուշակութիւններդ ճշտուեցան, գեաւուրը դաւաճանեց մեղ:

— Եւ արժանի պատիժն էլ ստացաւ, սարդար:

— Բայց այդ բաւական չէ, աւելացրնց սարդարը:

— Հրամայիր, սարդար, բայց նրա հոգին այժմ դժոխքի փայ է դարձել:

— Իսկ կինը, զաւակները...

— Նրանք այստեղ են, սարդար, սլաշտախանից Նազի բէկը և նրա աչքերում սնցան մոլի կրակներ:

— Պէտք է նոցա բերել այստեղ, առ հետդ հրաւու սարվագ և ըաշ տուր այստեղ. իսկ յետոյ կը մտա-

ծինք թէ ինչ տանջանքներով պէտք է սպանել: Թող գեաւուրները տեսնեն գրանց տանջանքները և խելքները գլխներին զայ:

— Պատրաստ եմ հրամանդ կատարել, սարդար, ասաց Նազի բէկը և դուրս գնաց: Պալատի մէջ կրկին մնացին երկու եղբայրները, նոյնպէս մտարյդ, նոյնալէս մռայլ ինչպէս առաջ...

պկուել և շոյել էլ չէ ցանկանում իր անուշիկ դաւակիներին, բայց թէ ինչու, այդ հարցին պատասխանել անկարող էր:

Նա սիրում էր միայնութիւն, երբ ինքը պատռածնի առաջ նստած, լուռ, իւր մաքերի մէջ է ընկդմում ու նրանց հետ ընկած, սլանում է հեռու, հեռու... Եւ այդ ժամանակ երբ Մանուշակը մօտենում էր, նրա մորերը ընդհատում, նազրուն կամ ոչինչ չէր պատասխանում կամ սառը պատասխան տալով լուցնում նրան, Երկու երեք օր էր, ինչ նազրուն այդ գրութեան մէջ էր և այդ մի քանի օրուայ ընթացքում, նա փոխել էր իր յարաքերութիւնը Մանուշակի հետ, կարծես ատում էր նրան:

— Ո՞հ, ես ատում եմ այս ազգին, ատում էր ինքն իրան նազրուն և ապա շարունակում, ինչու, ինչ է արել, բացի օգնութիւնից, նա ինձ ինչ վնաս է տուել, պահապան հրեշտակի նման կանգնած է զաւակիներին համար, իբրև հարազատ քոյր խնամում է նրանց, չէ, նա սիրելի է, շատ սիրելի, ապրի նա որ այս գառն օրերին սփափում է ինձ...

Բայց ես ինչու այսպէս եմ դարձել ինչու տառիմ եմ աշխարհը, մինչև անդամ զաւակներին, կեանքառ տաճառմ էր զարդար և դառն մոքերը կնուրած էին նրան հաղին:

Այդ գրութեամբ երկու օր միայն մնաց, երբ բայց օրը նա ուղեց անկազնից վեր դժուար, բայց ծովածում էր աշքերը բանաւ, շարժում զործել, Մի փոքր էլ, ոչ վայրին եւ ի խորյու վեր կը կենամ,

Վազրուի վշտով լի հոգուն, զազտուկ մօտենում էր տիֆը, նրա քայլայուած մարմինը կլանելու վերջ տալու նրա թէ հոգեկան և թէ մարմնական տանջանքներին... Վայ է, երբ մարդու հոգին ընկույն է վշտի այդ անողոք ճանկերի մէջ, այն ժամանակ մարդուս գիտակցութիւնը թուլանում է, դատողութիւնը բժանում ու ընկնում մի այնպիսի գրտթեան մէջ, երբ կեանքը իւր բոլոր գեղեցկութեամբ շրանում է նրա համար և դառնում սնոտի մի երազ: Սյդ ժամանակ նրա մարմինը նիհարում է, մահուան զեղութիւնը պատում գէմրը, փալլուն աշքերը պղտորում, ընկնում են ակնակապիճների մէջ և երեսի վրայ հաւաքւում են խոր կնճիռներ, Երիտասարդ կեանքը թառամում է ու կայտառ գէմրը թորշումում:

Հոգեկան և մարմնական արդ զառթեան մէջ զարմանաւութիւնը աշխարհը առ անզարդ մտաւ և սկսեց իւր քայլումը... Բայց նազրուն զիռ այդ չպիտօք, նա զիռ մուռ չեւ հատկանում: Ցպում էր որ այս քանի օր է ինքը թոյլ է, թմրածի պէս, աշխատել չէ ուզում:

ասում էր նա և դարձեալ շարունակում անկողնում
մնալ: Մանուշակը և երեխաները վազուց զարթնել
էին, արել արդէն բաւական բարձրացել էր, նա այդ
տեսնում, զգում էր, բայց կարձեալ շարունակում
անկողնում մնալ:

— Ի՞նչ է պատահել ինձ հետ, միթէ ես հի-
ւանդ եմ... միթէ զարհուրելի այն հիւանդոթիւնը,
որը բաղաքում այնքան զօներ է տանում, ինձ էլ է
վարակել, ինձ էլ է ուզում ոն գերեզման իջեցնել...
Վայ ինձ, այն ժամանակ երեխաներս որը կը մնան,
անմայր, իսկ իմ Յակոբը անշունչ դիակս կը տեսնի...
ԶԵ, ես հիւանդ չեմ, Տէրը մի արացէ, ասաց նա
ու զլուխը քիչ վեր բարձրացրեց, ուզեց վեր կենալ,
բայց ուժերը թուլացան ու նրա զլուխը ծանրացած
ընկաւ բարձի վրայ:

Մանուշակը որ մինչև այդ ժամանակ չէր ու-
զում անհանդիստ անել, նրան քնից փերկացնել, երբ
տեսաւ որ ստվորականից խիստ շատ նազուն ան-
կողնումն է մնում, զգուշութեամբ մօտեցաւ նրա
դէմքին նայեց ու մնաց ստրօտիահար, տալուշ կըտ-
րած: Նազուի աշքերը վաւասմ էին անսովոր կրա-
կով ու լայն բացած աշքերով նայում Մանուշակին:

— «Այ ինձ, ինչու է Մանուշակը այսպիս ասլ-
շած նայում ինձ, միթէ ես յիբաւի հիւանդ եմ»
մատնեց նազուն և դարձեալ լուռ, Մանուշակը երե-
սին նայեց: Մանուշակը որ վեռ կէս ապշած,
պիս վախսեցած նայում էր նրան, երկիւլածու-
թեամբ ձեռքը զրեց նազուի ճակատին և զար-

նորուեց: Նազուի ճակատը այրում էր տաքո-
թիւնից:

— Դու հիւանդ ես, բոռանամ ես, Նազու ջան,
ասաց նա:

— Ի՞նչ հիւանդ... ինչ ես ասում, ասաց Նազ-
ուն և լռեց, իսկ քիչ յետոյ չարունակեց.

— Տես, տես, Մանուշակ, ինչպէս բարձրանում
է, սլանում վեր, վեր... գնաց, անյայտացաւ..., բայց
յետ չի գառնում...

— Ով, ինչը... քոյրիկ ջան, հարցրեց Մանո-
շակը և նրա աշքերում արցունքներ երկեցան:

— Տիթէ չես տեսնում ինչպէս արտգութեամբ
իշուում է նա, ինձ մօտենում...

— Ով քոյրիկս, ով է մօտենում:

— Տան առաստաղը, ահա բոլորովին մօտեցաւ,
նողն ու բարը թափուում են վրաս, աշքերս կուրաց-
նում, սիւնը, տան սիւնը ահա, կրծքիս վրայ զրուեց,
նեշում է սիրաս, ոհ, օգնեցէք, օգնեցէք... մեկը
եմ...

Մանուշակը խելագարի նման դուրս պրձաւ
տանից, օգնութիւն զուաց և ժողովեց իւր շուրջը
հարեան կանանց: Նրանք շրջապատեցին նազուին
ու երբ նկատեցին նրա վտանգաւոր գրութիւնը յետ
ու յետ զնացին, նրանցից մէկը միայն խորհուրդ
տուեց Ժայ զոր զնիլ ճակատին: Մանուշակը կա-
տարում էր այդ, Քիչ յետոյ նազուն բաց է անում
աշքերը և շուրջը նայում, բայց դեռ ոչինչ չէ հաս-
կանում թէ ինչ է կատարում շուրջը այլ պատշի

նման նայում է իւր երեխաններին, որոնք լացակումած աշըերով նայում են նրան:

— Մայրիկ, սիրելի մայրիկ, թոթովում է մէկը և փաթաթում նազուին: Նազուի գիտակցութիւնը կարծես ետ է դառնում ու նա լեկով զաւակի ձայնը, ինքն իրեն ասում «Փառք Աստուծոյ, երեխաններս մօսս են, ես մննակ շեմ...» Ապա նա աշըլ շշտակի Մանուշակի աշըին զցելով ասում է.

— Մանուշակ, ինչո՞ւ է նա կանոնած պատեր, գուրս բշիր, դուրս, ես սոսկում եմ...

— Ո՞վ, բոյրիկ:

— Միթէ չես տեսնում ահա ոտքերիս տակ, ինչպէս նա ծամածուում է, աշըերը պատեցնում, ատամները կրճտացնում ու ինձ նայում... վահ, դու մըր ես գնում... Միթէ ես քեզ այդպիս էի սիրում... Ինչո՞ւ ես կուշ գալիս, փոքրանում... մի բռունցքի շափ էլ շկաս...

— Փրկեցէր սրան, երկնային գօրութիւնք, պատեցէր ի սէր Աստուծոյ, կանչեց Մանուշակը և հեկեկանքները խեղացին նրան: Երեխաններն էլ մի կողմից սկսեցին ճիշ արձակել, իսկ հարևանները լուռ լալ ու հետզհետէ դուրս գնալ:

Այդ օրը մթնեց, նորը լուսացաւ. նա էլ մըթնեց ու խաւարը պատեց երկրին, ոև ու մութ խարը: Նազուի հիւանդութիւնը աւելի ծանրացել էր ւարը: Նազուի հիւանդութիւնը աւելի ծանրացել էր ւարը: Էլ շրջապատճներին չէր ճանաչում, իւր զառ ու նա էլ շրջապատճներին չէր ճանաչում, իւր զառիների ձայնը էլ չէր ապօռմ, գործվագութ մօքւակների ճայնը էլ չէր ապօռմ: Նազուն կարծես կտրուել էր սիրուը էլ չէր խօսում: Նազուն կարծես կտրուել էր

աշխարհից... Մանուշակն էր, որ սրտի մարմաքով լուռմ էր նրա զառանցանքները և զիտեցածի շափ դեղ ու դարման անելով՝ աղի աղի արցոնքներ թափում:

Խեղճ, նա դեռ չգիտէր զիտին զալիքը... Բայց աշխարհո պտտում էր ու խաւարը աւելի խտանում: Մինչդեռ ճրադի ազօտ լոյսի տակ զառանցամ էր նազուն, իսկ նրա մօտ լուռ հեկեկում Մանուշակը, գուրսը՝ անհուն երկնակամարի վրայ պազզում էին վառ ատաղերը և մարդոց անզօրութեան վրայ ծաղրում...

— Ազի, շնոր, շրերդ հազիր, պատրաստուիր, փեսան զալու է, տես, փեսայի տանը զուռնան է փշում, հիւրերը ժողովում... զառանցում էր նազուն ու ոտքով վերմակը դէն շպրտում:

— Աստուած, խղճա, ազատիր նազուին, մըրմնջաց Մանուշակը ու ծունկ չոգելով ձեռքերը կարկառեց դէպի վեր և սկսեց ջերմաջերմ աղօթել, բայց այդ միջոցին գրսի դուռը շտապ շտապ ծեծեցին և Մանուշակի մարմինը լցրին սառը դողով: «Ո՞վ պիտի լինի», մտածեց նա առանց տեղից վեր կինալու: Բայց այս անզամ դուռը աւելի ամուր ծեծեցին և քիչ մենաց նրան կրնկահան անէին,

Պրսից լուռում էր թուրքերի խօսակցութիւն, պարզ էր, որ հկողները լաւ մարդիկ չէին: Մանուշակը սոսկալով վեր թռաւ տեղից, աջ ու ձախ նայեց և պատից կախ արած սուրը մի վայրկեանում վեր թռցրեց ու պահեց իւր զգեստների տակ,

ապա նա համարձակ դիմելով գէպի դուռը կանչեց.

— Ո՞վ էք ու ինչ էք ուզում:

— Բաց դուռը, ասաց մէկը հրամայողաբար:

Մանուշակը սոսկաց, այդ ձայնը ծանօթ էր իրեն, որը վերաբաղբեց իւր մտրի մէջ հին հին ցաւերը ու արթնացրեց իւր վիշտը: Նա ճանաչեց նազի բէկի ձայնը:

— Ո՞վ էք, նորից հարցրեց Մանուշակը:

— Բացէք, մենք սարդարի հրամանով ենք եկել, ձեզ մնաս չենք տալ, Յակոբ Եփենդին է ուղարկել, ասաց նազի բէկը:

Մանուշակը հաւատաց, դուռը բաց արաւ ու իւր առաջ տեսաւ նազի բէկին ու երկու պարսիկ սարվազ, ուղրից մինչև գլուխ զինսւրուած:

— Ի՞նչ էք կամենում, հարցրեց խեղտուած ձայնով Մանուշակը և ձեռքը սրտին դրեց. Նրա սիրու արագ արագ բարախսում էք, մինչ իսկ լսելի էք լինում նրա բարախման ձայնը:

— Հիմա կը տեսնեմ, ասաց հեգնօրէն նազի բէկը և բռնելով Մանուշակի ձեռքը, ուզեց առաջ անցնիլ, բայց Մանուշակը թափահարելով ձեռքը, դուրս պլծաւ նազի բէկի ձեռքից և շեշտակի տուն մղուեց: Նազի բէկը և պարսիկները մտան այն սենեակը ուր պարկած էք հիւանդ նազուն:

— Ա... խանումը քնած է, հանդիստ, ասաց նազի բէկը և ապա դառնալով սարվազներին աւելացրեց.

— Տղէքք, դուք խանումին արթնացրէք, իսկ

ես այս սիրուն աղջկան, որը Օձնայ դաշտում քաջութիւններ էր անում:

Սարվազները մօտեցան հիւանդ Նազոււին: Նա սրբուած, լայն բացած աչքերով նայեց թուրքերին, կիսատ բարձրացրեց զլուխը, մի խոր հոգւց հանեց, ապա համարեա թէ զոռաց.

— Եյ, ինչ էք յիմարների նման կահգնել, չէ որ թորոնի ժամանակը անցաւ, խմորը կը փշանայ, Յակոբու թաժա հաց չի ուտել...

Թուրքերից մէկը մօտեցաւ նրան, յանկարծ ձեռները պինդ բռնեց և ուզեց բարձրացնել բայց, սոսկալով բաց թողեց և ասաց.

— Ալի, սա հիւանդ է, ոչինչ ընդիմութիւն չի անում, տեսնում ես զառանցում է...

— Այդ լաւ է, թող դրան, մենք մեր բանը տեսնենք, երեխաների հիտ հեշտ է բանը վերջացնել, պատասխանեց Ալին և նրանք հոտառու չների նման սկսեցին տան քունջ ու պուճախը ընկնել, իրեղների մէջ ընտրութիւն անել ու ձեռքն ընկածները գրպանները լցնել:

Մինչ այդ, նազի բէկը ու Մանուշակը բաշրշում էին, երբ յանկարծ մի սուր ճիշ լսուեց ու նազի բէկը գետին գլորուեց: Արիւնաթաթաւ սուրը ձեռին գեռ կանգնած էք Մանուշակը, երբ միւս երկու սարվազները նկատելով նազի բէկի ընկնելը վրայ վագեցին Մանուշակին:

Այդ միջոցին տան դուռը բացուեց և այնտեղ երեաց Գէորգը: Սի վայրինում նա ամեն բան հառ-

կացաւ, սուրը պատենից հանեց ու յարձակուեց պարսիկների վրայ։ Պարսիկները թէկ շփոթուեցան, բայց կատապարտ ընկան Գէորգի վրայ։

Կոփուք երկար չտեսեց, երկու սարվադների դիմակներն ել ընկան նազի բէկի դիմակի վրայ։ Արիւնոտ սուրը ձեռքին գեռ կանգնած էր Մանուշակը և շփոթուած նայում էր իւր առաջ փռուած պարսիկներին, երբ Գէորգը բռնեց նրա թնից և ասաց.

— Շուտ, Մանուշակ, կանգնելու ժամանակ չերոպէն թանկ է, փաթմաթիր երեխաներին, մենք պիտի հուանանք այստեղից, իսկ նազուի հոգով ես կը քաշեմ։

Մանուշակը թափ եկաւ։ Գիտակցութիւնը զլուխը ժողովելով, սուրը մի կողմը շոլբոց և վազեց գէպի մանուկները, որոնք ճիշ ու կական էին բարձրացրել։

Գէորգը մօտեցաւ նազուին և շփոթուած կանգ առաւ։ Նազուն լայն բաց արած աշքերը զցել էր առաստաղին և նրա կրծքից դուրս էին թուշում մահամերձ խրխրոցի ձայնիր։

— Վայ ինձ, այս ինչ է, Մանուշակ, միթէ առներաները սրան արդէն վիրաւորեեն, ասաց խեղտուած ձայնով Գէորգը և նրա աշքերում արտասուրենք երեացին։

— Ո՛չ, ո՛չ, նա հիւանդ է, ծանր հիւանդ, ինչ պէտք է անենք դորա հետ, գորան տանել չի կարելի։ Բայց անկարնի է մնալ այստեղ, ամեն մի րոպէն թանկ է մեղ համար։

— Ահա, առ այս երկու անմնադ մանուկներին և առար, իսկ ինձ թող այս տեղ մեսնելու նազուին հետ, ասաց Մանուշակը։ Գէորգը ոչինչ չը պատախանեց, նա մտայոյգ նայում էր նազուին, երբ վերջին ծանր ախ քաշեց, մի տեսակ ցնցիւն արաւ ու մնաց անշարժ։

— Ամեն բան վերջացաւ, նազուն աղատուեց թուրքերի տանջաներից, ասաց Գէորգը զլուխը կախ գցելով։

Սյու միջոցին Մանուշակը թողնելով մանուկներին ու վրայ ընկնելով նազուի սառչող դիմակին սկսեց համրուրել նրա դէմքը ու դառնազին հեկեկալ։ Յոպէն ծանր էր, տեսարանը կսկծալի։ Գէորգը լուռ էր և յուզուած, երեխաներն էին, որ աղշած աջ ու ձախ էին նայում և լուռ էին։

Բայց ժամանակը թռչում էր արագ։ Գէորգը այդ զգում էր, նա հասկանում էր, որ ուշանալով թէ իւր և թէ երեխաների ու Մանուշակի կեանքը վտանգի էր ենթարկում։ Բայց նա դեռ թոյլ էր տալիս Մանուշակին իւր կսկծալ հանել դառն արցունիք թափելով։ Բաւական ժամանակ անցաւ, Գէորգը մօտեցաւ Մանուշակին։

— Բաւական է, ասաց նա, փակիր նազուի աշերը և մենք զնանք։ Դորա հոգով ինձ թող։

Մանուշակը երեխայի նման հնազանդուեց նըրան, փակից նրա աշքերը, ծունր գրեց նրա դիմակի առաջ, վերջին անդամ համբաւրեց նրա սառչող ճա-

կատը և առնելով երեխաներին Գէորգի հետ դուրս
գնաց տանից:

Լուսանալուն մօտ էր, որ Գէորգը Մանուշակին
ու Յակոբի երեխաներին ապահով կերպիւ ճանա-
պարհ դցելով Եջմիածին, վերազաձաւ դէպի Նազլուն
երկու ուրիշ հայերի հետ, որոնք Նազլուի դիակը
վերցնելով տարան հողին յանձնելու: Բայց այդ ժա-
մանակ արդէն լուսացել էր և Երեանի փողոցները
կենդանութիւն առել: Գէորգը վշտի մէջ ընկած
չնկատեց թէ ինչպէս մի պարսիկ զննում էր իրան
և իրա հեռանալոց յետոյ ներս մտնելով Յակոբի
տունը, նկատեց զիակները. և շունչը կտրելով վա-
ղեց, եղելութիւնը Հասան խանին իմաց արեց:

Էանը կատաղեց: Մի խումք երիտասարդ հայեր
կալանաւորեց և դրանց մէջ Գէորգին, հէնց այն
ժամանակ, երբ սա Ներսէս սրբազանի ըրջաբերա-
կաններն էր տարածում: Երբ նա բռնուեց, լրտե-
սող պարսիկը մատը դէպի Գէորգը դարձնելով ա-
ռաց.

— Ահա այս շունն էր Նազի բէկին սպանողը:
Գէորգին տարան...

Ա.Ա.

ԹՆԴԱՆՈԹԻ ԲԵՐԱՆՈՒՄ

Սարդար-Արագ անառիկ բերդը ընկել էր,
սպասից ահեղ զօրութիւնը հալածական եղած ուռ-
սական անհամեմատ փոքրիկ զօրից, այս ու այն
կողմն էին փախել ու վրէժմնդրութեան կրակով
լցուած, յարմար ժամանակի էին սպասում իւրեանց
բէնը թափելու: Բայց նրանք ամեն տեղ շարդուում
էին, գլխիկոր փախուստ գառնուում:

Գէորգին ու Նրա հետ մի քանի տասնեակ հայ-
եր բռնելոց ու բանտարկելուց յետոյ. անցել էր
մօտ երկու շաբաթ երբ ուսւաց բանակը պաշտեց
Երեանը ու բառասուն թնդանօթ շարելով քազաքի
շորս կողմը սկսեց ոմբակոծումը: Այդ ժամանակ
Երեանում մնացել էր Հասան խանը իսկ սարդարը
չկար: Հասան խանը Սարդար-Արագից ամօթարար
փախչելով եկել էր Երեանը պաշտպանելու: Բարկու-
թեան փրկուրը բերանին նա զգում էր իւր անզօ-
րութիւնը բայց թէ զեռ մնում էր քաղաքում, յու-
սալսվ բերդի պարսպների վրայ: Բայց ուռսական
բանակից քառասուն թնդանօթ ուռմբ էին շպրտում
ու դղրդեցնում քաղաքը ու հետզհետէ մոխրի կոյտ
գարձնում նրան:

Հասան խանը տհմնում էր այդ և կատաղած իւր վրեժը լուծում հայերից, որոնց համարում էր իւր թշուառութեան միակ պատճառ։ Երեանի մութ և խոնաւ բանտը արգէն լցուած էր բանտարկեաներով, որոնք զիմայակապ համարեա իրար վրայ էին ածուած։ Բանտի օգը այնքան ըիշ էր, որ բանտարկեաները համարեա չնշասպառ էին լինում։ Հայերով լցրել էին բանտը, առանց հոգս քաշելու թէ նրանը կարող են այդտեղ չնշարգել լինել։ Ահա մօտ երկու շարաթ է, ինչ այդ բանտը լցուած է դժբաղուներով, որոնք ամեն բովէ սպասում էին իրանց վախճանին, սակայն Հասան խանը կարծես գիտմամբ ուշացնում էր նրանց գատապարտութեան օրը, որպէս զի նրանք բանտում աւելի տանջուին ու թուանան։

Բանտարկեաները ամենայն համբերութեամբ տանում էին բանտի զրկանքները ու անվախ սրտավ սպասում մահուան։ Ի՞նչ յանցանք էին գործել այդ հայերը — ոչինչ։ Նրանց յանցանքը միայն նա էր, որ իրենք քրիստոնեայ էին և հետեապէս կողմնակից ուստաց։ Հաց ու ջրով նրանք օրեր էին անցկացնուել և ոչինչ տեղեկութիւն չունէին թէ դրսում ինչ է կատարում, երբ թնդանօթների որոտը դպրոցը նրանց բանտի պատերը և նրանց հոգին լցրեց յուր սոյ մի թոյլ նշանով։

Կանցքէ Ռուսիա, կանչեց բանտարկեաներից մէկը, զիմայակապ ձեռքը վեր բարձրացնելով և ալ դիմելով միւս բանտարկեաներին աւելացրեց.

— Տղէրք, բաջ կացէք, սիրտ առէք, մեր եղբայրներն արդէն պաշարեցին քաղաքը։

— Գէորգ, միթէ ռուսներն եկան, ասացին բանտարկեաները շրջապատելով մեղ ծանօթ Գէորգին, սրի ոտն ու ձեռքը շվթայած էր և շվթայի ծայրը պատին ամրացրած։

— Սյո, չէք լսում, թնդանօթները գոռում նն, այդ ռուսաց թնդանօթների ձայնն է, որ ռումբերն ալ շպրտում քաղաք։

— Բայց Հասան խանը հիմա կատաղած կը լինի, սասց մէկը։

— Թող կատաղի, մեղ ի՞նչ փոյթ…

— Ե՞նչպէս թէ ինչ փոյթ, չէ որ նա մեղ կեն, դանի ռուսների ձեռքը չի տայ։

— Տղէրք, մահը մի է, մարդ մի անգամ պիտի մեռնի, թող մենք նահատակուենք, քաջութեամբ մեռնենք և ցոյց տանք պարսիկներին, որ հայն է հայրենիքի համար մեռնել զիտէ։

Ի՞նչ վիաս թէ կը մեռնենք, չէ որ մեր մահից յետոյ մեր եղբայրներն ու բոյրերը աղատ չունչ կը քաշեն։ Հասաւ ժամը, պարսից բանութիւններին սրանով վերջ կ'զբաւին և կապրի Հայաստանը, սասց Գէորգը ոգեսրութեամբ։

— Կեցցէ Հայաստան, կեցցէ Ռուսիա, գոռացին բանտարկեաները ու սկսեցին խմբովին մի երգ նշեցնել։

Պատերազմական էր այդ երգը, Կեսանք ու հոգի էր ներշնչում նրանց սրտին ու հոգին լցնում

պատերազմական խանդով։ Հին հին անցած գնացած ժամանակները կարծես վերաբարեւել էին նրանց մէջ և մեր նախնաց արինը եռում էր երակիների մէջ։ Բայց նրգը երկար չտեսից։ Բանտի գուռը բացուց և մի քանի պարսիկ զինուորներ ներս մտնելով բանտ, ձեռքի մտրակներով սկսեցին հարուածել բանտարկեալներին և զոռալ.

— Եներ, ձայներդ կտրեցէք, քանի որ գլուխներդ ուսերիդ վրայ է մեռում, թէ չէ Հասան խանի ականջը կընկնի և ձեղանից ոչ մէկը արկի լոյս չի տեսնի.

Թող սատկի Հասան խանը, կանչեցին զանազան կողմերից։ Զինուորները ծեծելուց յոդնեցան և զուրո՞ վնացին բանտից։

Հետեւալ օրը նոր լուսացել էր։ Թնդանօթների ձայներ աւելի սաստկացել, երբ բանտի գաները բացուեցան և բոլոր բանտարկեալներին զուրս տարան բանտից։ Նրանք շրջապատուած մի խումբ զինուորներով, առաջ անցան և կանդ առան հրապարակի վրայ ուր ահագին բազմութիւն էր խոնուած։ Գէորգը որ ամենից առաջ էր գնում, չորս կողմ նայեց և երբ տեսաւ Հասան խանին և մեծամեծներին ձի նստած, ամեն ինչ հասկացաւ։ Նա զգաց որ իւր վերջին բռպէն մօտեցել է, բայց սիրու թունդ չտաւ, երկիւղի ոչ մի նշան չարտայախեց դէմքի վրայ։

Բանտարկեալներին երկու երկու կապեցին տւաշոց պատրաստած սիների վրայ, դօրքից մի

խումբ մարդ ջոկուեց, տասը քայլ բանտարկեալներից հեռու կանգ առաւ և բարձրացնելով հրացանները, պատրաստ էին արձակելու։ Հասան խանը վճռել էր բոլոր բանտարկեալներին զնդակահար անել, որ ուռուների ձեռքը չընկնեն։

Հասան խանը գառը, հեղնական ժամփով նայում էր շուրջը և զեռ ուշացնում հրաման տալը։

— թող տեսնեն մնացած գեաւուրները և Հասան խանի վախը սրտերումն ունենան, որ միւս անգամ իմ գէմ չ'ապստամբեն, ասում էր նա շրջապատող բազմութեանը նայելով։

Բայց այդ ժամանակ զեռ զոռում էին ուռսաց բանակի թնդանօթները, զոռում պարսից թնդանօթները և օղը դպրեցնում երբ յանկարծ մի ուռը ձայն լսուեց։

— Տղէրք, քաջ կացէք, երգը, երգը հնչեցրէք, ասում էր այդ ձայնը զառնալով մահուան դատապարտուածներին։ Խօսողը Գէորգն էր, որ սիրտ ու հոգի էր ներշնչում։

Պարսից զինուորներից մէկը սուրը հանեց, վրա վազեց դէպի Գէորգը, բայց Հասան խանը արդելեց։

— Թոնկ, այդ շունը ուրիշ մահով պիտի մեռնի, սասց նա։

Ոյտ ժամանակ մահուն դատապարտուածները աչքերը երկինք ուղղած մի երդ հնչեցրին, որ սառ սուռով պատեցին լսողներին, Երգը սրտառուչ էր և յաւղիւ։ Նրանք հայրենիքին փրկութիւն էին երգում,

երբ Հասան խանը նշան արաւ և հրացանները ճայ
թեցին։ Երբ ծուխը ցրուեց, կարմիր արիւնը գուր
էր բղխում գերիների կրծքերից խոկ չըթունքներ
գեռ կարծես մրմնջում էին հայրների փրկութեա
երգը...

Երբ բոլոր զերիները վնդակահար հպան, Հա
սան խանը ցոյց տալով դէպի Գէորգն տսաց.

— Այժմ հերթը սրանն է, սրան հարկաւոր
ուսւաց բանակն ուղարկել, շատ է սիրում նրանց

Պարսիկները հասկացան Հասան խանի միտքը
Նրանք վերցրին Գէորգին, տարան դէպի սպարիսով
և կապեցին թնդանօթի բերանում։ Ծմբաձիդ վ
նուորը պատրոյզը ձեռը պատրաստ կանգնած է

— Կեցցէ Մուսիա, կեցցէ Հայաստան, գուս
նա, Թնդանօթը ճայթեց, հառաշեց, ախ քաշեց
իւր բերանից կրակէ բոց հանելով, թշուառ Գէորգ
մարմնի մասունքները շպրտեց դէպի ուսւաց Ի
նակը։

Հասան խանը գոհ որտով գարձաւ պալատ-

էն.

Ե Բ Ե Կ Ս Ի Ա Ռ Ո Ւ Ս Ը

Վոլթ էր Զորս կողմը լուսթիւն էր տէ-
րում, մինը այն ահաւոր լուսթիւններից, որոնք
զարհուրելի փոթորիկ են գուշակում։ Լոել էին
ուսւաց թնդանօթները, լոել պարսիցը։ Նրանք
կարծես հանգստութիւն էին տալիս իրենց մահա-
շունչ բերաններին նոր ոյժով յարձակուելու և լա-
փելու ամեն պատահած։

Երեսանը արգէն կիսով շափ փլատակների էր
նմանւում, բայց Հասան խանը գեռ յամաւում էր
բերդը յանձնել ուսւաց, գեռ նա յոյս ունէր դիմա-
գրել, դեռ նա յոյս ունէր աղատուել նրանցից։ Յան-
կարծ խորին լուսթիւնը ընդհատուեց ուսւաց բա-
նակից արձակուող մի թնդանօթի որոտմունքից։
Նրան հետեւ միւսը, երրորդ, չորրորդը և քառասուն
թնդանօթ սկսեցին միանդամից գոււալ ու ուումքերով
լցնել քաղարը։ Քիչ յիտոյ զուացին նաև պարսից
թնդանօթները։ Հասան խանը գունատուած, այլայ-
լած ձիու վրայ նոտած, ինչպէս թակարդի մէջ
բռնուած զաղան, այս ու այն պարսպի վրայ Եր
վագում, խրախուսում, քաջալերում իւր զօրքերին և
առաջ գառնացած սրտով նայում քաղաքին, ուր շի-

Նութիւնները մինը միւսի յետելից կործանւում էին, խորտակւում և իրանց փլատակների տակ թաղում բնակիչներին...

Փլատակների տակից լսում էին կանանց ու երեխանների աղիողում լացն ու կոծը, որոնք ձեռքերը կարկառած օվնութիւն էին կանչում... Բայց Հասան խանը անցնում էր նրանց մօտով սառն ինչպէս մահ, անզգայ և լուռ։ Նրա սիրտը այդ ժամանակ եռ կալիս, մտքերը շփոթւում և գառն վիշտը պատում սրտին։ Նա չէր ցաւում, որ փլատակների տակ հազարաւոր կետնքեր են հանգչում, որ քաղաքը դառնում է աւերակների մի կոյտ, այլ նրա սիրտը տանջուում էր, բրբրում էր, որ ինքը չի կարողանում պաշտպանել քաղաքը և Երևանն էլ Սարգար-Արագի նման պիտի թողնի գեաւուրների ձևորը ու այդպիսով վերջ դրուի - Երևանի խանութեան տիրապետութեանը։

Խանը մատայող առաջ էր գնում, երբ քաղաքի մի փողոցում նկատեց կարմրածիրանագոյն մի շերտ, որը հետզհետէ ընդարձակւում էր և լուսաւորում իր շուրջը։ Քաղաքի մէջ արդէն սկսուել էր հրդեհը, որը հետզհետէ աւելի մեծ ծաւալ էր ընդունում և լուսաւորում խանի գժգոյն գէմքը։ Նա առաջ վաղեց դէպի լոյսը, խուռն քաղմութիւնը ճիշ ու կական էր բարձրացել, բայց երբ նկատեց խանին, մի վայր կիան միտին լոեց դիմժական զօրութեամբ, ապա շրջապատելով խանին իբրև մի մարմին կանչեց։ Կայանը, մենք մեռանք, անձնատուր եղէք...

Խանը կատաղեց։ Նրա գժգոյն գէմքի վրայ անցան բարկութեան ալիքներ, աչքերը գուրս թռան ակնակապիճներից և վայրենաբար ամրոխին նայելով կանչեց։

— Լաեցէք, վախկոտ չներ։

— Խան, խայլիր մեղ...

— Ո՛չ մի ձայն, խանը մինչև վերջին կաթիլը կը պաշտպանուի և քաղաքը չի յանձնի գեաւորներին, ասաց Հասան խանը, ձին մարակեց, իւր ոտքերի տակ կոխորտեց մի քանի հոգի և առաջ անցաւ։ Նրա յետելից լուսեց ամբոխի խուլ ձայնը։ Սյունայնը անէծը և նզուքը էր թափում նրա գլխին։ Հազարն խանը լոեց, բայց լուռ կացաւ։ Նա առաջ անցաւ և յանկարծ մեխուածի նման կանգ առաւ։ Ուումբը հինց այդ բոպէին դիպաւ մօտակայ շինութեանը և կործանելով նրան, Հասան խանին փոշու ամպի մէջ կորցրեց։

— Սլահ, Սլահ... մրմնջաց Հասան խանը և դարձեալ առաջ անցաւ։ Երևանը դարձել էր Սողոմ։ Վերից կրակ էր թափում, ներսից այրում, փոշու ու հրդեհի բացը լցրել էր քաղաքը և նմանում էր մի հոացող կաթսայի։

— Խան, խայլիր, ասաց Հասան խանի յետնորդներից մէկը և ցոյց տուեց մօտակայ պարիսպը,

— Խնչ է դա, հարցրեց խանը խեղուած ձայնով։

— Միթէ չես տեսնում, խան, պարիսպը կործանուած է և գեաւուրները ամեն բոպէ կարող են ներս խուժել քաղաքը։

— Զեն համարձակուի, խանը զեռ կեռ կենդանի է, ասաց նա և պղտոր հայեցքով զեռ նայում էր քանիդուած պարսպի վլատակներին, երբ նրա ականցին հասաւ թմբուկների ձայներ և քիչ յետոյ ոռու սական «սւրայի» ձայնը, որ հնչում էր պարսպի դուրս։ Խանը սոսկաց։ Նրա մաղերը փշաքաղուեցին և քրտնքի խոշոր կաթիլները դուրս ցայտեցին նրա դէմքի վրայ։

— Փախչենք, խան, ասաց նրան ուզեկիցը։

— Ուր, ինչու, հարցրեց խանը շփոթուած։

— Զես լսում, խան, ոռուաց յալթական ուրայի ձայնը, այդ նրանց յարձակման նշանի ձայնն է։ Ուր է նրանք կերեան քանիդուած պարսպի ճեղքերից։

Թմբուկների և ուրաների ձայնը հետզհետէ, մօտենում էին ու շասան խանի սիրտը լցնում դառն։ թեամբ։ Նա շփոթուած կանգնած էր և չէր էլ ներսում թէ ինչպէս իւր մօտով վազում էին կանայք և չնշանառ դէպի պարիսպները դիմում։

Հասան խանը վերջապէս սթափուեց, նա դառ ձաւ դէպի իւր ուզեկիցը և հարցրեց։

— Ո՞ր է վազում այս խառնիճաղանձ բազմութիւնը։

— Սրանք վազում են դէպի պարիսպները ամենատուր լինելու, փախիր, խան, շտապենք, հեռանք այս տեղից։

— Ոչ, ես անձնատուր չեմ լինի, գուաց յան կարծ խանը մի այնովիսի ահարկու ձայնով, որ սառ

սուռով լցրեց նրա մարմինը։ Ապա նա մտրակեց ձին, զօրքի գլուխն անցաւ և գոռաց։

— Քաջ եղէր, տղայը, գեաւուրները կոտորում են...

Բայց ոռուական զօրքը այն ժամանակ մտնում էր քաղաք և փողոցներում սկսում կռիւը։ Գիշերը արդէն նահանջում էր և օրը լուսանում, թնդանօժների ձայնը հետզհետէ պակասում էր և նոցա փոխարէն լսում հրացանների ճայթմունքը, որոնք քանի գնում էին աւելի ու աւելի մօտից էին լսում։

Հասան խանը մերկ սուրը ձեռքին դեռ կանգնած էր պարսպի վրայ և ախուր, անմիտ աշքերով, նայում էր առաջ։ Նա տեսնում էր թէ ինչպէս ոռուաց գնդերը արագ-արագ վազելով մինը միւսի հտերց մօտենում էին պարսպին ու նրա ճեղքուածքներից ներս մտնում բազար։

— Ի՞ն, պարսպների վրայ նայիր, տես, գլուխուր հայերը ինչպէս կանչում են ոռուներին, ասաց նրա ուզեկիցը ցոյց տալով դէպի պարիսպը։ Հասան խանը նայեց և բարկութիւնից ատամները կրծտացրեց։ Նա նկատեց բազմաթիւ հայ կանայք և տղամարդիք որոնք թաշկինակով նշան էին անում և հրաւիրում ոռուներին։

— Անիծուածները ... միթէ չեն վախենում դրանք Հասան խանից, որի ձայնից գոզում էին ու վախկոտ ների պէս անկիւններում թագնուում...

— Յառաջ, դէպի կոխու, կանչեց Հասան խանը և իջնելով պարսպից մտաւ Երիանի փողոցները։

Նրան հետեւ մի խումբ զօրք: Փաղոցները գի էր վառօդի ծխով, ամեն անկիւններից լսում էին հրացանների ձայներ: Հասան խանը տմուր սեղմնելու սրի կոթը առաջ էր քայլում, երբ առաջից մի վաշուս զօրքեր երևացին:

— Ալլահ, փրկիր միզ, կանչեց նա, ապա դառնալով իր գնդին աւելացրեց՝ ահա գեաւուրները, առաջ անցէք: Բայց նրա գունդը տեղից չժարժուեց նա շփոթուած կանգնած էր տեղին ու տեղը անշարժ...

— Վախկոտներ, անարդներ, զոռաց խանը կատաղութեամբ և ուզեց առաջ անցնիլ: Սյու ժամանակ նրա ուզեկիցներից մէկը բռնեց նրա ձեռքերից ու դոդոջիւն ձայնով ասաց.

— Խան, մենք շրջապատուած ենք, անձնատուլինենք...

— Անարդ, պատասխանեց խանը և սուրը մզեց իւր սւզեկցի կուրծքը: Արինաթաթաթախ նա վայր գլորուեց, բայց ոչ խանը, ոչ զօրքը, տեղից չը շարժուեց: Սյու ժամանակ փողոցի միւս ծայրից էլ լսուեցին ուրախի և հրացանների ձայներ: Պարսից գունդը գտնուում էր երկու կողմից էլ կրակների մէջ:

— Գթութիւնն, յանկարծ զոռաց նա և հրացանները շպրտեց զետին: Օրուս գունդը կանդ առաւ, սուխները, որոնք պիտի խրուէին Հասան խանի և պարսիկների սրաերը՝ վերև բարձրացան:

— Խան, սուրդ յանձնիր, ասաց մէկը: Հառան խանը խելացնորի նման նայում էր առաջը և շէր

հասկանում թէ ինչ է կատարում շուրջը:

— Սուրդ յանձնիր թէ չէ կը մեռնիս, ասաց պարսիկներից մէկը: Սյու ժամանակ խանը ցնցուեց վայրենի մոնշիւն արձակեց:

— Երբէք... ասաց նա ու սուրը ուզեց իւր կուրծքը խրել, բայց վրայ հասնող ուսա զինուորները բռնեցին նրան և գնրի տարան...

Սյու ժամանակ Երևանը ծխում էր ու աւերւում...

Ուերակների տակից գեռ լսում էին հառաշանքի ու լայի ձայներ...



ՀԳ.

ԱՐՏՈՒՐԻ ՔՆԵՐԻ ՊՍԱԿԸ

Վեպիս հերոսներից երկուսը՝ Ասլանն ու Յակոբը Եշմիածնի մի խուցի մէջ Էին պարկած։ Երկուսն էլ այլանդակուած էին, խեղաթիւրուած։ Նրանցից մէկը մի աշը ունէր բայց լիզու չունէր, իսկ միւսը երկու աշքով կոյր էր բայց խօսում էր։ Երկուսն էլ զտնւում էին ծանր, մահամերձ դրութեան մէջ, մի վայրկեան միայն երբ զիտակցութիւնները վրաներն էր գալիս, նրանք ուզում էին իրար վիշտն ու ցաւը յայտնել, բայց ոչ մի միջոցով չէին կարողանում հասկացնել իրար, թէ և նրանցից ամեն մէկը արդէն զիտէր թէ ով է իւր մօտ պարկածը։

Յակոբին հասկացրել էին, որ մօտը պարկածը Ասլանն է, ուստի նա պատմում էր զլսի անցածները, Աշտարակի պատերազմի մանրամասնութիւնները։ Ասլանը լսում էր նրան, խոր կոկիծը պատում սիրտը, ուզում էր ինքն էլ իր զլսի անցածները պատմել, սակայն նրա բերանից դուրս էին թռչում անկապ-անկապ բացականչութիւններ, ու այդ բանը նրան այնքան մեծ կոկիծ էր պատճռում, որ յուսահատութիւնը պատում էր նրան ու նա մահ էր կանչում։

Բայց այդ մահը հեռու չէր նրանցից, երկուսն էլ զտնւում էին ծանր դրութեան մէջ և բժշկական ոչ մի միջոց նրանց ցաւին դիւրութիւն չէր տալիս, նրանց վերբերը հետզհետէ ծանրանում էին ու մահի դուրը հասցնում... Կեանիրի օրհասի էին հասել նըրանը, երբ Մանուշակը Գէորգի ձեռքով աղատած յաջողութեամբ ոտք դրեց Նջմիածին և ներկայացաւ Ներսէս սրբազնին։ Ներուէսը նայեց նրա թալիացած զէմքին, նրա թափանցեց Մանուշակի սրտի խորքերը, տեսաւ թէ ինչպէս լուռ սէրը այնտեղ իւր աւերմաններն էր զործել, ուստի չէր վստահանում նըրան Ասլանի և Յակոբի խուցը տանել։ Նա զիտէր, նա լսել էր Ասլանից այդ աղջկայ պատմութիւնը։

— Սրբազն, ոտքիդ տակի հողը լիզեմ, թոյլ տուր ինձ տեսնել Ասլանին, թոյլ տուր ինձ խնամել նրանց, քաղցրացնել նրանց վերջին օրերը, թախանձում էր Մանուշակը և դառնազին արտաքունքներ թափելով վաթաթւում սրբազնի ոտները։

Երկար ժամանակ սրբազնը լուռ էր, ոչինչ չէր պատասխանում, միայն մտնում էր սիրող աղջկայ դրութեան մէջ և յուզում։

— Թոյլ տուր, սրբազն, թոյլ տուր թէ չէ հսկտից կմեռնեմ, ասաց Մանուշակը հեկեկալով։

— Աղջիկ, նրանք այլանդակուած են։

— Ես համաձայն եմ։

— Սիրուն աշքերը խաւարած...։

— Ոյտեղ ես լոյտ կը սփռեմ, սրբազն։

Կարմիր վարդ այտերը թառամած, կեանիքի
պատրոյդը հանդած,

— Արտասուքներիս կաթինսերով պսակ կը հիւ-
սեմ, սրբազնն, այդ հերսոների ճակատները կը դար-
գարեմ: Գիշեր ցերեկ անքուն կը մնամ ու կը վա-
ռեմ դրանց կեանիքի հանդշող պատրոյդը...

Ներսէս սրբազնը զիջեց. Նա Մանուշակին
հետն առաւ, Սոլանի ու Յակոբի խուցը մտաւ:
Մանուշակը հետեւում էր նրան, նրա սիրտը տրոփ-
տրոփում էր, աչքերը մթնում, սրունդները դողում:

— Ահա հերսոները, ասաց սրբազնը, երբ
նրանք ներս մտան խուցը: Մանուշակը կանգ առաւ:
Սպուշի նման մէկ Յակոբին նայեց, մէկ Սոլանին,
ապա ծունկ չորեց Սոլանի անկողնի առաջ, մի սուբ
ճիչ արձակեց ու փռուեց գետին:

— Ի՞նչ է, նվազ է, հարցը Յակոբը իւր այլան-
դակ դէմքը բարձրացնելով:

— Ո՛... ա՛... ա՛... հնչեցը Սոլանը և իւր
մի աշքը ուզաթափ Մանուշակի վրայ:

— Ես զիտէի, ես նախատեսում էի բայց զիջայ,
ասաց Ներսէսը ինքն իրեն, և հրամայեց Մա-
նուշակին ուշրի բերել: Մանուշակը ուշրի եկաւ,
ցնդուածի նման վրայ ընկաւ Սոլանին և համբոյնե-
րով սկսեց ծածկել նրա թալիացած դէմքը: Սոլանը
մի վայրկեան միայն ուշրի եկաւ: ծանաշեց Մանու-
շակին, ձեռքը մեկնեց նրան ու սինդ պինդ սեզմեց
նրա ձեռքը իւր ափի մէջ, ապա նա թուլացած թո-
ղեց և ուշրը կորցրեց ..

Յակոբին էլ մի առ ժամանակ ուշը վրան ժո-
ղովից, հասկացաւ թէ նվազ է կատարւում
իւր չուրջը և գառնալով Մանուշակին հարցրեց.

— Մանուշակ, նոր է Նազլուն, ախ, նա ար-
դիօք կենդանի է...

Մանուշակը սառսուեց, կարկամեց, չզիտէր ինչ
պատասխանէր:

— Ո՛խ, ինչու դու լուռ ես, միթէ անիրաւնե-
րը նրան սպանեցին, հարցրեց նա դարձեալ:

— Ո՛չ, Յակոբ էֆենդի, նա առողջ է, ստեց
Մանուշակը:

— Իսկ զաւակներս...

— Գոհութիւն Սստուծոյ, նրանք էլ առողջ են
և շուտով քեզ մօտ կը լինեն: Յակոբը գլուխը թա-
փահարեց ու լոեց:

Սյու օրից անցել էր երկու շաբաթ: Մանուշա-
կը զիշերը ցերեկ էր գարձնում, ցերեկը զիշեր ու
ոչ մի բողէ չէր հեռանում վիրաւորներից: Սրու-
սութիւները արդէն ցամաքել էին, լացը կտրուել, հե-
կեկանքները գաղաքել ու տեղի տուել լուռթիան:

Օյն լուռթիւնը երբ մարգուս հովին ժայթ-
քում է, թորերը կտրատում, սիրտը մաշւում և
զիտակցութիւնը խանգարում: Մանուշակի իննամբը
փրկութիւն չտուեց ոչ Սոլանին, ոչ Յակոբին: Նը-
րանք երկուսն էլ մի օրում և համարնա թէ մի ժա-
մում իրենց բազմաշարաշար հոգին աւանդեցին ու
վնացին այն աշխարհ, ուր զոյութիւն չընին՝ ոչ
վիշտ, ոչ տանջանիք: Մանուշակը ատրաւ այդ հա-
րցունքը կորցրեց ..

րուածը լուռ, մտայոյդ: Ոչ մի արցունք, ոչ մի հառաշանք չ'արձակեց նա, այլ լուռ հետեւեց նրանց դագապներին, մինչև որ սկ հողը ծածկեց նրանց ու իր աչքից խլեց:

Նա տուն դարձաւ, զիշերով մի քանի ժամ փակուած մնաց իր խցում միայնակ, տփուր ու տրտում, մինչև որ լուսինը հորիզոնից բարձրացաւ, երբ նա տարածեց իւր ցուրտ, զիւթող ճառագայթները երկրիս վրայ, այն ժամանակ Մանուշակը, որ պիս զիշերային վհուկ, դուրս թռաւ խցից ու ոլացաւ դէպի գերեզմանները, ուր թաղուած էր իւր սիրտն ու հողին: Հասնելով այնտեղ, նա ծունկ չ'ըց, աչքերը բարձրացրեց դէպի ցուրտ լուսինը զլուխը շարժեց ու կարծես սպառնաց նրան:

Մի վայրկեան անցաւ նրա մտքի միջով օձնայ դաշտի այն լուսնկայ գեղեցիկ զիշերը, երբ նա առաջին անգամ տեսաւ Սոլանին, ապա նա իջեցրեց հայեացը, համբուրեց սառը գերեզմանը, ու դառն արցոնները սկսեցին հեղինակալ նրա աչքերից .. Սրտասուրները թափում էին գերեզմանի վրայ և այնտեղ հիւսում կաթիների պսակը, արտասուրների այդ պսակի կաթիները լուսաւորում էին լուսնի ուղղ ճառագայթների տակ և ալամանդի նմանում...

Յանկարծ հեռուից՝ դաշտերի և բլուրների այն կողմից, լուսնցան թնդանօթների խուլ որոտմունքը Մանուշակը ցնցուեց: Կայծակնահարի նման վեր թռաւ գերեզմանի վրայից ու ցնորուածին նման նայեց հեռաւորութեան մէջ:

Թնդանօթների որոտմունքը շարունակում էր աւելի սաստիկ, աւելի աճեղ.. Սյդ Երևանի ոմբակութեան ձայներն էին համնում Մանուշակի ականչին: Յանկարծ Մանուշակը իւր սրտի ամենախոր տեղում, այնտեղ ուր ամբարուած են զգացմունքների հանգույցները, այնտեղ ուր պահուած են զգայարանների ծայրերը, մի սուր, անտանելի խոր կսկիծ զգաց, սրից յետոյ զուրս թռաւ նրա բերանից խոր թառաչ, որը ոչ հոգոց էր, ոչ հեծկոտանք, այլ հաղուոյ ու մարմնի զառն վշտի ու տանջանքի արտայայտութիւն..: Նրան հետեւեց երկրորդ թառանչը, որը սակայն զուրս չեկաւ նրա բերանից, այլ չնշափալի մէջ կանդ տռաւ, հուպտուեց նրա որկորին ու սկսեց նրան լսնկուել... Ճնշել սիրտը, զադարեցնել աւալ նրա չնշառութիւնը և սառեցնել արիներ երակների մէջ...

Մանուշակը ցնցուեց, նրա աչքերը կարծես զուրս թռան ալիսակասիճներից, մազերը փշարազուեցան ու դէմքը այլակերպուեց... Բայց վիշտն ու տանջանքը սրա սիրտը ըլքրում էին, մորմորում ու իրենց անողորմ ճանկերը գարձնում վէպի թըշուառ աղջկայ ուզեղը, այնտեղ, ուր թոյլ կերպով նստած էր նրա վիտակցութիւնը, ու երբ նրանը հասան այնտեղ, այն ժամանակ Մանուշակը իւր վլսում զգաց մի այնպիսի տաժանելի ցաւ, մի այնպիսի սոսկալի հարուած, որից նրա տմբողչ մարմինը ցնցուեց ու նա ահաբեկուած կանգնած տեղից, յանկարծ մի թռիչը արտաւ, զերեզմանից մի քանի

Քայլ հեռու փախաւ, կռացաւ, մի քանի խոտ պոկեց,
շողրտեց զլափի զերեղմանը ու խոր քրքիջ արձակելով,
փաղեց լայն գաշտի միջով...

Խա... Խա... Խա... զեռ լուռում էր նրա
քրքի ձայնը ու սառսուռով լցնում մարդու մար-
մինը...

Խեղճ... նա արդին խելագարուել էր...

Այս սիօ-սիօ բաշի Տ-առջիկ
այս ուշակոչ զանշէ ուշ սիշ շուշ
հոյժ շոշուն

Հան սիշ առուց
Եթ. արշակովի.

ՀԵԿ ՍԻ ՍԻ ԱՐԾԻ Ի Բ

~~5~~ Երեանը ընկաւ *): Գերի ընկաւ շասան խա-
նը իւր վեց թէ եօթը խաների հետ, չորս հաշար
սարվագով, չորս զբոշակով և մօտ հարիւր մեծ ու
փոքր թնդանօթներով։ Ընկաւ վերջապէս Երեանի
խանութեան բռնակալ տիրապետութիւնը, բայց ռու-
սական յաղթական դօրքերը դրանով էլ չը բաւակա-
նացան, նրանիք առաջ խաղացին ու անարդել մտան
Պարոկաստանի սիրտը՝ նուածեցին Թաւրիզը։

Պարսիկները նեղն ընկան, հաշտութիւն խնդրե-
ցին, բայց այդ հաշտութիւնը չը կայացաւ։ Խուսաց

զորքերը նորից առաջ բայլեցին դեպի Թէհրան և
մինը միւսի յետեկոց առան Խոյն, Սալմաստը, Մա-
րաղան, Ուրմեան և այլ քաղաքներ։

Հարուածը ծանր էր պարուիների համար, նրանք
խոստովանեցին իրենց անզօրութիւնը և գլուխ խոնար-
հեցնելով Հիւսխար Արծուին, հաշտութիւն խնդրեցին։

1828 թուականին փետրուարի 9-ին այդ հաշ-
տութիւնը կայացաւ Թիւրբմենչայ անուանեալ փոր-
ուիկ զիւզում, որի զօրութեամբ Հայաստանի սիրալը,
Արարատեան աշխարհը լիր նուիրական Աթոռով
ընդ միշտ մնաց քրիստոնեայ պիտութեան հզօր
պաշտպանութեան ներբոյ։ Եւ վեհապահ Մասիսի
ու Արագածի գլխին ոկտից սաւառնել Հիւսիսի
երկաւ 60.3 Աթօթիք...

Թիւրբմենչայի դաշնազրից յետոյ տարիներ
անցան։ Այնտեղ ուր առաջ տիրում էր արհատիրը,
տիրեց խաղաղութիւն, ուր տիրում էր խաւարը,
լրիս սփոեցաւ։ Այնտեղից՝ որտեղից լսում էին լաց
ու արցունիները, լսուեցին երգի ուրախ հնչիւնները
ու հարսանեաց սիրուն տաղերը,.. Երկիրն ու մար-
դով կենդանացան։ Խոսքնացած դաշտերը ծաղկե-
ցին ու կանաչեցին, հասունացած արտերը ծովի
նման ծփացին ու օրօրուելով քնքշաբար սոստփիւն
արձակեցին, վեր բարձրացրին գլուխները, ողջոյն
տուին Հիւսիս Աթօթիքին, որը արթուն հկում էր
նոցա, առանց թոյլ տալու կոխան տալ բարբարս-
ների ու աւաղակների ոտքերի տակ...

Կեաները փոխուել էր, տանջանքի աշխարհը

*.) Հոկտեմբերի 1-ին 1827 թ.

Պրախտի փոխարկուել։ Խաւարը անյայտացել էր լոյսը սփռուել։ Գիտովթիւններն ու արուեստը տարածուել այդ երկրի մէջ, քաղաքացին ու զիւղացին գոհունակութեամբ վեր բարձրացնելով իրանց աշքերը, կեանիք և արեշատութիւն լին մաղթում իրենց զիլինին սաւառնող ՀԻՒՍԻՍԻ ԱՐԺԻՒԻՆ. . .

Եւ ԱՐԾԻՒԻ կոհունակով թնամբ ժպտում էր
ցած նայելով, ուր իւր սոքերի տակ, ձեռք ձեռք
տուած, ինչպէս եղբայր, ապրում են զանազան աղ-
գութիւններ, հայն ու վրացին, թուրքին ու պարսի-
կը և այլ զանազան ազգիր, առանց աշը ունենալու
մէկի կամ միւսի կեանքին ու դոյրին...

PLATE 2.



ՏԱԿԱՆ

	Արդի
Ա. Հառաշանքի եւ տանջանքի աշխարհը	9.
Բ. Փախստականներ	13.
Գ. Ասլան	18.
Դ. Մրտի մէջ կայծեր	22.
Ե. Ներսէս սրբազնը	29.
Զ. Վիշտ	37.
Է. Վշտի արձագանքը	42.
Ը. Կենդանի ընծան	47.
Թ. Հայ ընտանիք	56.
Ժ. Գտաւ	59.
ԺԱ. Խաչեցէք նրան	65.
ԺԲ. Կրակի միջից	71.
ԺԳ. Կոփուը	77.
ԺԴ. Փախուստ	84.
ԺԵ. Խաչ եւ սուր	88.
ԺԶ. Զիմնի մէջ	92.
ԺՒ. Գնչունու գուշակութիւնը	101.
ԺԸ. Բանակում	106.
ԺԹ. Պարսիկների բանակում	115.
ՀԺ. Անուրջք	123.
ԻԱ. Կեանքից էլ թանի	129.
ԻԲ. Ռուսներն էջմիածնում	138.
ԻԶ. Էջմիածնի պաշարումը	142.

հԴ.	Աշտարակի պատերազմը	.	.	148.
հԵ.	Ռուբածիզ Յակոբը	.	.	154.
հԶ.	Նահատակներ	.	.	159.
հԷ.	Արիւնու ղաշուը	.	.	163.
հԸ.	Պատմական անցքերից	.	.	169.
հԹ.	Տիֆը	.	.	171.
Լ.	Գաղանութիւնն	.	.	176.
ԼԱ.	Թնդակօթի գերանում	.	.	187.
ԼԲ.	Երեւանի առումը	.	.	193.
ԼԳ.	Արտասուբների պասկը	.	.	200.
ԼԴ.	Հիսկիսի Արծիւը	.	.	206.

Վեպը Պայծառ է
28/ի 57 թ. 2

Ձեզ առքայ Կովաչյանը
Առաջ ու հայ Տաղամոցի
այլայ ու, ոքայ ու հայ
Տաղամոցի Հայ Տաղամոցի

25/ի 52 Առաջին

Օ. Բարձրականի

9/11-0-7

ՀՀ Ազգային գրադարան



NL0321526